

# ԷՋՄԻԱԾԻՆ

1981

Դ

Ажс146

ԼԸ
ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

նոյեմբեր

1981

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋԵԱՆԻՆ
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈ՜ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜Ն ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Բաքու

Աստուծոյ ողորմութեամբ մեր Առաքելական Մայր Եկեղեցին նաև մեր օրերին նուիրուած է հայ հաւատացեալ ժողովրդի հոգևոր բարոյական դաստիարակութեան գործին, միշտ հաւատարիմ Սուրբ Աւետարանին ու մեր լոյս աւանդներին:

Մեր այս գրով ուրախ ենք Ձեզ նշանակելու առաջնորդական տեղապահ Ադրբեջանի հայոց թեմի, կանոնական բոլոր համապատասխան իրաւասութիւններով:

Վստահ ենք թէ Դուք, տիրախնամ թեմիդ հոգևոր սպասաւորների և եկեղեցիների վարչական մարմինների հետ ձեռք-ձեռքի տուած, պիտի ղեկավարէք թեմի եկեղեցական գործերը, ի մխիթարութիւն հայ հաւատացեալների:

Ձեզ պատուէր ենք տալիս նաև բանիւ և գործով ջանք չխնայել աւելի ու աւելի ջերմացնելու համար եղբայրական աւանդական սիրալիր յարաբերութիւնները ադրբեջանցի և հայ ժողովուրդների միջև:

Ձեզ, սիրելի Հայր Սուրբ, մաղթում ենք մշտատև եռանդ ու Սուրբ Հոգու ներշնչանքներ, որպէսզի լիակատար արդիւնաւէտութեամբ ղեկավարէք Ձեր խնամքին հանձնուած հայոց եկեղեցիները:

Ձեզ և Ձեր գործակիցներին և ձեր ժողովրդին Մեր հայրական սէրը, Մեր հայրապետական գնահատանքը և Մեր օրհնութիւնը։

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք՝ մխիթարեցարուք՝ միաբան լերուք՝ խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11—12), ամէն։

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 նոյեմբերի
1981 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԼ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի։
ՀՄՐ. 1082



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի, 18 հոկտեմբերի 1981 թ.)

**«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:**

**«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»:**

**Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,**

**Այս կարճ մաղթանքի կամ աղոթքի մեջ ամփոփվում են կամ արտահայտվում երկու գաղափարներ: Նախ այն, որ մեր Հայաստանյայց Եկեղեցին, մեր ազգի Մայր Եկեղեցին միշտ անշարժ, անսասան և ծաղկյալ պահպանվի և երկրորդ՝ որ մեր հավատացյալ ժողովուրդը, համայն հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ապրի խաղաղության մեջ:**

**Մեր սուրբ Եկեղեցին հայ ազգի ոգու բնակարանն է, այն աստվածային պարգևը մեզ տրված, որով ճանապարհ է բացվում մեր ժողովրդի զավակների հոգիների փրկության և հավիտենական կյանքի հույսի: Մեր ազգը, իր ողջ պատմությամբ, մնացել է անբաժան իր Մայր Եկեղեցուց և՛ ուրախության ու բարգավաճման, ծաղկման շրջաններին և՛ առավելապես դժբախտությանց ժամանակ: Եվ ավաղ, մեր պատմության ընթացքում, ինչպես գիտենք, ավելի հաճախ են եղել դժբախտության օրերը:**

**Ահա այսպես ապրեցին Եկեղեցի և ազգ հայկական, միասին, միշտ մեկ սիրտ, մեկ հոգի, միշտ ունենալով նույն ճակատագիրը և նույն փրկության հույսը:**

**Այսօր էլ կացությունը նույնն է: Եվ մեր բոլորիս մաղթանքն է և բաղձանքը, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և՛ Հայաստանի սահմաններից ներս, և՛ արտասահմանում, պահե իր գոյությունը անշարժ և անսասան, ու ավելի զորանա, ավելի ճառագայթի, առավել չափով ծառայե իր բուն հոգևոր կոչումին:**

Բնականաբար մեր Եկեղեցու հոգևոր և աշխարհական ղեկավարները որոնք համախմբված են մեր եկեղեցիների շուրջ, բոլորն էլ միշտ մտածում են այս մասին և գործում են իրենց բոլորանվեր ուժերով: Երբեմն հաջողություններ են արձանագրում, երբեմն՝ ոչ, բայց ցանկությունը և աշխատանքը մնում են միշտ տևական, ի խնդիր հոգևոր կյանքի ծաղկման մեր ժողովրդի կյանքում:

Այս նպատակի իրագործման համար վերջերս Մենք և Մեր հոգևոր եղբայրները մտածումը ունեցանք կազմել մի կանոնադրություն, մի տեսակ սահմանադրություն, մեր ամբողջ Եկեղեցու համար. մի կանոնադրություն, որ համապատասխանի այսօրվա մեր ժողովրդի և Եկեղեցու կյանքի պայմաններին և որ լինի գործադրելի: Բնականաբար, որևէ հաստատություն կամ կազմակերպություն, երբ լավ մշակված մի կանոնադրություն ունի, և կարգ ու կանոն ստեղծած է իր գործունեության ճանապարհին, բնականաբար այդ կազմակերպության կամ միության կյանքը կընթանա ավելի բարեհաջող և ավելի արդյունավետ:

Մեր Եկեղեցին, անշուշտ, իր հին կանոնները ունի՝ պատմության ընթացքին բանաձևված և այսօր էլ ի զորու, սակայն անհրաժեշտ ենք նկատում մշակումը նաև մի վարչա-կազմակերպչական կանոնադրության, մեր օրերի պայմաններին համապատասխան:

Ահավասիկ այդ նպատակով, Մենք խորհեցանք մի հատուկ հանձնաժողով կազմել, բաղկացած հինգ հոգևորականներից, ձեռնհաս և բանիմաց հոգևորականներ, որոնք հավաքվեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և սկսեն աշխատանքը՝ պատրաստելու նման մի կանոնադրության նախագիծ: Մենք հույս ունենք, որ այդ աշխատանքը հաջողությամբ կպսակվի և, որոշ փուլերից անցնելուց հետո, մեր Եկեղեցին կկարողանա օժտվել մի ներքին կանոնադրությամբ: Մենք լավատես ենք և մաղթում ենք լիակատար հաջողություն Մեր հոգևոր եղբայրներին, անդամները այս հանձնաժողովի:

Ահավասիկ մի միջոցառում ես, որպեսզի առավել անշարժ, անսասան և բարեկարգ վիճակի մեջ գոյատևե մեր Մայր Եկեղեցին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մեր մաղթանքի մեջ, որով սկսանք Մեր խոսքը, կամ նաև իղձը, որ մեր ժողովուրդը ապրի խաղաղության մեջ: Մենք չենք հավատում, որ որևէ ժողովուրդ պատերազմի կողմնակից լինի: Ընդհակառակը, բոլոր ազգերը մեր երկրագնդի, որոնք անցյալում տառապել են պատերազմների ընթացքում, անշուշտ որ, երբեք պիտի չկամենան տեսնել պատերազմի ավերածություններ, նահատակություններ և բազում ողբերգություններ:

Մեր ժողովուրդը հատկապես միշտ աղոթել է աշխարհի խաղաղության համար և միշտ այն երազանքը, տեսիլքն է փայփայել, որ ազգեր և պետություններ համերաշխ ապրեն, որ ազգամիջյան հարցերը լուծվեն փոխադարձ զիջումներով, փոխադարձ հասկացողությամբ, համենայնդեպս ոչ զինու զորությամբ, այլ խաղաղության ճանապարհով:

Մեր ազգը, դուք լավ գիտեք, բազում անգամներ անցյալում, ոչ միայն տառապել է, այլ նաև նահատակվել զանգվածաբար, ինչպես այդ պատահեց **1915**-ի սև թվականին, Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության այդ օրերին, երբ մեր ազգի համարյա կեսը, երկու և ավելի միլիոն հայեր նահատակվեցին և մեր հայրենիքի մեծ մասը ավերվեց և այսօր այդ ժողովրդի վերապրող մեկ մասը միայն ապրում է աշխարհի տարբեր

ճանապարհների վրա՝ հեռու իր մայր հողից, զրկված իր արդար իրավունքից։

Այս ողբերգությունը մենք երբեք չենք կարող մոռանալ։ Եվ հետևաբար առավել ևս ցանկանում ենք, որ նման ողբերգություններ այլևս չտեսնե մեր ժողովուրդը։

Ահա թե ինչու Մենք աղոթում ենք և պիտի աղոթենք ու գործենք անդադար աշխարհի խաղաղության համար, մեր Եկեղեցու և ազգի խաղաղ գոյատևման համար։

Աստված մի արասցե, որ մեր մայր հայրենիքի սահմաններին պատերազմի կրակ մոտենա։ Մենք կարող ենք ամբողջովին բնաջնջվել, անկախ պատերազմի վերջնական ելքից։ Եվ ով հայ է, ով որ ճշմարիտ հայու սիրտ ունի իր կուրծքին տակ, Հայաստանում թե արտասահմանում, չի կարող այլ կերպ զգալ և այլ բաղձանք ունենալ։

Թո՛ղ խաղաղություն լինի։ Եվ խաղաղությունը թող լինի արդարությամբ և արդարությունը խաղաղությամբ, այնպես, ինչպես աքանչելի կերպով սաղմոսերգուն փառաբանել է այս մեծ իդեալը մեզանից հազարավոր տարիներ առաջ, երազելով, թե կգա մի օր, երբ արդարությունը և խաղաղությունը միասին կգրկախառնվեն։

Ահա այս տեսիլքի զավակներն ենք մենք, հայերս մանավանդ։

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»։ Ամեն։



## ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 25—28 օրերին հյուրաբար Մայր Աթոռում էր գըտնըվում Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Ամենապատիվ Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքը:

Այդ առթիվ Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին Լիբանանի միտրոպոլիտ Գևորգի Խոդրը, Լաոդիկեի միտրոպոլիտ Իոան Մանսուրը, հայր Իսամ Բիտարը, հայր Իլիա Ցակուրը, հայր Իոսիփ Ջնճլաուրին և հայր Նիփոն Սայկալին:

Հյուրերին Լենինգրադից, հանուն Ռուսաց Սրբազան Պատրիարքի, ուղեկցում էին նաև Տ. Ալկաֆանգել արքեպիսկոպոսը և Տ. Վալենտին Միշչուկ եպիսկոպոսը:

Նոյեմբերի 25-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 17-ին, հյուրերը Լենինգրադից ժամանեցին Երևան:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Սրբազան Պատրիարքին և իր շքախմբին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքական փոխանորդ Տ. Շահե արքեպ. Աճեմյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալըստյանը:

Մայր Աթոռի հյուրերին օդանավակայանում դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հարությունյանը:

Օդանավակայանից Սրբազան Պատրիարքը առաջնորդվեց Մայր Աթոռ և «Հրաշափառ»-ով մուտք գործեց Մայր տաճար:

Տաճարում, համառոտ կարճ աղոթքից հետո, Հայոց Հայրապետը ողջույնի հետևյալ խոսքը ուղղեց Տ. Իգնատիոս Պատրիարքին.

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ
### (25 նոյեմբերի 1981 թ.)

Գոհություն Աստուծո Ամենակալին, որ պարգևեց մեզ այս օրը, այս արևոտ օրը: Մեր պայծառ երկինքը դիմավորեց ձեզ առատ լույսով: Երկնքի նման են նաև մեր սրտերը այս պահին:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր մեր ի Քրիստոս: Բարի եկաք մեր տունը, Ս. Գրիգոր Լուսավորչի տունը, Ս. Էջմիածին:



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ

Բարի գալուստ նաև Ձեզ ընկերակցող բարձրաստիճան հոգևորականներին։

Եթե չենք սխալվում, պատմության մեջ առաջին անգամն է, որ Անտիոքի Մեծ Աթոռի Սրբազան Պատրիարքը ժամանում է Ս. Էջմիածին և մուտք գործում պատմական այս տաճարից ներս։

Մենք բոլորս երջանիկ ենք։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ եղբայրական զգացումներով տոգորված է մնացել դարեր շարունակ, հատկապես Արևելքի քույր Եկեղեցիների ընտանիքի հանդեպ։

Մենք անբաժան ենք նկատում մեզ Արևելքի Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքից։ Եվ այսօր Դուք՝ Անտիոքի Սուրբ Աթոռի Գահակալդ, խորհրդանշում եք մեր եղբայրությունը ի Քրիստոս։

Մենք քաջ գիտենք և գնահատում ենք այն մեծ դերը, որ քրիստոնեության ծագման, պատմության և տարածման գործի մեջ կատարեց Անտիոքի Ս. Աթոռը։ Դարեր են անցել այդ օրերից անշուշտ, բայց մենք մոռացության չենք կարող տալ անցյալը, որովհետև այդ հիշատակները մեզ առաջնորդում են նաև այսօր։ Ձեր այցելությունը նշանակալից ենք գտնում մենք մեր օրերին, էկումենիկ այս շրջանին։ Եվ վստահ ենք, որ նոր ճանապարհ պիտի բացվի Ձեր այս այցելությունից հետո՝ մի բանով ավելի ջերմացնելու մեր Եկեղեցիների հարաբերությունները և ավելի ամրացնելու մեր քրիստոնեական եղբայրությունը, միասին աղոթելու մեր լույս հավատքի ավելի և ավելի ճառագայթումի համար, մեր ժողովուրդների կյանքից ներս, և միասին աղոթելու աշխարհի խաղաղության համար։

Գուցե ավելի, քան երբեք, մեր աղոթքները առ Աստված, պետք է բարձրանան ի խնդիր մեր արդի աշխարհի խաղաղ գոյավիճակի վերականգնման համար։ Եվ այս պահին չենք կարող մոռանալ այն տագնապալի վիճակը, որի մեջ գտնվում է Մերձավոր Արևելքը, և այն դժվարությունները, որոնց մեջ ապրում է արաբ ժողովուրդը։ Մենք եղբայրորեն ցավակից ենք ձեր տառապանքներին, ձեր դժվարություններին։ Եվ մաղթում ենք, որ շուտով խաղաղության սպիտակ աղավնին իջնի Լիբանանի և ամբողջ Մերձավոր Արևելքի վրա։

Այս մաղթանքով ջերմագին, մի անգամ ևս Ձեզ մաղթում ենք բարի գալուստ։

Թող Աստված օրհնի Մեր հանդիպումը, մեր ողջագուրումը։ Ամեն։

Այնուհետև ողջույնի և շնորհակալության պատասխան խոսքով հանդես եկավ Անտիոքի Սրբազան Պատրիարքը.

## Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
### (1981 թ. հոկտեմբերի 25)

Մենք երջանիկ ենք և իսկապես ուրախ, որ այս պահին գտնվում ենք մի եկեղեցու մեջ, որ ամենահին սրբավայրերից մեկն է ամբողջ քրիստոնեության պատմության մեջ։ Եվ մենք, որ կանգնած ենք այս րոպեին այստեղ, զգում ենք, թե դարեր և դարեր կապում են մեզ միմյանց աղոթքով և սրբերի բարեխոսությամբ։ Մենք ա՛յս եկեղեցին, Հայոց Եկեղեցին, ի սրտե շատ ենք սիրում։ Եվ երբ ուղղափառ բառը ավելացվի նրա անվանը, այն մեզ սրտի մեծ գոհունակություն կպատճառի։

Հայոց երկիրը, որը միշտ հարուստ է եղել քրիստոնեական հավատքով, այսօ՛ր էլ այդպես է, վստահ ենք այդ մասին։ Նույնպիսին էր ժամանակին նաև Անտիոքը, բայց այժմ այն տեղափոխվել և երկարել է դեպի Դամասկոս և Արաբական երկրներ։ Եվ կարելի բան չէր, որ Անտիոքի Եկեղեցու պատվիրակությունը գար այս երկրամասի վրա՝ առանց այցելելու և գտնվելու նաև ձեր մեջ։

Մեր կապը ձեզ հետ խորն է։ Ե՛վ մեր Աթոռից ներս, և՛ մեր երկրի մեջ բավական է, որ մի հայ ուղղափառ ներկայանա, որպեսզի նրան նկատենք իբրև մեր ընտանիքի անդամը, մեր զավակը։ Մենք նրանց բոլորի առաջ բացում ենք մեր եկեղեցիների դռները և մեր սրտերը։ Ձեզանից որևէ մեկին մենք օտար չենք նկատում բնավ երբեք և դրա համար վստահ ենք, որ այն ժամանակը, որ պետք է անցկացնենք ձեզ հետ, մեզ կյանք տվող պահեր պիտի լինեն, մանավանդ որ այս եկեղեցու եկեղեցականներից ոմանց հետ անձնական բարեկամության զգացումներ էլ ունենք։ Ե՛վ մեր պատվիրակության, և՛ անձամբ Մեր անունից շնորհակալություն ենք հայտնում ձեզ և աղոթում, որ միասին անցկացնելիք մեր ժամանակը լինի պտղաբեր և օգտակար։

Ձեզ հետ միասին աղոթում ենք և խնդրում Աստուծո օրհնությունը այս ժողովրդի վրա, որի նկատմամբ միշտ հիացում ենք ունեցել։

Շնորհակալություն ենք հայտնում բոլորով սրտիվ։

Եկեղեցական արարողությունից հետո հյուրերը առաջնորդվում են վանքի նորակառույց վանատուն՝ իրենց կեցության օրերին այնտեղ հյուրընկալվելու համար:

Հոկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Պատրիարքի միջև տեղի է ունենում հանդիպում և ջերմ զրույց՝ էկումենիկ ոգով:

Այնուհետև, մայրավանքի շրջափակին ծանոթանալուց հետո, հյուրերը այցելում են Վաղարշապատի Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերը, որտեղ դիմավորվում են վանահայրերի կողմից:

Կոզսերի տապաններ մոտ Սրբազան Պատրիարքը իր աղոթքը կատարելուց և վանքերի պատմությանը ծանոթանալուց հետո, առաջնորդվում է Ս. Գեղարդ վանք:

Ժամը 13-ին Ս. Գեղարդ վանքում Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքը «Հրաշափառ»-ով մուտք է գործում տաճար, որտեղ կատարում է իր ուխտն ու աղոթքը: Այնուհետև վանատան ընդունելության սրահում պտղասեղանով հյուրասիրվում է վանահոր և միաբանության կողմից:

Սրբազան հյուրը Երևան վերադարձի ճանապարհին այցելում է Գառնիի հեթանոսական տաճար:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Տ. Իգնատիոս Պատրիարքի:

Ճաշկերույթին, հյուրերից բացի, ներկա էին նաև Տ. Տիրան, Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Շահե, Տ. Հուսիկ արքեպիսկոպոսները, Տ. Արսեն, Տ. Գևորգ եպիսկոպոսները, Տ. Մեսրոպ, Տ. Ոսկան և Տ. Ավագ ծայրագույն վարդապետները, Տ. Մուշեղ վարդապետը, Տ. Հայկազուն, Տ. Զատիկ աբեղաները, Մայր Աթոռի դիվանապետ Հովհ. Թոփուզյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար Պարգև Շահբազյանը:

Ճաշկերույթի ընթացքում նախ ողջույնի խոսք է ասում Տ. Իգնատիոս Պատրիարքը: Նորին Սրբազնությունը իր խոսքի ավարտին, որպես եղբայրական սիրո և հարգանքի արտահայտություն, Հայոց Հայրապետի կուրծքը զարդարում է Անտիոքի Պատրիարքության «Ս. Պողոս—Ս. Պետրոս» շքանշանով:

Ապա շնորհակալական խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(26 հոկտեմբերի 1981 թ.)

Ձերդ Սրբություն,

Շնորհակալություն այս պատվի համար, որ մեզ համար հանդիսացավ մի անակնկալ եղավ: Ձեր շքանշանը Մեր սրտի վրա, Մենք միշտ պիտի զգանք այն ջերմությունը, որ գալիս է այն պարգևողից՝ Ձերդ Սրբությունից:

Անհավասիկ մեկ օր տակավին չի լրացել, և Մենք զգում ենք Մեզ իբրև իրապես հարազատ եղբայրներ: Եվ աճում է մեր միջև փոխադարձ վստահությունը, փոխադարձ համակրանքը և փոխադարձ սերը:

Այս պահին հիշում ենք վաղուցվա Մեր ընթերցումներից, որ երկրորդ դարի հեթանոս հռոմեացի մի գրող, որ Հռոմից պաշտոնով գնացել էր դեպի արևելք ու այնտեղ հանդիպել էր բազմաթիվ անգամներ քրիստոնյաների: Եվ երբ նամակ է գրում Հռոմ՝ իր մի բարեկամին, այդ հռոմեացի գրողը՝ Չեչիլիոս անունով, տեղեկություններ է տալիս քրիստոնյաների մասին: Տարօրինակ մարդիկ են, ասում է նա՝ տգետ, կեղտոտ, կոպիտ, անաստված և այլն: Բայց ամենաանհավատալին և ամենատարօրինակը այն է, ավելացնում է նա, որ քրիստոնյա մարդիկ առանց միմյանց ճանաչելու սիրում են միմյանց, պարագան նկատելով ծիծաղելի տարօրինակություն:

Հեթանոս գրողը մի մեծ ճշմարտություն է ասել անշուշտ և գերագույն գնահատանք է տվել քրիստոնյաներին: Այդ հատկանիշով մանավանդ մենք այսօր էլ հպարտ ենք իբրև քրիստոնյաներ: Եվ մեր պարագան էլ այդ է: Հազիվ մի քանի ժամ է միմյանց ճանաչեցինք, և արդեն կարծես հին ծանոթներ, բարեկամներ և եղբայրներ լինեինք: Այս պահին սաղմոսերգուի զգացումն ենք ապրում, թե «Ինչքան վայելուչ է և գեղեցիկ, որ եղբայրները միասին լինեն»:

Մենք մաղթում ենք, որ Աստված մեր ճանապարհները միշտ բաց պահի և միշտ միմյանց հանդիպենք:

Մենք իրապես միևնույն եղբայրության անդամներն ենք: Մենք մեկ ենք մեր արարիչ Աստուծով, մեկ ենք մեր փրկիչ Հիսուս Քրիստոսով և մեկ ենք մեր մխիթարիչ Ս. Հոգով: Արդեն ամեն ինչ ասացինք այս խոսքերով: Մնացածը ինքնին կհետևի և կմնա մեր մարդկային իմաստությանը, որ այդ մեծ գաղափարները կյանքի կոչենք մեր կյանքում:

Արդ, մաղթում ենք, որ հաջորդ ժամերն էլ, որ պիտի միասին անցկացնենք, հետոզհետե ավելի ամրապնդեն, զորացնեն մեր եղբայրությունը, մեր սերը ի Քրիստոս:

Երեկոյան ժամը 20.30-ին, Հայոց Հայրապետի և Սրբազան Պատրիարքի ներկայությամբ, վանքի միաբանական սեղանատանը տեղի է ունենում ընթրիք, որին ներկա էին Մայր Աթոռի բոլոր բարձրաստիճան հոգևորական հյուրերը և ողջ միաբանությունը:

Ընթրիքից հետո, ժամը 21.30-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում Մյուռոնօրհնության ֆիլմի ցուցադրում:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը և Իգնատիոս Սրբազան Պատրիարքը քաղաքավարական այցելություն են տալիս Էջմիածնի քաղաքապետ պրն. Գևորգ Սարգըսյանին:

Հայոց Հայրապետի, Սրբազան Պատրիարքի և պարոն քաղաքապետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում:

Ընդունելությանը ներկա էին նաև քաղաքապետի տեղակալ Բնաւեր Աբրահամյանը և քաղաքապետարանի գործերի կառավարիչ Մարիամ Ստեփանյանը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին և Իգնատիոս Պատրիարքին ուղեկցում էին Տ. Սիոն, Տ. Ծահե արքեպիսկոպոսները, Գևորգի Խոռր և Իռան Մանուր միտրոպոլիտները, Ականֆանգել արքեպիսկոպոսը, Վալենտին Միշչուկ եպիսկոպոսը, Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը և Ջատիկ աբղ. Ավետիքյանը:

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը և Իգնատիոս Պատրիարքը այցելում են Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, որտեղ «Հրաշափառ»-ով տաճար մտնելուց հետո, Տ. Իգնատիոս Պատրիարքի և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանի միջև փոխանակվում են ողջույնի և բարիգալստյան ճառեր:

Ժամը 11.30-ին Հայոց Հայրապետը և Իգնատիոս Պատրիարքը, ուղեկցությամբ իրենց շքախմբի անդամների, այցելում են Երևանի Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան և «Հոգուց» արտասանում 1915 թվականի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Այնուհետև ժամը 13-ին Սրբազան Պատրիարքը, ուղեկցությամբ իր շքախմբի և բարձրաստիճան հայ հոգևորականների, այցելում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:

Ժամը 14-ին Երևանի «Անի» հյուրանոցում տրվում է ողջերթի ճաշկերույթ՝ ի պատիվ Տ. Իգնատիոս Սրբազան պատրիարքի և իր շքախմբի անդամների:

Ճաշկերույթին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռ. Պարսամյանը և տեղակալ տիար Ա. Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում նախ ողջույնի խոսք է ասում Հայոց Հայրապետը:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ԱՆԻ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

(27 հոկտեմբերի 1981 թ.)

Նման առիթներով Մենք միշտ ցանկանում ենք Մեր հարգելի հյուրերի հետ մի անգամ էլ լինել Երևանում, մեր երկրի մայրաքաղաքում: Երևանը Մեզ համար, բոլոր հայերի համար ոչ միայն սովորական իմաստով մեր հայրենիքի մայրաքաղաքն է, այլև խորհրդանշում է մեր երկրի և մեր ժողովրդի վերածնունդը: Պատահական չէ, որ Մենք մեր հյուրերի հետ այսօր քիչ առաջ, եղանք Եղեռնի հուշարձանի մոտ, աղոթելու մեր նահատակների հոգիների համար:

Եղեռնի հուշարձանը հիշեցնում է մեզ մեր ժողովրդի նահատակությունը 1915 թվականին: Հայտնի գրագետ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» վեպում գործող անձանցից մեկը, տեսնելով, որ մի ամբողջ ժողովուրդ բնաջնջվում է, բացականչում է. «Որ այլևս այս արևի տակ, այս աշխարհում իբրև հայ հնարավոր չէ ապրել»: Ահա ինչ է հիշեցնում Մեզ Եղեռնի հուշարձանը:

Բայց Եղեռնի հուշարձանի բարձունքից իջնելով, տեսնում ենք այսօրվա Երևանը՝ մայրաքաղաքը վերածնված Հայաստանի, այն Երևանը, որ 1918 թվականին մի գյուղաքաղաքի տեսք ուներ և հազիվ 30 հազար հայ բնակչություն: Եվ ահա, վաթսուն սովետական տարիների շրջանում, Երևանը դարձավ մեկ միլիոնանոց արդիական քաղաք:

Մեր Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Մեր Եկեղեցու ճակատագիրը միշտ անբաժան է եղել մեր ազգի ճակատագրից: Ահա թե ինչու նաև մենք, իբրև հոգևորականներ անհուններեն միխիթարված ենք մեր հայրենիքի վերածնընդով, մեր ժողովրդի կյանքի նոր ծաղկումով: Եվ մեր միխիթարու-

թյունը կրկնապատկվում է՝ հաստատելով, թե մեր պետական իշխանությունները, այս վերջին տասնամյակներին հատկապես, այնքան հոգատարությամբ և բարյացակամությամբ են վերաբերվում մեր Եկեղեցու և մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ:

Մեր գերագույն աղոթքն է և մաղթանքը, որ աշխարհի վրա խաղաղություն տիրապետի, որպեսզի մենք էլ այստեղ խաղաղ ապրենք և շարունակենք մեր առաքելությունը:

Մենք, իբրև հոգևորականներ, քաղաքականությամբ չենք զբաղվում, բայց մեկ քաղաքականություն նկատում ենք մեր գերագույն պարտականությունը: Այդ խաղաղության քաղաքականությունն է, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գերագույն պատվիրանն է նաև:

Մաղթում ենք, որ մեր կյանքը արևոտ, խաղաղ ճանապարհներով առաջ ընթանա, և իբրև եղբայրներ, մեր քույր Եկեղեցու ներկայացուցիչների հետ հաճախ հանդիպենք, ողջագուրվենք և միասին աղոթենք ու միասին գործենք Աստուծո փառքի և մեր ժողովուրդների բարօրության ու երջանկության համար:

Առաջին անգամն է պատմության մեջ, որ Անտիոքի Ամենապատիվ Պատրիարքը այցելում է Ս. Էջմիածին և Հայաստան աշխարհ: Մայր Աթոռիս և Անտիոքի Սուրբ Աթոռի միջև գործակցության նոր ճանապարհ է բացվում այսօրվանից: Առաջին հիմնաքարը, Ձերդ Սրբություն, Դուք դրեցիք, որի համար շնորհակալ ենք:

Կրկին անգամ Ձեզ ասում ենք՝ բարի եկար: Պիտի ասենք Ձեզ նաև՝ բարի վերադարձ, որպեսզի վերստին առիթ ունենանք միմյանց ողջունելու:

Եվ քանի որ խաղաղության մասին խոսեցինք, մասնավոր կերպով ցանկանում ենք այս պահին Մեր ջերմագին մաղթանքն արտահայտել, որ Մերձավոր Արևելքի մեջ վերջապես խաղաղություն վերահաստատվի: Հատկապես ակնարկում ենք Լիբանանի դժբախտ վիճակը: Մենք զգում ենք, որ Ձեր սիրտը արյունում է ի տես այդ ողբերգության: Վստահեցնում ենք Ձեզ, որ Մենք Ձեզ լավ ենք հասկանում և ցավակից ենք Ձեզ, ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ մեծ թվով հայեր են ապրում, այլ նաև այն պատճառով, որ հայ ժողովուրդը երբեք չի ցանկա, որ անցյալի իր ողբերգությունները ուրիշներն էլ ապրեն: Նաև այն պատճառով, որ հայ ժողովուրդը, բոլոր հայերը, ոչ միայն Լիբանանի և Սիրիայի, այլ նաև Հայաստանի հայերը երախտապարտ են արաբ ժողովրդին, երբ 1915—1916-ի հայոց ցեղասպանությունից հետո արաբական ժողովուրդներն էին, որ իրենց գիրկը բացեցին և հրաշքով փրկված ու մահվան անդունդից փրկված հայերին ապաստան տվեցին իրենց երկրներում:

Խաղաղություն Լիբանանին:

Ամբողջ արաբական աշխարհին արդարություն և խաղաղություն: Ամեն:

Նորին Սրբությունը Իր խոսքի ավարտին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով զարդարում է կուրծքը Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքի:

Այնուհետև շնորհակալական խոսքով հանդես է գալիս Տ. Իգնատիոս Պատրիարքը:

## ԻԳՆԱՏԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ «ԱՆԻ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Ձերդ Սրբություն,

Պատվարժան ներկայացուցիչներ Հայաստանի կառավարության,

Դժվարանում եմ բառեր գտնել, որոնք արտահայտեն մեր շնորհակալության չափը, մեծությունը Ձեզ:

Մենք մեր ձեռքերով շոշափեցինք և աչքերով տեսանք, թե ինչպես այստեղի կառավարությունը հոգ է տանում իր ժողովրդի նկատմամբ և նրա բարօրության և մտավոր զարգացման համար, շենքեր և հաստատություններ կառուցում: Եվ դա մեզ համար մեծ մխիթարություն է, որովհետև ցանկանում ենք, որ մարդ արարածը միշտ խնամքի առարկա լինի:

Այստեղ զգացինք, որ մենք մեր տան մեջ ենք: Եվ դրան մեծապես նպաստեց Ձեր հյուրասիրության գեղեցկությունը և Ձեր զգացմունքը, մանավանդ այն կարեկցությունը, որ Դուք ունեք մեր դժվարությունների հանդեպ, որոնցից անցնում ենք մենք մեր երկրում: Մենք կարծում ենք, թե հետապնդումը խաղաղության, սիրո և արդարության, մարդկային գերագույն պարտականությունն է, մարդը որտեղ էլ որ գտնվի: Եվ մեզ համար մեծ ցավ է, տառապանք, որ կարծեք թե մեր երկրամասի վրա, ուր մենք ապրում ենք, այդ երեքն էլ գոյություն չունեն:

Թերևս երեկվա լուրերի մեջ իմացաք այն պայթյունի մասին, որ տեղի ունեցավ Բեյրութի թաղամասերից մեկում: Եվ բոլոր թերթերը սիրո և խաղաղության մասին են գրում: Մարդիկ տակավին շարունակում են մեր երկրում միմյանց դեմ կռվել: Եվ քանի որ սեր չկա, դժվար է, որ խաղաղություն տիրի:

Մեր մեծագույն բաղձանքն է, որ ամեն ժողովուրդ իր երկիրն ունենա, որտեղ և խաղաղորեն ապրի:



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀԱՅ, ՀՈՒՅՆ ԵՎ ՌՈՒՍ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ (26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1981 Թ.)

Եվ փառք ենք տալիս Աստծուն, որ հայ ժողովուրդը վերջապես վերագտավ իր երկիրը, որտեղ և կերտում է իր կյանքը: Մեր մաղթանքն է, որ հայ ժողովուրդը շարունակի վերադառնալ դեպի իր մայրենի հողը: Եվ մենք զգում ենք, որ երկիր կերտելը հեշտ հարց չէ: Դուք գիտեք, թե ինչ ասել է գաղթականություն, և գիտեք, թե պաղեստինցիներ կան մեր երկրի մեջ, որոնք զրկված են իրենց հողի վրա ապրելու իրավունքից:

Լիբանանցիներից շատ-շատերը կան, որոնք իրենց տան մեջ չեն կարողանում ապրել: Եվ արդյոք բնական չէ՞, որ մենք բոլորս էլ մաղթենք, որ ամեն ժողովուրդ վերադառնա իր բնակավայրը և ինքն իր ձեռքով կերտի իր կյանքը: Եվ ինչ որ հայ ժողովուրդը իրագործեց՝ վերադառնալով, ամրացնելով իր կյանքը իր հողի վրա, մենք այդ մաղթում ենք բոլոր գաղթական և տառապող ժողովուրդների համար էլ:

Իմ հատուկ շնորհակալությունն եմ հայտնում Հայաստանի կառավարությանը և նրա պատվարժան ներկայացուցիչներին, որոնք այս գեղեցիկ առիթը ընծայեցին մեզ:

Եվ շնորհակալ եմ մանավանդ այն ժողովրդին, որ սիրո և բարեկամության աչքերով նայեց մեզ միշտ:

Հիշատակը այս ժողովրդի և այս երկրի շատ խոր և երկար պիտի մնա դրոշմված մեր հոգում, մանավանդ այն ազնիվ վերաբերմունքը և բարեկամական սերը, որ տեսանք Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսի կողմից և Նրան շրջապատող եկեղեցական հայրերի կողմից:

Աղոթում ենք, որ Աստված երկար կյանք տա Ձեզ, որպեսզի շարունակեք օրհնություն լինել այս երկրում ապրող բոլոր հայերի համար:

Հատկապես շնորհակալ ենք «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի համար, որին բացարձակ արժանի չենք, սակայն պիտի կրենք այն, որովհետև վստահ ենք, որ շատերը նրան պիտի նայեն ավելի, քան թե մեզ, որովհետև արժանի չենք այդ մեծարանքին:

Այսպես Ձեր շնորհածը ծածկում է մեր թերությունները:

Երեկոյան ժամը 18-ին Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն, որին մասնակցում են նաև Հայոց Հայրապետն ու Իգնատիոս Պատրիարքը:

Հավարտ երեկոյան ժամերգության, Մայր տաճարի քառաձայն երգչախմբի կատարմամբ տրվում է հոգևոր համերգ:

Հոկտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Իգնատիոս Պատրիարքը, ուղեկցությամբ իր շքախմբի, Երևանի Հարավային օդանավակայանից մեկնում է Թբիլիսի:

Օդանավակայանում Սրբազան Պատրիարքին բարի ճանապարհ են մաղթում Հայոց Հայրապետը, Տ. Սիոն, Տ. Ծահե, Տ. Հուսիկ արքեպիսկոպոսները, Տ. Արսեն եպիսկոպոսը, Տ. Ոսկան, Տ. Ավագ ծայրագույն վարդապետները, Տ. Մոմիկ վարդապետը, Տ. Հայկազուն և Տ. Զատիկ աբեղաները:

Մայր Աթոռի հյուրերին բարի ճանապարհ մաղթելու էր եկել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հարությանը:

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքի այցելությամբ մի նոր էջ բացվեց Հայ և Հույն Օրթոդոքս Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման ու սերտացման ճանապարհին:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ




## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով հոկտեմբեր ամսի կեսերին Մայր Աթոռ ժամանեցին Հայաստանյայց Եկեղեցու Սահմանադրության նոր մի նախագծի կազմության հանձնաժողովի անդամները:

Հանձնաժողովի անդամներն էին.

1. **Գերաշնորհ Տ. Տիրան արքեպ. Ներսոյան (ԱՄՆ, Նյու Յորք).**

2. **Գերաշնորհ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան.** Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ (Փարիզ).

3. **Գերաշնորհ Տ. Շահե արքեպ. Աճեմյան.** Երուսաղեմի հայոց պատրիարքական փոխանորդ ու ժառանգավորաց վարժարանի վերատեսուչ (Երուսաղեմ).

4. **Գերաշնորհ Տ. Արսեն եպս. Բերբերյան.** Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ (Մայր Աթոռ).

5. **Բարձրապատիվ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան.** հայրապետական պատվիրակ Կենտրոնական Եվրոպայի հայոց (Վիեննա):

Հոկտեմբերի 22—29 օրերին հանձնաժողովը Վեհարանում գումարեց իր առաջին նստաշրջանը՝ ատենապետությամբ **Տ. Տիրան արքեպ. Ներսոյանի**:

Հանձնաժողովի հաջորդ նստաշրջանը գումարվելու է 1982 թվականի հունիս ամսին Մայր Աթոռում:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հոկտեմբերի 4-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ռսկան ծ. վրդ. Գալբակյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում հավուր պատշաճի քարոզ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական ժողովը:

*

* *

**Հոկտեմբերի 10-ին, շաբաթ.—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն.**

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ի հիշատակումն «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» տոնի, մատուցվում է ս. պատարագ: Պատարագիչն է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ հայր սուրբը խոսում է քարոզ՝ վեր հանելով մեր թարգմանիչ վարդապետների կատարած եկեղեցական-հայրենասիրական կարևոր գործունեությունը:

*

* *

**Հոկտեմբերի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի ու Բուլղարիայի միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ վեր հանելով մեր թարգմանիչ վարդապետների ունեցած հսկայական դերն ու նշանակությունը մեր ժողովրդի եկեղեցական-մշակութային կյանքում:

*

* *

**Հոկտեմբերի 12-ին, երկուշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստ:

Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, որը շուրջ 20 տարիներ ձեռնհասորեն վարել էր Ադրբեջանի հայոց առաջնորդությունը, հրաժարվել էր այդ պատասխանատու պաշտոնից զբաղվածության պատճառով:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ընդունելով սրբազան հոր հրաժարականը, իր ջերմ գնահատանքը արձանագրեց նրա երկարամյա առաջնորդական ծառայության համար:

Նույն ժողովում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ նշանակվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ առաջնորդական տեղապահին հաջողություններ մաղթեց՝ նրա պատասխանատու և կարևոր պաշտոնավարության ընթացքում:

* *

**Հոկտեմբերի 13-ին, երեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անթիլիասի միաբան Տ. Մեսրոպ եպս. Աշճյանը՝ Նյու Յորքից:

*

* *

**Հոկտեմբերի 14-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում գումարվում է միաբանական հերթական ժողովը, որի ընթացքում գեղեցիկ և բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը՝ խոսելով Հայ Եկեղեցու առաքելության մասին մեր ժամանակներում:

Բանախոսությանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

* *

*

**Հոկտեմբերի 18-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հակոբոս աբղ. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը: Այդ քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 5):

*

* *

**Հոկտեմբերի 21-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միա-

բանական հերթական հավաքույթ, որի ընթացքում «Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդը դեպի հավիտենություն տանող ճանապարհ է» թեմայով հետաքրքիր զեկուցում է կարդում Տ. Զատիկ արք. Ավետիքյանը:

* * *

**Հոկտեմբերի 25-ին, կիրակի.—Գիւտ Խաչի.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը՝ հավատացյալների կյանքում Ս. Խաչի խորհրդի, նրա դերի և նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

**Հոկտեմբերի 28-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում զեկուցումով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպ. Աճեմյանը՝ խոսելով էկումենիկ շարժման դերի և նշանակության մասին Եկեղեցիների հետագա մերձեցման գործում:

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Շիրակի թեմի Յոթ Վերք առաջնորդանիստ եկեղեցում քահանայական ձեռնադրություն են ստանում հոգևոր ճեմարանի քահանայից լսարանի ևս երկու երիտասարդ շրջանավարտներ:

Վերջին երկու ամսվա ընթացքում քահանայից լսարանի վեց ուսանողներ, մասնավոր քննություններ հանձնելուց հետո, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ ձեռնադրվում են քահանա՝ ծառայելու համար մեր ներքին թեմերում:

Հոկտեմբերի 18-ին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը քահանա է ձեռնադրում Ռաֆիկ Աղամյանին և Գևորգ Առաքելյանին:

Ռաֆիկ Աղամյանը անվանվում է Տ. Մյուռոն, իսկ Գևորգ Առաքելյանը՝ Տ. Շիրակ քահանա:

Երկու նորընծա քահանաները իրենց քառասունքը անցկացնում են Մայր Աթոռում՝ հոգևոր ղեկավարության ներքո Տ. Նարեկ քահանա Մատարյանի:

Նույն օրը սարկավագական ձեռնադրություն են ստանում նաև նույն եկեղեցու դպիրներ Սամվել Զարդարյանը և Վահան Տերտերյանը:

**Տ. Մյուռոն քհն. Աղամյանը** ծնվել է 1954 թվականին, Էջմիածնում: Նախնական կրթությունը միջնակարգ դպրոցում ստանալուց հետո, ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան և 1968—71 թթ. ավարտել դասարանական բաժինը:

1981 թ. մայիսին ավարտել է քահանայից լսարանի երկամյա դասընթացը:

**Տ. Շիրակ քհն. Առաքելյանը** ծնվել է 1954 թվականին, Լենինականում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1967-ին ընդունվել է հոգևոր ճեմարան և սովորել մինչև 1972 թվականը:

1980 թ. նա ընդունվել է ճեմարանի քահանայից լսարան և 1981-ին ավարտել այն:

# ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

Ամեն ժողովուրդ ունի իր սեփական ազգային-եկեղեցական տոները։

Հայ ժողովուրդն ալ ունի իր սեփական տոնը, իր լեզվի տոնը, իր մշակույթի տոնը, որը ավելի քան հազար վեց հարյուր տարիներ կմնա անփոփոխ մինչև այս լուսավոր օրերը։

Հայ ժողովուրդին Աստված անտես չէ ըրած և անոր տված է ռահվիրաներ, որոնք ժողովուրդի ծոցեն ծնվելով, նախախնամական դեր կատարած են և կրցած են ալիքներու մեջ տատանվող հայ ժողովուրդի նավը իր խաղաղ ափունքը հասցնել։

Այդ ռահվիրաներեն մեկն է՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, որ իր աչքերը լույսին բացավ 1600 տարիներ առաջ, որպեսզի մեր ժողովուրդի հոգին լույսին առաջնորդե։ Մինչև Մեսրոպ Մաշտոց թեև Հայաստան աշխարհ քրիստոնյա դարձած էր, բայց Հայ Եկեղեցին տակավին հայացած չէր, որովհետև չուներ սեփական գիր ու գրականություն։ Ամբողջ դար մը՝ ասորի և հույն եկեղեցականներ հրավիրվեցան ծառայելու մեր եկեղեցիներուն մեջ։ Այդ վիճակեն փրկելու համար Հաւ Եկեղեցին, մեր նախահայրերը մտածեցին որ անհրաժեշտ է որպեսզի հայ ժողովուրդը ունենա իր գիրն ու գրականությունը և Ս. Գիրքը թարգմանվի հայերեն լեզվով։

Այդ օրերուն կային երկու նշանավոր դեմքեր՝ Վռամշապուհ թագավոր և Սահակ կաթողիկոս, որոնք խորհեցան սեփական գիր ու գրականություն ստեղծելու մասին։ Անոնք փնտրեցին և գտան այն հանճարեղ վանականը, որ եղավ Ս. Մեսրոպ Մաշտոց՝ փրկելու հայ ժողովուրդը ո՛չ միայն իր ժամանակաշրջանի, այլ բոլոր դարերուն համար, որ հաջորդեցին։

Հոկտեմբեր ամիսը նվիրական է Հայ Եկեղեցվո համար։ Այդ ամսվան կզուգադիպի Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի մեծագույն տոներեն մեկը՝ Թարգմանչաց տոնը։ Թարգմանչաց վարդապետներու կատարած գործը, թափած քրտինքը չպետք է փնտրել միայն թարգմանության մեջ, այլ այն ճիգին մեջ, որով անոնք պայծառացուցին Հայ Եկեղեցին, օծտեցին զայն իր սեփական լեզվով, իր զմայլելի շարականներով և պայծառացուցին հայ ժողովուրդի հոգին։

Թարգմանչաց տոնը հայ ժողովուրդին հոգիին պանծացման ցնծատոնն է։ Թարգմանիչ վարդապետներուն հաջորդ դարերուն ունեցանք անոնց գործը շարունակող փայլուն դեմքեր, ինչպես՝ Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, որ մեր հոգին բարձրացուց դեպի Աստված և մեզի սորվեցուց Աստուծո հետ զրույցի նստել։ Իսկ ավելի հետո Ներսես Շնորհալին մեզի սորվեցուց Աստուծո փառքը երգել։

Նույնքան նվիրական է հոկտեմբեր ամիսը մեզի համար, որովհետև այդ ամսվան կզուգադիպի նաև Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը։ Այս զուգադի-

պության մեջ ամբողջ խորհուրդ մը կա։ Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանին նոր վերածնության շրջան մը կը բացվի Մայր Աթոռի տարեգրության մեջ և Ս. Էջմիածնի միջավայրեն ներս։

Հազար ու հազար փոթորիկներ անցան հայ սրտի, հայ հողի վրայեն, և ոչ մեկ փոթորիկ, ոչ մեկ գերություն չկրցան խլել հայ ժողովուրդի հոգիեն իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված հավատը քրիստոնեական, որ մենք մեր պապերեն կտակ և պատգամ ընդունեցինք։

Մեր հավատքի տաճարներուն մեջ ամփոփված այսօր, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, բովանդակ հայ ժողովուրդը կոգեկոչե իր մշակույթի փառքը։ Որովհետև, կհավատանք մեծ իմաստունի մի խոսքին, որ ժողովուրդի մը հոգեկան կյանքը կսկսի իր այբուբենով։

Այսօր թարգմանչաց տոնի առթիվ մենք կխոնարհինք և կոգեկոչենք անոնց լուսավոր, անկորնչելի հիշատակը։ Անոնք մեզի կտակ ձգեցին չհեռանալ, չբաժնվիլ մեր մայր հայրենիքեն, մեր ս. Եկեղեցիեն, որ եղած է ծննդավայրը հայ լեզվին ու հայ մշակույթին։

Թարգմանչաց վարդապետներու ոգեկոչման հիշատակին առջև այսօր մեզի կմնա աղոթել և մաղթել, որպեսզի Թարգմանչաց ոգին և անոնց շնորհները ինչպես անցյալի մեջ, նաև այսօր և վաղը և հավիտյանս հավիտենից մեզի հետ մնան և ամեն տեղ ճառագայթեն ի փառս մեր ազգին։

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

Քարոզ՝ խոսված Մայր տաճարում, հոկտեմբերի 11-ին։



# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Քանզի ի վերայ Աջոյն և Ս. Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» (Ա. Դավրիժեցի):

ԺԷ դարի պատմիչ Առաքել վարդապետ Դավրիժեցին դարերու խորքեն եկող և հայ ժողովուրդի սրտեն բխած պատգամն է որ մեզի կբերե այս նախադասությամբ, ընդգծելով Ս. Էջմիածնի խորհուրդը և Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական-քարոզչական դերը մեր ժողովուրդի եկեղեցական, ազգային կյանքին մեջ:

Դավրիժեցին իր ժամանակին ականատես վկան եղավ հայ ժողովուրդի տառապանքներուն, երբ Շահ Աբաս գերի կտաներ մեր ժողովուրդը դեպի Պարսկաստան իր երկիրը շենցնելու համար:

Գերեվարության այդ ծանր ժամանակաշրջանին ժողովուրդի հոգիի լավագույն թարգմանը կհանդիսանար Դավրիժեցին՝ պատմության իր գործին մեջ արձանագրելով որ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջին և Ս. Էջմիածնի վրա հաստատված է ժողովուրդըն հայոց:

Այսօր Հայաստան աշխարհեն և սփյուռքի զանազան թեմերեն եկած ենք Ս. Էջմիածին, մեկ նպատակով և մեկ սրբազան ուխտով:

Մեր հավատքի հայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, շուրջ 1700 տարիներ առաջ, իր աղոթքով ու քարոզությամբ Հայաստանի մեջ քրիստոնեությունը կկարողանար պետական կրոնք դարձնել և լուսավորել ողջ հայ ժողովուրդը Ավետարանի փրկարար հավատքով:

Եվ երբ, ըստ Ագաթանգեղոս պատմիչի վկայության, գիշեր մը ան ծունկի եկած կաղոթեր, այդ պահին այնքան զորավոր էր ներշնչումը իր մեջ, որ հրաշալի տեսիլքի մը ականատես եղավ: Այս սուրբ վայրին մեջ է որ Հիսուս Քրիստոս կիջներ ոսկի մուրճը ձեռքին, ցույց տալով Ս. Էջմիածնի Մայր տաճարի շինության վայրը, որպես քրիստոնեական առաջին եկեղեցին:

Ահավասիկ մենք այսօր կգտնվինք եկեղեցվո մը մեջ, որ երկրագնդի վրա կառուցված առաջին պետական եկեղեցին է, որպես արդյունքը հրաշալի տեսիլքին մեր հավատքի հոր Ս. Գրիգոր Լուսավորչի:

Ս. Գրիգոր Լուսավորիչով հիմնվեցավ

նաև Հայաստան աշխարհի մեջ Հայ Եկեղեցվո Ամենայն Հայոց Հայրապետությունը: Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի վրա նստած են 130 Հայրապետներ, Ս. Գրիգոր Լուսավորիչեն մինչև Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց: Մեզի համար այս օրը ուրախության և հոգեկան ցնծության օրն է, որովհետև այսօր Մայր Աթոռի, Հայաստանի և սփյուռքի բոլոր Հայաստանյայց եկեղեցիներուն մեջ հայրապետական մաղթանքներով կնշվի Հայոց Հայրապետի գահակալության 26-րդ տարեդարձը:

24 տարիներ առաջ, երբ ես որպես ուսանող Ս. Էջմիածին կուգայի, Էջմիածինը այնքան պայծառ վիճակի մեջ չէր:

Հայոց Հայրապետը 26 տարիներու իր գահակալության շրջանին Հայ Եկեղեցվո անունն ու փառքը տարածեց աշխարհե աշխարհ, մեր ժողովուրդը ջերմ հավատքով լեցվեցավ և ավելի մեծ սիրով կապվեցավ իր վերածնված հայրենիքին:

Այս սրբազան պահին, և այսօրվա հանդիսության այս բերկրառիթ ժամին, ողջ հայ ժողովուրդի սրբազան աղոթքն այն է՝ որ մեր սիրեցյալ Հայրապետի սուրբ և բարի ձեռքերուն մեջ միշտ ծաղկյալ մնա հայրապետական գավազանը՝ ի միաբանություն հայ ժողովուրդի և ի պայծառություն հայ եկեղեցիներուն:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

Քարոզ՝ խոսված Մայր տաճարում, սեպտեմբերի 27-ին:

ԵՂԻՎԱՐԴ (ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ)

## ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

## ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ

**«Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր»**
(Ծնունդք 1—27)

Շրջան ըրաւ Աստուած իր ստեղծած աշխարհին մէջ: Ամէնուրեք, կաթիլ կաթիլ եւ ծով առ ծով բարիքն էր որ կը բաշխուէր: Սակայն համագոյքը լեցնող արարածները անկենդան կենդանութեան մը պատկերը կը վերբերէին զուրկ իրենց ստեղծիչը ցոլացնող հոգեհայելիէն, իմացականութեան խանդէն, ըմբռնել կարենալու համար կապը որ կ'առնչէր Արարիչն ու արարածը: Կը պակսէր ապրումի երազով տոգորուն էակը, որ բնութեան մեծ ստեղնաշարէն զեղումի հանէր երկինքները եւ դողդոջ լռութիւններէն քաղէր ձայներու հրդեհը: Աստուած պէտք ունէր մարդուն:

Ու տեսաւ Աստուած իրմէ քիչ մը անդին թրթռացող շերտը կաւին: Առաւ ափով, չաղուեց զայն սրբազան նաշիհի մը պէս եւ անոր անզգայ եւ անթռիչ կաղապարին մէջ դրաւ թեւ մը իր շունչէն: Երբ նայեցաւ իր ձեռքերուն մէջ կեանք առած էակին, տեսաւ որ նման էր ան իր պատկերին, եւ լեցուեցաւ սիրով: Արարիչը հողածին կոչեց իր ձեռակերտ Ադամը:

Ադամ ստեղծուելէն վերջ, կարծես երազէ մը կ'արթննար: Մեղրի նման արեւ մը մետաքս թելերով կը փռուէր պարտէզին վրայ, լեցնելով ծաղիկներու ոսկեփերթ բաժակները: Կը հոսէին ջուրեր լոյսով արծաթուած, լիճերը ձոյլ ձոյլ պառկած հողին, գետինը կը խնդար գոյնզգոյն ծաղիկներով, ծառերը իրենց վճիտ պարոյրը կը բանային երկնքին ներքեւ: Հեռուն լեռները սիւներու նման վեր կը բռնէին երկնքին կապոյտը: Ամէն սեռէ ու տեսակէ

կենդանիներ կը կայտռէին նորաստեղծ պարտէզին մէջ՝ առանց իրարու ծուռ նայելու: Անոնք առանց խօսելու կը հասկնային զիրար, իրենց քաղցր նայուածքներու խաղաղութիւնը փոխ տալով իրարու:

Ադամ կ՚արթննար իր երազէն: Մինակ էր, տխուր ու մտամոլոր: Անոր դէմքէն սրբուած էր ժպիտը՝ զոր Աստուծոյ մատները դեռ նոր կաթեցուցած էին իր աչքերուն խորը: Արարիչը հեռուէն կը դիտէր իր ձեռակերտը եւ կ՚ըզգար մինակութեան ցաւը անոր: Աստուածները միայն կրնային մինակ ապրիլ: Մեղքցաւ Աստուած Ադամին եւ ստեղծեց Եւան, իբրեւ ամբողջացուցիչ մաս եւ օգնական իրեն:

Գեղեցիկ էր Եւան, ուսերէն վար կ՚իյնային մազերը, մետաքսի անձրեւ մ՚ինչպէս: Դէմքը արեւածաղիկ՝ մազերու ոսկիին տակ բացուած: Աչքերը իր մարմնի խորհուրդին վրայ կը վառէին նման զոյգ մը կանթեղներու, որոնք կրնային մարդոց գերեզմանները լուսաւորել: Հասակը մարմարի բոց էր, ներդաշնակ ու պերճ: Անոր թափանցիկ կուրծքին վրայ զոյգ մը աղաւնիներ իրարու կը նայէին, իրենց թխորակ կտուցներով:

Ադամ մինակ կը շրջէր պարտէզին մէջ, երբ նշմարեց որ իրմէ քիչ անդին ձեւ մը, յաւերժահարսի պէս թրթռուն, իրեն կը նայէր: Անոնք պահ մը զիրար դիտեցին: Ժպիտը պատասխանեց ժպիտին: Երկուքին ալ աչքերը կը մշուշուէին սիրով: Հոգիները քոյր են եւ կը վախնան մինակ մնալէ, անոնք իրարու կուգան, իրարմէ քաշուող երկու արեւներու ուժով: Անոնց մարմինները կը դողային, ճարճատուն այրող գերաններու պէս: Յետոյ գացին պարտէզի մութ շուքերուն սիրտը:

Ուշաթափ էր Եւան, փակած իր արտեւանունքները, եւ գինով՝ Ադամ, որովհետեւ խմած էր քաղցրութիւնը մեղքին եւ գինին հեշտութեան: Երջանիկ էին, մոռցած այն ամէնը՝ որ սահող վայրկեանին հեշտանքը չունէր: Իրենց քովիկը հաստաբուն թզենիին վրայ կը բարձրանար որթատունկը, անոր ուռչազարդ բարունակներէն կախուած մարգարտահատ իր ողկոյզները: Ադամ իր քերկրանքին մէջ խաղողի արիւնով լուաց կնոջ դէմքը, սպիտակ ինչպէս շափրակները լուսասին:

Յետոյ լսեցին ոտնաձայնը մօտեցողին, որ անհուն քաղցրութեամբ իրենց կը նայէր: Անոր հասակը լուսասիւնի մը պէս, մինչեւ երկինք կը բարձրանար, իսկ բազուկները կարծես կը գրկէին ամբողջ աշխարհը: Դրախտը ողողող զոյգ գետերու պէս բացուեցան եկողին շրթները. «Պարտէզը ձերն է իր բոլոր բարիքներով. բոլոր ծառերէն կրնաք ուտել, բացի բարիի եւ չարի ծառէն», եւ ցոյց տուաւ անոնց բազմուղէշ տունկը՝ որ միայն ամպի մը պէս կը բացուէր պարտէզին խորը: Անոր շուրջ օձը պարանի պէս իր մարմինն էր փաթթած, եւ սեւ ժպիտով կը նայէր նորաստեղծ զոյգին:

Ադամն ու Եւան, թեւ թեւի կը շրջէին բուրաստանի մէջ, ափերն ի վար բիլ ջուրերու, երկու անմահ ալիքներու նման: Լոյսը արեւուն կը տժգունէր ցոլքին դիմաց որ կը ծորէր անոնց իրարու եկած երեսներէն, եւ ծառերու շուքերուն հետ երբ իրարու կ՚երկարէին իրենց շրթները, կը տրոփէր սիրտն անտառին:

Օձը որ հանդիսատես էր անոնց երջանկութեան, մօտեցաւ իրենց, ուրախութիւնը եղծող շուքի մը նման, եւ համոզեց որ ուտեն այն ծառէն՝ զոր արգիլած էր իրենց Արարիչը: Անոնք ուտելէ վերջ անդրադարձան թէ մերկ էին եւ կ՚ամչնային իրարմէ: Մեղքին կաթիլը առած էր իրենցմէ անմեղութեան շնորհը, կաթեցնելով նոյն ատեն անոնց հոգիներուն խորը իմաստութեան ցօղիկ մը: Օձը կը խնդար չարաժպիտ:

Թռած էր երազը, վտարուած էին պարտէզէն վայրկեանի մը հաճոյքը վայելելու գինով: Ապերջանիկ չէին զգար ինքզինքնին սակայն, որովհետեւ կը հաւատային կեանքին եւ կը սիրէին զիրար:

Դուրս ելան պարտէզէն եւ հետեւեցան դրախտի մեծ գետի ուղղութեան: Անոնք կ'երթային դէպի մեծ լեռը որ իր արծաթ սաղաւարտով կը բրգանար երկնքին դէմ, որուն վրայ դարեր յետոյ Նոյեան տապանը պիտի հանգչէր, ջուրերէն ազատուած աղաւնիի մը նման:

**(Էջ 7—9)**

## ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ

**«Ո՞ւր է Կայէն եղբայր քո»**
(Ծնունդք 4—9)

Ադամ եւ Եւան եդեմական դրախտէն աքսորուելէն յետոյ, բնակեցան մեծ լերան ստորոտը, որ կապոյտին մէջ կը բարձրանար: Կարմիր ամպեր, խաղողի խոշոր ողկոյզներու նման կը կախուէին լերան վրայ: Հովիտի մեծ կլաթսային մէջ, կրակի գոյնով ժայռեր իրարու քով պառկած կը խմէին արեւը, առտուան ցօղերով տամկացած: Նախածնողները շինեցին իրենց բնակարանը, անտաշ քարերով, մեծ լեռնէն սկիզբ առնող դաշտին մէջ, ուրկէ աղմկայոյզ գետ մը իր ջուրերը կը վազցնէր դէպի հիւսիս: Մշակեցին հողը, բռնի կորզելով զայն բլուրներու կողերէն: Վանեցին գայլախազն ու դժնիկը, ասազն ու խօլաբոյսը եւ անկողին յարդարեցին աստղատերեւ տունկին, որ իր մարգարտաշար հատիկները կը դիզէր հողին վրայ, կաքաւի աղուոր հաւկիթներու նման: Մրգաստաններու զմրուխտն ու ոսկին կը վառէին հովերու շրթներէն՝ նոր դրախտի մը գեղեցկութեամբ, զոր իրենք էին յօրիներ:

Ունեցան երկու զաւակներ, Կայէն եւ Աբէլ, մին խաշնարած էր եւ միւսը՝ հողագործ: Երջանիկ էին, կ'զգային թէ քրտինքով թրջուած հացը աւելի քաղցր էր քան անաշխատ կեանքին առատահոս պարգեւը: Որովհետեւ վայ այն հոգիներուն՝ որոնց մէջէն չէ անցած անձնահրաշ ոգին, որ նոր յոյզեր ու քաղցրութիւններ կը բերէ ձանձրոյթը խաղաղութեան, ինչպէս հովը կ'անցնի անտառներէն, իր զովաշունչ թովչութեամբ:

Աշխարհը այն ատեն հիմակուան պէս չէր, բարի եւ շոյող արեւին տակ բոյսերն ու ծառերը կը մեծնային ազատ: Լեռներուն վրայ խոշոր սօսիներ տարիներու բեռան տակ չէին զգար ժամանակի յոգնութիւնը: Գետակներու ափին՝ աղբիւրներու առջեւ, հաճոյքն ու համը կ'ուռեցնէին ծառերուն պտուկները: Ծանօթ չէր տկարին բռնութեան դառնութիւնը եւ պարտութիւններուն մղձաւանջը:

Աբէլը խաշնարած էր, ամբողջ օրը լեռներու վրայ կ'զբօսնուր, սրինգով կամ գառներու հետ խօսելով, որոնք մետաքս բուրդեր ունէին եւ անուշ նայուածք: Իրիկունը երբ երկնակամարը կը ցածնար եւ աստղերը կը պայթէին, վերածելով երկինքը մեծ վարդաստանի մը, հովիւ Աբէլը տուն կ'առաջնորդէր իր հօտը:

Իսկ Կայէն կ'աշխատէր արտերուն մէջ: Հողը կնոջ մը նման կը ծնէր իր բարիքները, զուարթացնելով առաջին հողագործին սիրտը: Ուրախ էր Կայէն, որովհետեւ ցորենի արտը փշրուած կրակի պէս կը փռուէր արեւին տակ, առուները արծաթ թելերով կ'երկարէին դաշտերու պատմուճանին վրայ, եւ հողը կը խնդար հազար բարիքներով: Իրիկունը երբ իր թեւերով ծածկէր այգիները եւ արեւը կարմիր նուռի պէս լերան վրայ իյնար, Կայէն եւս տուն

կը վերադառնար։ Ամբողջ ընտանիքը բոլորուած քարէ սեղանին շուրջ կը վայելէին բնութեան բարիքները։ Անոնց սիրտը յստակ էր եւ պարզ, նման երկնքին որ լեռներուն վրայ կը տարածէր իր թափանցիկ ապակին։

Տասնըհինգերորդ լուսնին, ամառուան մեծ տօնին, երկու եղբայրները իրենց աշխատանքի արդիւնքներէն ընծայ բերին Աստուծոյ։ Աբէլ պարարտ խոյ մը, որուն եղջիւրները գեղեցիկ պսակ մը կը հիւսէին իր գլխուն շուրջը, զարդարուած ճիւղերով, իսկ Կայէնը քանի մը քօռ ցորեն։ Դրին իրենց ընծաները հսկայ ժայռի մը վրայ, եւ սպասեցին Աստուծոյ օրհնութեան եւ ընդունելութեան։

Երկու եղբայրները երկար չսպասեցին. Աստուած կապոյտ ամպի մը վրայ նստած եկաւ։ Անոր դէմքը շլացուցիչ էր ինչպէս փայլակ, աչքերը փարփառ լուսաստղի նման։ Բացուեցան իր շրթները եւ օրհնութեան կրակը ինկաւ Աբէլի զոհին վրայ։ Աստուած միշտ լաւագոյնը կը պահանջէ իր որդիներէն. վայ անոր որ իր յոռեգոյնը կը կամենայ։

Խռոված էր Կայէնը, իր դէմքը այնքան մռայլ էր, որ կրնար մութին մէջ ձգել երկնքի դարպասները։ Նախանձը կը մեծնար իր մէջ սեւ ու կարմիր ալիքներով՝ այս ահաւոր մերժումէն։ Նախանձը կրակ է որ ինքզինքը կ՚ուտէ եւ կրնայ դժոխքը փոխադրել մարդոց սիրտերէն ներս։ Կոյր օձ է, մահուան պաղութեամբ սալարուած հոգիներուն խորը։

Կայէն ըմբոստացաւ Արարիչին դէմ, իր եղբօրը եղած շնորհին համար, առաւ խոշոր քար մը եւ սպաննեց Աբէլը։ Երկիրը որ կոյս էր մինչեւ այդ օրը, ողողուած միայն երկնքի ցօղով եւ անձրեւով, առաջին անգամ ըլլալով ծծեց մարդուն արիւնը։ Աբէլի արիւնը հազիւ հողին թափած, երկիրը սկսաւ մռնչել, կծկծիլ եւ յանկարծ պատռեցաւ, ինչպէս անբախտ մայր մը աշխարհ կը բերէ հրէշային երեխայ մը, Աստուծոյ բարկութեան կնիքը վրան։

Աստուած անիծեց Կայէնը. «Պիտի հալածուիս ոճրագործի անդոհով եւ քնաւ հանգիստ պիտի չունենաս, քանի որ սպաննեցիր ոչ միայն եղբայրդ՝ այլ նաեւ մարդկային եղբայրութիւնը։ Ձեռքը որ թափեց անմեղ արիւնը, խորտակեց սիրոյ ոսկի շղթան, որ մարդերը իրարու կը կապէ ծիածանի օղակներով, անիծեալ ըլլաս յաւիտեան»։ Աստուածային անէծքը այժմ կախուած կը մնար մարդասպանի գլխուն՝ իր շղթաներէն արձակուած հրէշի մը պէս։

Յետոյ Կայէն տեսաւ որ կը բացուէր երկնքի վարագոյրը եւ խոշոր աչք մը իրեն կը նայէր բոցավառ ջահի մը նման։ Կը փախչէր Կայէնը բոկոտն, երկրի անծայր ճամբաներէն առանց կանգ առնելու։ Իր փոսացած աչքերուն մէջ արիւն կար, սպաննուած եղբօրը պատկերով։ Կը խօսէր ինքզինքին հետ միայն, բայց չէր նայեր անոնց՝ որոնք կը խօսէին իր հետ։ Իրեն կը թուէր թէ ահաւոր հրէշ մը երախը բացած զինքը կլլել կ՚ուզէր։ Իր ծռած ողնահարին վրայ սառոյցը իր մատներն էր խրեր։ Այտերը կը դողային, ոսկորները կը ճարճատէին, իսկ ճակատը խարանուած էր կարմիր եւ անջնջելի նշանով մը։ Բոլորը կը ճանչնային զինքը, որովհետեւ խոշոր կոտոշ մը բուսած էր իր ճակտին մէջտեղը։

Կը փախչէր ստուերի մը պէս եւ կ՚զգար թէ բոլոր շուրջի իրերը խոժոռ կը նայէին իրեն։ Կը լսէր միայն ձայն մը որ կ՚արձագանգէր երկնքէն, անլռելի սաստի մը նման. «Կայէն, ո՞ւր է եղբայրդ»։ Մարդասպանը կը քամուէր իր տառապանքին մէջ, կ՚ուզէր մեռնիլ ու չէր կրնար։

Անկէ յետոյ արիւնով ներկուեցան հողերը, կարմիրով գիշերները եւ չարիքը իր շուրջը նետեց մարդոց սիրտին՝ մահուան մղձաւանջով։

**(Էջ 11—13)**

ԵՂԻՎԱՐԴ

## «ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ», ԲՐՅՈՒՍԵԼ, 1980 Թ., ԷՋ 218
## ՆԿԱՐԻՉ՝ ԱԼԲԵՐՏ ՅԱՐԱԼՅԱՆ

1980 թվականի հունիսին լույս տեսավ Մայր Աթոռի հրատարակությունը «Լուսամատեան» խորագրով, հեղինակությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի (Եղիվարդ):

«Լուսամատեան»-ը բաղկացած է 50 աստվածաշնչական և մեր եկեղեցական պատմությունից վերցված երկու պատումներից:

Աստվածաշունչը հին ժամանակներից մինչև մեր օրերը հանդիսացել է անսպառ աղբյուր հզոր ներշնչումների մեծ արվեստագետների համար, իր համամարդկային բարձր գաղափարներով, խորագույն իր ճշմարտություններով, բարոյական աստվածատուր պատգամներով և իր անթառամ քնարերգությամբ:

Նույն ճանապարհով ընթացել է նաև Եղիվարդը: «Հոն մեկտեղված են Հին և Նոր Կտակարաններեն դրվագներ, ընտրված թանկագին գանձարանե մը, որոնք կրցած են սնուցանել ութսուն սերունդներ մեզմե առաջ... Սրբազան մատյաններեն առնված այս դրվագները, անգերազանցելի ըլլալով հանդերձ, պետք ունին մեր օրերու հատուկ հանդերձանքին, վայելչորեն ներկայացնելու զանոնք վերծանողներու ընկալչությանը...»: Հեղինակը «փորձած է ներկայացնել զանոնք սովորականեն քիչ մը տարբեր, առանց դպչելու անոնց անփոխարինելի ճշմարտությանը»:

Հին Կտակարանից վերցված պատումների այս շարքն սկսվում է աշխարհի

ԵՂԻՎԱՐԴ

ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

Նկարիչ՝

ԱԼԲԵՐՏ ՅԱՐԱԼԵԱՆ

ստեղծագործության պատմությամբ. «Եւ եղև լույս»: Արարչագործության նկարագրությունը Ծննդոց գրքում մի գեղեցիկ լուսերգություն է, որից ներշնչված՝ սրբազան հեղինակը աշխարհի ստեղծումը պատկերում է հրաշագեղ մի տոնահանդեսի ցնծուն գե-

ղեցկությամբ, իրերահաջորդ թարմ և հստակ պատկերների առատ տողանցումով. «Լույսը իր ազնվաբույր օծությամբ անմարմին ջուրի մը նման սահեցավ երկրի անորոշ մթություններուն վրա, հրաշագործ աղոթքի մը պես և եղև լույս... ծագող լույսի աղբյուրեն խմեցին աստղերն ու մոլորակները և վերածվեցան առրաշեկ գունդերու, ոսկեհատիկ ողկույզներու նման կախված անջրպետին մեջ»:

Նույնքան գեղեցիկ և տպավորիչ է գրքում մարդու ստեղծման նկարագրությունը, լի խորհրդով և իմաստությամբ, որպես արարչագործության թագն ու պսակը: «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր»: Աստված առաջին մարդուն ստեղծեց աստվածային իր շնչով, իր պատկերի համաձայն, օժտեց նրան իմաստությամբ և ազատ կամքով: Աստված «երբ նայեցավ իր ձեռքերուն մեջ կյանք առած էակին, տեսավ որ ան նման էր իր պատկերին և լեցվեցավ սիրով... Արարիչը հեռվեն կդիտեր իր ձեռակերտը և կզգար միևնակության ցավը անոր: Աստվածները միայն կրնային միևնակ ապրիլ: Մեղքցավ Աստված Ադամին և ստեղծեց Եվան... Գեղեցիկ էր Եվան... Կշրջեին անոնք բուրաստանի մեջ ափերն ի վար բիլ ջուրերուն, երկու անմահ ալիքներու նման...»:

Հատորում տեղ գտած աստվածաշնչական երրորդ պատումը ընթերցողին ներկայացնում է երկրագնդի վրա մարդու ձեռքով կատարված առաջին ոճիրը՝ թափված անմեղ արյան պատմությունը հարազատի կողմից:

«Ո՞ւր է Կայեն, եղբայր քո»: Եվ հեղինակը խորհրդածում է այս անլուր ոճրի դիմաց, մեղադրում եղբայրասպան Կայենին՝ խորունկ մի ընդհանրացումով կարծես դատապարտելով բոլոր ժամանակների եղբայրասպանությունը մարդկային. «Սպանեցիր ոչ միայն եղբայրդ՝ այլ նաև մարդկային եղբայրությունը: Ձեռքը որ թափեց անմեղ արյունը, խորտակեց սիրո ոսկի շղթան, որ մարդերը իրարու կկապեր ծիածանի օղակներով»:

Նույնքան խորիմաստ և գեղեցկահյուս են իրար հաջորդող աստվածաշնչական մյուս պատումները: Հոյակապ է տրված, օրինակ, ջրհեղեղի տեսարանը՝ Հայտնության գրքի անդրաշխարհային ցնցիչ պատկերներով. «Վաղորդայնն էր մեծ կռիվներու, նախերգանքը գերության և զրկանքներու... Մարդը տակավ կհեռանար իր Արարիչեն: Տառապողներու հառաչանքն ու անեծքը կխառնվեր զվարճացողներու դափին ու ծնծղային»: Եվ սկսվում է երկնային պատիժը՝ ջրհեղեղը. «Մանր ամպեր, լեռներու վրա կուտակված, իբրև զինարաններ փոթորկի, բացին իրենց սահանքները փայլակներու շողյուններուն ներքև: Կմռնչեին հողմերը, կդողային լեռները, գետերը իրենց ընթացքին մեջ կանգ առած՝ կգալարվեին, դիզելով իրենց ջուրերը ցամաքին վրա: Երկնաբարձ ալիքները ծանր ու լայն, իրենց ներքև թաղելով գյուղերն ու քաղաքները, պարտեզներն ու անտառները... Մարդերն ու կենդանիները ժայռերը ճանկռտելով լեռներ բարձրանալ կփորձեին:

Ջուրերու ծովը դուրս կհաներ նաև ոսկորները մեռածներուն, որոնք կծփային ալիքներուն վրա կիսամեռ մարդու կուշտին... Այս ողբերգության մեջեն կանցներ տապանը ինչպես պալատ մը թափառկոտ՝ իր մեջ առած ընտրյալ զարմին մնացորդները... Աստված կհաշտվեր մարդուն հետ»:

Ահա Բաբելոնի աշտարակը Սենաարի դաշտում, որ «ջուրերու երկու արծաթ բազուկներուն վրա կօրորվեր գեղեցիկ լաստի մը նման»:

«Լուսամատեան»-ում հանդես են գալիս Հին Կտակարանի հավատքի և սրբության մեծ հերոսները՝ Աբրահամն ու Իսահակը, Հակոբ Նահապետը, Հովսեփը, Մովսեսն ու Դավիթը, Սողոմոն Իմաստունը, աստվածատես մարգարեներ՝ Եղիան, Եսային, Եզեկիելն ու Երեմիան, հայրենասեր հերոսուհի Հուդիթը, մակաբայեցի եղբայրները և ուրիշներ: Սրբազան հեղինակը վերոհիշյալ դեմքերից յուրաքանչյուրի բնութագիրը տալիս է դիպուկ էպիտետներով՝ շեշտելով յուրաքանչյուրի անհատականության առանձնահատուկ գծերը: Նրանց բոլորի կերպարները անհատականացված են իրենց նկարագրի տիրական կողմերով, մեկը նման չէ մյուսին, սակայն բոլորի վրա էլ զգացվում է մեծության կնիքը, աստվածային վեհությունը: Նրանք մեծեր են, սրբեր, ոմանք նաև մեղավորներ, որ ճաշակել են մարդկային փորձությունները և մեղքերի դառնությունները: Այսօր էլ աշխարհը կարիքն ունի սրբերի և հավատքի հերոսների:

Ահա իր զոհաբերման արարքի մեջ մերժված Աբրահամի կերպարը. «Քայքայված, տրտում կիջներ Աբրահամ լեռնեն սրբազան: Տարած էր իր սերը երկնքի կանչին, մերժված չարաչար... Ոչ ոք պիտի կրնար, նույնիսկ Եհովան, նորոգել, բուժել իր բեկված հոգին՝ նետված երկնքի բարձունքներեն վար»:

Սրտառուչ և հուզիչ գծերով է տրված եղբայրներից դավաճանված ու վաճառ-

ված, Պետափրեսի կնոջ կողմից անիրավ կերպով ամբաստանված Հովսեփի կերպարը. «Բանտին մեջ Հովսեփի խռովահար, բայց քաղցր դեմքը կտպավորեր բոլոր իր բախտակիցները: Խոր ընկալչությունը իր անձին կներշնչեր ինքնաբուխ համակրություն, արու և հաստատ, առանց ներքին ճիգի մը նպաստին: Բայց տրտում էր հոգին, եղերական հոգնության մը գինով»:

Ջերմ սիրով և համակրանքով է ներկայացված Հին Կտակարանի մեծագույն դեմքերից մեկի՝ Մովսեսի կերպարը. «Այնտեղ կհսկեր մեծ առաջնորդը երազներու մեջ թաղված: Կապտալին աչք ուներ ան, խորհուրդով և զգայությամբ լեցուն: Քրմական իր շրթները կբացվեին Եհովայի կամքը հայտնելու պարագային միայն»:

Հեղինակը տպավորիչ գծերով է ներկայացնում մեծ առաջնորդի ինչպես արտաքին-ֆիզիկական, այնպես էլ ներքին-հոգեկան բարեմասնությունները իրենց ամբողջ գեղեցկությամբ ու վեհությամբ. «Որքան կհեռանար, այնքան կմեծնար կերպարանքը իր ճերմակ վերարկուին մեջ, վեհափառ երևույթ մը տալով իրեն: Արևու շողերը բոցավառ թագի մը վերածեր էին գանգուրները իր գլխուն շուրջ»: Կամ՝ «Քալած էր դար մը ամբողջ, վճռական ու պիրկ, ուխտավորի մը նման, որուն փույթը չեն վերքերը իր բոկ ոտքերուն և տաժանքը քաղցին, պահելով իր մեջ խոնջենքը անցնող օրերուն, առանց վար դնելու սրբազան բեռը պարտականության»:

Ինչքան մարդկային է նաև կերպարը Հին Կտակարանի թագակիր մարգարեի և սաղմոսերգուի, մեծ մեղավորի ու ապաշխարողի. «Սիրուն էր Դավիթը, դեռահասակ ու թարմ, ցողին մեջ լվացված ոսկիին նման: Խարտյաշ էին մազերը, որ տաղավարի մը պես կպսակեին գլուխը... Աչքերը խորունկ, հասակը ներդաշնակ ու սլացիկ... Անոր հոգիին մեջ կուռճանար վաղվան թագավորության մականը...»: «Որքան հերոս, նույնքան գրչի մարդ» էր Դավիթը, որը «գիտցավ իր հաղթանակները պատմուճանել մտքի և սրտի անտարազելի գեղեցկությամբ»:

Ահա Եսային՝ պայծառ ու հստակատես մարգարեն, քաջակորով հայրենասերն ու քաջաքարոզ խաղաղարարը, որի «տեսիլներու պայծառությունը պիտի ըներն զինքը բոլոր ժամանակներու խիղճը... Անոր սիրտեն լույսի թելեր պիտի քակվեին այնքան առատ՝ որ բոլոր ազգերը անխտիր պիտի ընդունեին խաղաղության և արդարության ճառագայթներ՝ իբրև սփոփանք իրենց դարավոր տառապանքին»:

«Լուսամատեան»-ի երկրորդ մասն սկսվում է Նոր Կտակարանից վերցված մի շարք պատումներով, ինչպես՝ Սուրբ Կույսի «Ավետումը», «Հիսուսի Ծնունդը», «Փախուստ Եգիպտոս», «Հիսուս ատաղձագործ հոր մոտ», «Հիսուսի լեռան քարոզը», «Բարի հովիվը», «Վերջին ընթրիքը» և այլն:

«Լուսամատեան»-ի այս երկրորդ բաժնի առաջին դրվագը ներկայացնում է սուրբ Կույսի «Ավետումը»:

Փրկագործության խորհրդի մեջ սուրբ Կույսի դերը, որպես միջնորդի, ունի էական նշանակություն. «Խորհրդավոր գիշերվան մը մեջ երկնքի դուռները բացվեցան, նման Աստուծո շրթներուն և ծնավ սուրբ Բանը, որ մանկան մը մարմին առած, քնացավ լույսի պես մաքուր կույսի մը կուրծքին՝ որ տաղավարն էր Միածնին...: Այժմ իր սիրտը լեցված էր ուրախությամբ և իր հոգին կհորդեր գետի մը պես, գալիք մեծ գարնան մտածումով: Կքալեր գլուխը բարձր, իր հոգիին մեջ սեղմած աստվածային գաղտնիքը»:

Երկրորդ դրվագը Հիսուսի ծննդի նկարագրությունն է. այն շարադրված է երկյուղած բարեպաշտության և ջերմ հավատքի սրբազան մի բռնկումով, որպես «պատմության մեծ եղելություն», ինչպես նշում է հեղինակը: «Քաղաքը լեցված էր անհաշվելի բազմությամբ և գրավված էին բոլոր իջևանները: Անոնք, Աստվածային Որդվույն երկրավոր ծնողքը, ստիպված գացին կանգ առնելու անասուններով լեցուն գոմի մը առջև, որ մոտակայքի ժայռերուն մեջ այր մըն էր: Հոն, այդ մութ նկուղին խորը, կենդանիներու անմեղ և անուշ նայվածքներուն տակ Մարիամ և Հովսեփ իջևանեցան, մին իր աստվածակիր ծոցին ծանրությամբ, մյուսը իր երազախառն խոհերով»:

«Հիսուս ատաղձագործ հորը մոտ» պատմումը գոհար մի դրվագ է Հիսուսի պատանեկության տարիների մասին: «Տարբեր էր իր տարեկիցներեն. գլխուն վերև արև և աչքերուն մեջ երկինք կար: Սիրահար էր բնության և առանձնության... Տակավին պատանի, արքայական հով մը կար իր վրա, երբ կանցներ Նազարեթի փողոցներեն... Կաճեր արմավի գեղուղեշ ծառի մը պես, աշխարհի այս պարտեզին մեջ, վայելչագեղ և թարմ... Գեղեցիկ էր ան... Ծնած էր աղքատ ընտանիքի մը մեջ և իր ձեռքերով կճարեր հանապազօրյա հացը»:

«Անառակ որդիին վերադարձը» առակը Նոր Կտակարանում Հիսուսի պատմած առակների մարգարիտն է և համարվում է մի ավետարան Ավետարանի մեջ։ Սույն առակը հեղինակի կողմից ներկայացվել է կենդանի և իրապաշտ գույներով, գեղարվեստական ինքնատիպ ձևերի մեջ, որպես ճշմարտապես զղջացող վիրավոր մի հոգու պաղատանքը առ Աստված, որ անհուն ներողամտությամբ ու սիրով սպասում է իր մեղավոր և անառակ որդու դարձին. մեղավոր և անառակ, բայց՝ որդի։ Հեղինակը իրավացիորեն նշում է, որ այս «առակին նշանակությունը բացատրության չի կարոտիր», որովհետև «քարոզական, ընկերային և հեքիաթունակ իր նկարագիրը, գերազանց ինչ մը ունի. մեղքի, զղջումի և երկնքի արքայության վերստին տիրանալու խորհրդով»։

Խիտ, բայց սպառիչ էպիտետներով է տրված «աղվես» Հերովդես արքայի կերպարը։ Նա հանդես է բերված որպես «վախկոտ, անհավատարիմ, քինախնդիր և անգութ» մի իշխանավոր, որը միաժամանակ «ավելորդապաշտ էր և կասկածամիտ, ինչպես կըլլան բոլոր զառամած չարագործները»։

Հնարավոր չէ նման մի հոդվածի սեղմ էջերում սպառիչ կերպով վեր հանել «Լուսամատեան»-ում տեղ գտած Հին և Նոր Կտակարանների բազում դրվագների բարոյական ամբողջ վեհությունն ու գաղափարական, դաստիարակչական նշանակությունը։ Հարկ է կարդալ այն ամբողջությամբ՝ հասկանալու և վայելելու համար Աստվածաշնչի այն հավիտենական ճշմարտությունները, որոնք այնքան գեղեցկորեն և հարազատությամբ մեկնաբանվել են բանաստեղծ հեղինակի ճարտար գրչով։

«Լուսամատեան»-ը հարուստ է նաև կրոնական, գրական, քարոզագիտական գեղեցիկ աֆորիզմներով, որոնք մտածման և դատողության արտահայտիչ բանդակներ են և խտացված ձևով իրենց մեջ արտահայտում են սուրբգրական այս կամ այն դրվագի ընդհանուր գաղափարը կամ ոգին։

Ստորև հանույթով ենք նշում դրանցից մի քանիսը.

«Նախանձը՝ կրակե կայծ է, կրնա այրել ամենեն ամուր սիրտերն անգամ։ Ան ուժով է մեր բոլոր կիրքերեն ավելի» («Հովսեփի ծախվիլը», էջ 32)։

«Տիրական ըլլալու գաղափարը ամենեն հրապուրիչն է մարդկային զգացումներուն, անհատները զայն կսնուցանեն Աստուծո նախանձելու աստիճան» (Նույն տեղ, էջ 31)։

«Ով որ մեծ գործի մը կլծվի՝ Աստուծմե կանչված պետք է ըլլա և ոչ թե իր անձին փափաքներեն մղված» («Մովսես և անկիզելի մորենին», էջ 41)։

«Ժողովուրդներու ճգնաժամային շրջաններուն է որ կծնին մեծ դեմքեր և պատմությունը ոսկեկապույտ մշուշներու խանձարուրով կհանդերձե զանոնք, արշալույսի մը պես բացվող մարդու ցավին և երազին վերև» (Նույն տեղ, էջ 41)։

«Ամեն տեսիլք տագնապի մը, կսկիծի մը, կիզումի մը քուրայեն միայն հոգեկան իրողություն կդառնա» (Նույն տեղ, էջ 46)։

«Իր ազատության գացող ժողովուրդին առջև ծովերը կրնան ցամքիլ և լեռները դաշտանալ» (Նույն տեղ, էջ 47)։

«Այլասերությունը ծաղիկն է հոգիին և փտած քաղաքակրթության» (Նույն տեղ, էջ 51)։

«Հոգին կերգե երբ կտառապի, որովհետև տառապելը սիրել է» («Դավիթ սաղմոսերգու», էջ 66)։

«Մեղքին մեծությունը չէ որ կգրավե ուշադրությունը, այլ զղջումին ուժգնությունը» (Նույն տեղ, էջ 67)։

«Ժողովուրդները պաշտամունք ունին անոնց նկատմամբ, որոնք իրենց համար կզոհվին, վասնզի ինչ որ արյունով կգրվի, դարերու համար է» («Մակաբայեցի եղբայրներու նահատակությունը», էջ 103)։

«Առանձնությունը հոգիով հարուստներուն համար պարգև մըն է, նախատոնակը ներքին ուժերու համակիտման» («Հիսուս ատաղձագործ հորը մոտ», էջ 117)։

«Տալը առնելու և տեսնելու կերպ մըն է, ինչպես հողը, ինչպես ծառը, ինչպես մայրը» («Հիսուսի լեռան քարոզը», էջ 137)։

«Վախը մերժումն իսկ է հավատքին և օտար՝ ամենազոր Աստուծո խորհուրդով լեցված սրտերուն» («Փոթորիկի խաղաղեցումը», էջ 149—150)։

«Խաղաղարարները մարդեր են, որոնք գիտեն պատերազմը շահել պատերազմեն առաջ» (Նույն տեղ, էջ 151)։

«Մեղքը սրբազան ծաղիկ մըն է, որուն խորքը կհանգչի մահվան մեղուն» (Նույն տեղ, էջ 154)։

«Սերը ոսկի բանալին է արքայության, իսկ զղջումը՝ գինը փրկության» («Անառակ որդիին վերադարձը», էջ 156)։

«Մարդը Աստուծո կերթա, հեռանալով հաճախ անկե, վասնզի մեղքի ամպեն միայն կարելի է տեսնել Աստուծո պատկերը



Եւ նստաւ տապանն ի լերինս Արարատայ

և արցունքի բյուրեղեն՝ փրկության ծիածանը» (Նույն տեղ, էջ 156)։

«Բարձունքներու վրա կմեղմանա փոքր կիրքերու ռոենդը, վասնզի փոքրությունները մինչև լեռ չեն կրնար բարձրանալ («Հիսուսի այլակերպությունը», էջ 167)։

«Մարդկանց հիշողության մեջ արյունով գրված ճշմարտությունները միայն կմնան» («Վերջին ընթրիքը», էջ 173)։

Հատորը եզրափակվում է մեր ազգային-եկեղեցական պատմությունից քաղված երկու արտառոց պատումներով, որոնցից առաջինն է «Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներու քարոզությունը Հայաստանի մեջ» դրվագը՝ Հայ Եկեղեցու առաջին զույգ լուսավորիչներին նվիրված։ Հեղինակը շեշտում է, որ ս. Թադեոս առաքյալը՝ «առաջին նահատակն ու լուսավորիչը Հայաստան աշխարհի», հանդիսանում է նաև «հիմնադիրը Հայ Եկեղեցվո»։ Հայ Եկեղեցու այս երկու մեծ լուսավորիչների քարոզության և նահատակության փաստով վեր է հանվում Հայ Եկեղեցու առաքելական ծագման վավերականությունը, առաքյալներ, որոնք վառեցին «ջահը Ավետարանի լույսին Հայ աշխարհի սիրտին վրա»։

Երկրորդ դրվագը Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն»-ից վերցված ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի պատմությունն է։

Եթե գրախոսվող հատորը սկսվում է աշխարհի արարչագործության լուսերգությամբ, ապա այն իր խորհրդանշական ավարտին է հասնում Լուսավորչի լուսեղեն տեսիլքով, ուր «աստեղակուռ ճամբե մը կիջներ լույսեր հագած Գալիլիացին, առտըվան ցողին մեջ լվացված ոսկիին պես... Դեմքը թաթխված ծիրանի լույսին մեջ, նըման էր արշալույսի մը որ գիշեր չունի»։ Լույսի այս հեղեղի միջից հայոց մեծ Հայրապետը լսում էր նաև Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հավերժությունը պատգամող ձայնը Աստվածորդու, որն ասում էր. «Կուգամ դնել հիմն անսասան Եկեղեցվույն Հայաստանի, սրտին վրա այս փշրված մեղքի ժայռին։ Ու մ՛ի վախնար, ո՛չ դըժոխքի ուժերը ծանր, ո՛չ ալ մաշումը դարերուն՝ պիտի կրնան ազդել անոր ուժին ու ամրության»։

«Լուսամատեան»-ը գունավոր պատկերազարդ հրատարակություն է։ Նրանում տեղ են գտել դասական հայ մանրանկարչական արվեստի լավագույն ավանդությունների օգտագործմամբ հորինված բազմաթիվ նկարներ։ Գրքի նկարները, ինչպես նաև սկզբնատառ գլխագրերը մեծ ճաշակով պատրաստել է Հայաստանի տաղանդավոր նկարիչներից Ալբերտ Յարալյանը։ Այդ նկարները 1978 թվականի հունիսին ցուցադրվեցին Ժնևում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնի սրահներից մեկում՝ արժանանալով օտարերկրացի բազում արվեստասեր այցելուների ջերմ ընդունելությանն ու գնահատանքին։

«Լուսամատեան»-ի հրատարակությունը նախաձեռնությունն է Վեհափառ Հայրապետի։

Այստեղ սակայն պետք է երախտագիտությամբ հիշել նաև ազգային բարերար Տիար Ալեք Մանուկյանի անունը, որի նյութական օժանդակությամբ հնարավոր դարձավ սույն գրքի հրատարակությունը։

«Լուսամատեան»-ը Եղիվարդի կրոնական մտորումների, ներքին ապրումների, հոգևոր փորձառության կենդանի ու պայծառ հանդիսարանն է։ Հեղինակը աստվածաշնչական դրվագները պարզ վերապատմող չէ սոսկ. հաճախ նա վեր է հանում և իմաստավորում այլաբանությունների միջոցով թելադրվող գաղափարը, ինչպես այդ երևում է աշտարակաշինության, Հովսեփ Գեղեցկի և այլ դրվագների մեջ։

Եղիվարդը 1940-ական թվականներից սկսած իր չափածո և արձակ ստեղծագործություններով հաստատվել է ժամանակակից մեր գրականության և եկեղեցական մատենագրության գանձարանը՝ դառնալով սփյուռքահայ գրողների շարքում տիրական և սիրելի դեմքերից մեկը։

Ներկա հատորը նոր, գեղեցիկ վկայությունն է նրա բազմաստեղծական անժխտելի տաղանդի՝ գրված ներշնչումի մեծ թափով, ներքին ապրումով, նյութի խոր իմացությամբ և սահուն, ճոխ ու բարձրաճաշակ պատկերավոր լեզվով, որի գլխավոր հատկանիշներն են՝ թարմությունը, հստակությունն ու հուզականությունը։ Ծայլորեն տրված են բնության տեսարանների նկարագրությունները, արևելյան տաք ու պայծառ գույներով հագեցած։

«Լուսամատեան»-ը մեր օրերի կրոնական գրականության ուշագրավ երկերից մեկն է։ Այն իր վրա կրում է մեր դարի մտածողության և գեղագիտական ճաշակի կնիքը ու կարդացվում է հարանուն հետաքրքրությամբ՝ իր հմայքի տակ սպահելով ընթերցողին։

ԱՐԹՈՒՐ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ

# ԵՐԱՆԻ՜ ՈՐ ՈՒՆԻՑԻ ԶԱՒԱԿ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

**«Երանի՜ որ ունիցի զաւակ ի Սիոն»**
(ԵՍԱՅԻ, ԼԱ 9)։

Եսայի մարգարեի այս խոսքին շատ բան կպարտին հայ ժողովուրդը և հայկական մշակույթը։

Քանի-քանի հայեր իրենց հոգևոր մխիթարությունը գտած են իրենց զավակները ընծայելով 'Նոր Սիոնին' Հայ Եկեղեցիին։

Որքա՜ն բարեպաշտ հայորդիներ, Սիոնին զավակ մը նվիրելու բախտեն զրկված ըլլալով, մխիթարություն ստացած են, փոխան զավկի՝ Աստվածաշունչ մը, Ավետարան մը, Շարական մը կամ Սաղմոսարան մը նվիրելով Հայ Եկեղեցիին։ Անոնք ջերմեռանդ իղձն ունեցած են այդպիսի բարեպաշտ զոհաբերություններով ստանալու թողություն մեղքերու և փրկություն հոգիներու։

Հայ Եկեղեցիի սպասին նվիրված հայ պատանիները ու երիտասարդները դարեդար կենդանի պահած են հայուն հոգևոր կյանքը։ Հայ Եկեղեցիին նվիրված սրբազան մատյանները, ի գին իրենց մաշումին և փճացման, հոգևոր սնունդ մատակարարած են անհամար սերունդներու։

Հայաստանյայց Եկեղեցին, մեր նորասքանչ Սիոնը, իր կեդրոնական կայքը ստացած է մեր հայրենիքի սիրտին իսկ վրա, ահա ատոր համար գրությանս վերնագիր դրի **Երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան։** Հայ Եկեղեցիի կենդանության ջուրերը հոն է որ բխեցան, և անկե ծավալելով ոռոգեցին հայության անդաստանը, բերելու համար առատ արդյունք Աստուծո կալվածին մեջ։

Էջմիածին, Հայաստանյայց Մայր Եկեղեցին և Աթոռը Ընդհանրական Հայրապետության, լուսատու փարոսը հայ հոգիին, անմեռ հույսը և անառիկ բերդը հայուն հոգևոր անկախության։ Իր ծաղկումին մեջ զորավոր, զորավոր իր տառապանքին մեջ ալ, նման զայն կառուցող Լուսավոր Հոգիին։

Խոր Վիրապ, խոր ու խավար, ուրկե ծագեցավ լույսը Հայաստան աշխարհին։ Ուխտի գացեք հոն, եթե կուզեք սորվիլ թե ինչպես լույսը կհաղթե խավարին, եթե կուզեք ներշնչվիլ զորությամբը, որ մահով հաղթեց մահվան։

Օշակա՜ն, քանի՜ եկեղեցի կրնա պարծիլ իբրև հանգստավայրը Մաշտոցի նման հոյակապ հոգևորականի մը, որ իր հանճարով և տքնությամբ ձեռք բերավ ամբողջ ժողովուրդի մը հոգեկան և մտավոր լուսավորության գերազանց գործիքը։

Հայաստան, որ իր գրկին մեջ առած է անզուգական լեռը, Արարատը սուրբ, վրան բազմած խորհրդավոր Տապանը Նոյի, մարդկային ցեղի վերածնության փրկարար տապանակը։ Ապրիլ Հայաստանի մեջ և ողջունել Սուրբ Լերան լուսապսակ գագաթը, քանինե՜ր երազած են, և մեկնած այս աշխարհեն, առանց տեսնելու իրենց երազին իրականացումը։

Եվ ահա ասդին Արագածը, Սուրբ Լեռ մը ան ալ. վասնզի անոր վերև կպլպլա Հայության Լույսի Կանթեղը, պաշտպանված լուսապաշտ Արքայի մը անբեկանելի Սուրով։

Այս երկու Սուրբ Լեռներու միջև դաշտ մը բարեբեր, որուն օրհնված բարիքները սը-

նունդ կու տան Արմենական ցեղին, կզոբացնեն զայն Հավատքի մեջ, կամրապնդեն անոր Հույսը, կծավալեն անոր Սերը: Այրարատյան բազմապտուղ դաշտը, ոռոգված հայ մշակի արդար քրտինքով, մշտընջենական օրրանն է գաղափարապաշտ հայ ժողովուրդին:

Հայուն քրտինքեն անբաժան է հայուն արցունքը. մայրական իր սերը սփռելով կհոսի Արաքսը, կբեղնավորե ընդերքը հայ հողին, որ անպակաս ըլլա արդար հացը քրիստոնյա հայու հյուրասեր սեղանեն:

Ահա այսպես է Հայաստանը, սուրբերու և սրբավայրերու երկիրը, նահատակներու և հերոսներու աշխարհը. երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան:

Եվ տակավին ի՞նչ գանձեր կան թաղված հոն՝ ավերակներուն մեջ Հայոց հին մայրաքաղաքներուն՝ Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի: Հեռուեն եկող հովեր ձայներ կբերեն Անիեն, Կարսեն և Վանեն, անոնց հազար ու մեկ եկեղեցիներեն. այդ ձայնր լսելի են հայկական ականջներու միայն. Հայաստանի հողին վրա շնչողներ հոգևին կհասկնան այդ ձայներուն իմաստը: Երանի՜ այդ ականջներուն:

Քսան և ութ դարեր առաջ մարգարեն կձայներ. «Երանի՜ որ ունիցի զաւակ ի Սիոն». իր ձայնը երգ մըն է, երգ մը անմահական. հայացնենք այդ երգը Նոր Սիոնի մեջ, և կրկնենք սրտագին. «Երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան»:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ

**(«Սիոն» ամսագիր, 1981, մայիս-հունիս, էջ 122)**

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՏԻԱՐ ՀԱԿՈԲ Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ

Հոկտեմբերի 28-ին Դետրոյտի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Հովվության, Հայ Առաքելական Ընկերակցության և Հ. Բ. Ը. Միության տեղական մասնաճյուղի նախաձեռնությամբ տեղի է ունենում մեծարանքի երեկույթ՝ նվիրված համայնքի ծանոթ ու սիրված, «եկեղեցասեր, ազգասեր ու հայրենասեր» ազգայիններից փաստաբան Հակոբ Ս. Տերտերյանին:

Տիար Հակոբ Տերտերյանը ծնվել է 1902 թվականին Խարբերդում: 1915 թվականի եղեռնից մազապուրծ ազատված, նա որոշ ժամանակ հաստատվում է Ֆրանսիայում, ուր հետևում է հաշվապահական դասընթացների և ստանում համապատասխան վկայական:

1924 թվականին Հակոբ Տերտերյանը կնոջ, երեխայի և քրոջ հետ հաստատվում է Միացյալ Նահանգներում, ուր աշխատում է և գիշերները համալսարանում հետևում իրավաբանության:

Մեծարանքի հանդիսությունը տեղի է ունենում Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու Մշակութային սրահում՝ նախագահությամբ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

Հանդիսությանը ներկա են լինում համայնքի հոգևոր և աշխարհական ներկայացուցիչներ:

Տիար Հակոբ Տերտերյանը երկար տարիներ արդյունավոր և շնորհակալ աշխատանքներ է տարել Դետրոյտի համայնքի ծոցում որպես ժրաջան անդամ Հ. Բ. Ը. Միության, Հայ Առաքելական Ընկերակցության: Նա այդ պատճառով միշտ մեծարվել ու գնահատվել է որպես համայնքի «ամենեն հարգարժան ու պատվական անդամներեն մեկը, աքանչելի խորհրդատու մը և առատաձեռն նվիրատու մը»:

Մեծարանքի երեկույթին ներկաներից շատերը ջերմորեն շնորհավորել են տիար Հ. Տերտերյանին ու իրենց սրտի անկեղծ և երախտագետ խոսքն ասել նրա կյանքի և ազգանվեր գործունեության մասին:

Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանը այս առթիվ իր արտասանած սրտի խոսքում նշել է, որ «իր բարեկամությունն ու գործակցությունը Հակոբ Տերտերյանի հետ կընդգրկե ավելի քան քառասուն տարիներու շրջան մը և զինքը կճանչնա որպես գաղութիս ամենեն հին և պատվական զավակներեն մեկը որ արժանացած է Ամենայն Հայոց Հայրապետին կողմե շնորհված «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա. կարգի շքանշանին: Հ. Տերտերյանը ջերմեռանդ հայ մըն է, տիպար հայ մը, որ իբր գաղթական ինքզինքը նետած է արևմտյան կիսագունդի այս խաղաղ ափերը և շնորհիվ իր ուշիմության, ձեռներեցության և համառ աշխատանքի հասած է բարեկեցիկ դիրքի»:

Տիար Հակոբ Ս. Տերտերյանը Մայր Աթոռի բարերարներից և Ս. Էջմիածնի հավատավոր զավակներից մեկն է: Նա Խորվիրապի վանքի վերանորոգության բարերարներից մեկն է և այդ ազնիվ նպատակի իրագործման համար նվիրել է երեսուն հազար դոլլար:

Մեծարանքի հանդիսության ընթացքում Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը խոսք առնելով, ի մասնավորի հայտարարում է այս ուրախ առիթով Խորվիրապ վանքի նորոգության ի նպաստ իր ըրած նվիրատվության համար, տիար Հակոբ Տերտերյանը

արժանացած է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակին և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանին:

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը ընթերցում է հայրապետական հետևյալ կոնդակը, որն ունկնդրվում է հոտնկայս և բարեպաշտ երկյուղածությամբ:

## ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԷՐՏԷՐԵԱՆԻՆ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈ՜ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՜ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

**Տիթրոյթ**

**Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ մեր ժողովուրդի ծոցին մէջ կան ազնուասիրտ անձնաւորութիւններ, որոնք սատար կը հանդիսանան մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և բազմադարեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պայծառութեան:**

**Դուք, յարգարժան Տիար Տէրտէրեան, մեր ազգի այդ ազնուասիրտ զաւակներէն մէկն էք որ տարիներ շարունակ Ձեր հոգատար վերաբերումով և նիւթական զոհողութիւններով կը նպաստէք մեր Սուրբ Եկեղեցւոյ բարեզարդման, յատկապէս երևուն հազար տոլլարի Ձեր վերջին նուիրատուութեամբ, որ կը հանդիսանայ Ձեր առատաձեռն մասնակցութիւնը Խոր Վիրապի պատմական վանքի ամբողջական վերանորոգման և բարեզարդման:**

**Ջերմապէս գնահատելով Ձեր բարերարութիւնները յօգուտ մեր Եկեղեցիին և ժողովուրդին, այլև սիրով ընդառաջելով Միացեալ Նահանգներու Արևելեան թեմի բարեխնամ Առաջնորդ Գերշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան, այսու Մեր կոնդակով Ձեզ կը պարգևատրենք «Սուրբ Գրիգոր Լուսավորչի» Ա կարգի շքանշանով, մաղթելով որ զայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար, արևոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ:**

**«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաջէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:**



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 18 մարտի
1980 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1012

Հանդիսության ավարտին տիար Հակոբ Ս. Տերտերյանը ջերմ շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Նրա շնորհավորական կոնդակի և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրման համար, և բոլոր նրանց, որոնք կազմակերպել էին ի պատիվ իրեն մեծարանքի այդ հանդիսությունը:

Մեծարանքի սույն հանդեսն ավարտվում է Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

# ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՊՐՈԿՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՂԹԵՐԸ ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Ընդհանրական Եկեղեցու պատմության և հայրաբանական գրականության մեջ, Դ—Ե դարերում, կարևոր տեղ են գրավում հավատի դավանության տեսակետից աստվածաբանական և քրիստոսաբանական հարցերի մասին գրված այն թղթերը, որոնք պատմական ու վճռական նշանակություն են ունեցել ուղղափառության պաշտպանության ի նպաստ հերետիկոսական մոլորությունների դեմ Եկեղեցու դավանաբան մեծ հայրերի մղած գաղափարական-ջատագովական պայքարում:

Դ—Ե դարերում մանավանդ, եկեղեցու ծոցում հառաջ եկած հերետիկոսությունները և դրանց պատճառով ստեղծված երկպառակություններն ու ներքին պայքարները ավելի «սոսկալի, ցավալի ու ծանր են եղել» Եկեղեցու կյանքի և առաքելության համար քան պետական հալածանքներն ու հեթանոսական, հրեական կրոնների հակառակությունները, քրիստոնեական կրոնի դեմ:

Դ դարի առաջին քառորդում 313 թվականի Միլանոյի կայսերական ծանոթ հրովարտակով Հունա-Հռոմեական կայսրության սահմաններում, Եկեղեցու արտաքին դրության մեջ ստեղծված հիմնական փոփոխությունը, լիակատար հնարավորություն է ընձեռում Եկեղեցու հայրերին իրենց հոգու բոլոր ուժերը կենտրոնացնելու Եկեղեցու ներքին հարցերի լուծման վրա, հերետիկոսությունների դեմ նրանց մղած դավանաբանական պայքարում:

Եկեղեցու գոյության և առաքելության դեմ Ա—Դ դարերում կայսրության մղած պետական հալածանքները չկարողացան ջլատել Եկեղեցու ներքին կենսունակությունը: Եկեղեցին շարունակում էր ապրել, կազմակերպվել և ամրապնդվել հոգևոր, լիակատար կյանքով:

Դժբախտաբար, սակայն, ստեղծված նոր ու նպաստավոր այդ պայմաններում, Եկեղեցու հանգիստ կյանքն ու ներքին խաղաղությունը, պետական հալածանքների դադարումից հետո, էլ ավելի խանգարվեցին:

Սկիզբ է առնում Եկեղեցու կյանքում, դավանաբանական հողի վրա ավելի վըտանգավոր ու պառակտողական մի նոր շրջան: Դա Դ—Ե դարերում առաջ եկած աստվածաբանական - քրիստոսաբանական բուռն վեճերի ժամանակաշրջանն էր, որը ցնցեց Եկեղեցու խաղաղ կյանքը, մեծամեծ վնասներ հասցնելով նրան:

Դավանաբանական այս պայքարների հետևանքով, Եկեղեցու կյանքում ուղղափառության դեմ նո՛ր էր սկսվում հերետիկոսների մղած «իսկապես նշանավոր և էական կռիվը յուր արդյունավետությամբ և յուր առանձնահատկությամբ լարված, վերին աստիճանի ուժգին, կենդանի և կա-

րող մի շարժում աստվածաբանական մտքի»[1]:

Դավանաբանական-հակաճառական այդ պայքարում «քրիստոնեական հանճարը առանձին ուժով երևան է գալիս աստվածաբանական գիտության զանազան ճյուղերի մեջ, գլխավորապես քրիստոնեության բուն էության վրա կենտրոնանալով»[2]:

Դ դարի առաջին քառորդին Եկեղեցին թևակոխում է իր առաքելության և գործունեության մի նոր շրջանը: Եկեղեցու արտաքին դրության մեջ ստեղծված նոր կացությունը կատարյալ հնարավորություն է տալիս նրան ազատ ու բազմակողմանի ծաղկման, իսկ հերետիկոսների դեմ մղած կռիվները, հարուստ նյութ են ընձեռում նրան իր հետագա աշխատանքների համար:

Այս շրջանի յուրահատկությունը պետք է նկատել երեք տիեզերական ժողովների՝ 325 թվականին Նիկիայի, 381-ին՝ Կ. Պոլսի, 431-ին Եփեսոսի՝ գումարումները:

Դ դարի առաջին քառորդին կայսրության մեջ քրիստոնեությունը դառնում է տիրապետող ուժ, քաղաքացիության իրավունք է ստանում, ամրապնդում իր դիրքերը, կազմակերպում նվիրապետական, ծիսական իր կարգը, հարձակման անցնում գաղափարական հողի վրա այլ կրոնների և փիլիսոփայական սիստեմների դեմ, վայելելով նաև քաղաքական իշխանության աջակցությունն ու հովանավորությունը:

Ահա այս շրջանում է որ Եկեղեցին կարողանում է կայսերական հրովարտակներով իրավունք ձեռք բերել տիեզերական ժողովներ գումարելու, եկեղեցական միասնությունն ու հավատի և դավանության միությունն ամրապնդելու, ուղղափառությունը պաշտպանելու և ընդհանուր պարտադիր կանոններ սահմանելու բոլոր Եկեղեցիների գործունեության և առաքելության համար:

Տիեզերական ժողովները հրավիրում էին կայսրերը և նախագահում նիստերին:

Սույն ժողովներում սահմանված կանոնները ստացան պետական-քաղաքացիական օրենքի ուժ և պարտավորություն, ինչպես էին պետական օրենքները: Տիեզերական ժողովներում ընդունված «Հավատո Հանգանակների» և սահմանված կանոնների դեմ որևէ հակառակություն և ըմբոստություն համարվում էին հանցագործություն, և ենթակա՝ պատժի:

Այս իմաստով կայսրության մեջ հանդես եկող հերետիկոսությունները, ուղղափառ դավանությունից շեղումները համարվում էին պետական հանցագործություն: Կայսրը գլուխն էր քաղաքական իշխանության և կրոնական վերին կարգադրիչը հավատքի և եկեղեցական գործերի: Եկեղեցու ընդունած և պաշտպանած հավատից տարբեր մտածելու իրավունք չուներ ոչ մեկ հավատացյալ: Եկեղեցի և պետություն միասնական էին[3]:

325 թվականին, Կ. Պոլսի արվարձան Նիկիայում գումարվում է Ա տիեզերական ժողովը, մասնակցությամբ 318 հայրապետների, որոնք ներկայացնում էին այդ օրերին ընդհանրական, առաքելական, մեկ ու սուրբ Եկեղեցին:

Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից Հայ Եկեղեցին հետաքրքրությամբ հետևել է աստվածաբանական ու քրիստոսաբանական բոլոր այդ վեճերին, երբեմն մասնակցել է անձամբ և իր ներկայացուցիչները ուղարկել տիեզերական ժողովներին և կամ երբ չի մասնակցել, գրավոր կերպով իր համաձայնությունը հայտնել այդ ժողովներում ընդունված հավատքի դավանություններին և սահմանված կանոններին:

Նիկիայի առաջին տիեզերական ժողովին մասնակցել է 325 թվականին Ս. Լուսավորչի կրտսեր որդին Արիստակեսը չորս այլ ներկայացուցիչներով, որպես պատգամավորները «ի Մեծաց Հայոց»[4]:

Նիկիայի ժողովում դատապարտվում է Արիոսի մոլորությունը, որը ուրանում էր Քրիստոսի աստվածությունը[5]:

Նիկիայի ժողովից հետո Արիստակես եպիսկոպոսը վերադառնում է Հայաստան, Վաղարշապատ «արժանահաւատ բանիւ, և քսան կանոնեալ գլխովք ժողովոյն, գայ հանդիպի հօրն և արքային ի Վաղարշա-

---

[1] **Պրոֆ. Ն. Սագարդա**, Հույն-Արևելքի հին աստվածաբանական գիտությունը յուր ծաղկման շրջանում (IV—V դ.) ռուս. թարգմ. Արտակ վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռի, 1910, էջ 3:

[2] Նույնը, էջ 3:

[3] Հայոց եկեղեցական իրավունքը Ա. գիրք, աշխատություն Ն(երսես) Վ.(արդապետ) **Մելիք-Թանգյանի**, 1903, Շուշի, էջ 141:

[4] Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 114—149, «Կանոնք Նիկիական գլուխք Ի. և «Նիկիայի ժողովի կանոնախումբ, «Ծանոթագրություն»ներ, նույնը, էջ 560—568: Նաև՝ **Սեբեոս**, Պատմություն ի Հերակլ, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 128 և Ընդհանուր եկեղեցական պատմություն, **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, 1908, էջ 254—268, «Նիկիո ժողովը»:

[5] Արիոսականության մասին տես Ընդհանուր եկեղեցական պատմություն, նույնը, էջ 245—254:

պատ քաղաքի: Ընդ որ ուրախացեալ սըրբոյն Գրիգորի, սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»[6]:

Հայ Եկեղեցին չի մասնակցել 381 թվականին Կ. Պոլսում գումարված երկրորդ տիեզերական ժողովին, այդ օրերին մեր երկրում տիրող քաղաքական խառն, աննըպաստ պայմանների բերումով: Սույն ժողովում դատապարտվում է Կ. Պոլսի Մակեդոն պատրիարքի մոլորությունը, որը ուրանում էր Սուրբ Հոգու աստվածությունը:

«Երկրորդ տիեզերական ժողովին մեջ Հայոց Եկեղեցին ներկայացուցիչ չունեցավ, սակայն, ուղղակի տեղեկություն ըստացավ անոր որոշումներուն նկատմամբ, և ըստ ամենայնի համակերպեցավ և միացավ անոր հոգվույն և անոր դավանական կանոններուն»[7]:

431 թավկանին, Եփեսոս քաղաքում գումարվում է երրորդ տիեզերական ժողովը, որը քննում և դատապարտում է Կ. Պոլսի Նեստոր պատրիարքի մոլորությունը:

Հայ Եկեղեցին չի մասնակցել նաև Եփեսոսի ժողովին: 428 թվականին կործանվել էր արշակունիների թագավորությունը, Ս. Սահակ Պարթևը որպես Հայոց կաթողիկոս աթոռազրկվել էր պարսիկների կողմից և աքսորվել Տիզբոն, Էջմիածնում տեր ու տնօրեն էին դարձել պարսիկների կողմից դրածո ասորի հակաթոռ կաթողիկոսներ, որոնք անխղճորեն կողոպտում էին Հայ Եկեղեցուն և ժողովրդին:

Նեստորը ծննդով գերմանիկցի, 428 թվականին ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք: Նա Անտիոքի աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու (350—428) աշակերտն էր: Նրան համարում էին իր հռետորական, քարոզչական բացառիկ կարողությունների համար մի նոր Ոսկեբերան:

Նեստորը պայքարելով արիոսականների դեմ, նույնպես մերժում է Քրիստոսի աստվածությունը. «Քրիստոսի աստվածության և Բանին մարդեղության խորհուրդը պաշտպանելով, և Քրիստոսի ճըշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ ըլլալը բացատրելով, սկսավ ըսել թե Աստված ի մարդն բնակյալ է միայն և անմասն է ամեն մարդկային բնության գործերն, որով երկու տարբեր անձեր կենթադրեր ի Քրիստոս և Մարդեղությունն ու միավորությունը ջնջած կըլլար, փրկագործ տնօրենությունները ալ միայն մարդո վերագրելով, պարզապես մարդադավան սկզբունք մը քարոզած կըլլար»[8]:

Այս մոլոր վարդապետության հիման վրա Նեստորը մերժում էր նաև սուրբ կույս Մարիամին «Աստվածածին» (Թեոտոկոս) անվանել, այլ միայն «մարդածին» կամ «Քրիստոսածին»: «Ամբարիշտն Նեստոր և Հրեական իմացեամբ հետևեալ, հայհոյեաց զամենասուրբ կոյսն մարդածին լինել ոչ աստուածածին»[9]:

431 թվականին գումարված Եփեսոսի տիեզերական ժողովը, Սուրբ Կյուրեղ Աղեքսանդրացի հայրապետի գլխավորությամբ դատապարտում է Նեստորի մոլորությունը և նրան աթոռազրկում:

Ժողովին ներկա 200 Հայրապետները հավատարիմ մնալով «քրիստոսաբանական նախկին դրությանը, ինչ որ Աթանասինն էր և Կապադովկիացիներինը», հայտարարում են որ Քրիստոսի անձի մեջ «աստվածային և մարդկային բնություններր միացած են անայլայլելի և անխառն կերպով և կազմում են մի անձնավորություն»:

Ժողովը այս առթիվ հռչակում է «Մի է բնութիւն Բանին Մարմնացելոյ» և կամ «Մի բնութիւն՝ յերկուց բնութեանց» բանաձևը[10]:

Եփեսոսի ժողովից հետո, դատապարտված Նեստորի տեղ Կ. Պոլսի պատրիարք է ընտրվում Մաքսիմիանոսը: Ժողովում ընդունված «Հավատո Դավանության» բանաձևերը և վեց գլուխ կանոնները և վըճիռները[11] «հոգածությամբ ամեն կողմ տարածվեցան և Հայոց Հայրապետության ալ հղվեցան»[12]:

432 թվականին Ս. Սահակի և Ս. Մեսրոպի կողմից «ուսման աղագաւ» Բյուզանդիոն ուղարկված մեր թարգմանիչ վարդապետները՝ Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Պաղնացին, Ղևոնդ Վանանդեցին, Եզնիկ Կողբացին, Կորյունն ու Արձանը իրենց հետ Հայաստան բերեցին Եփեսոսի

---

[6] Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 242:

[7] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Հայոց Եկեղեցի, 1912, Կ. Պոլիս, էջ 33:

[8] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում Ա. հատոր, Ա. մաս, Բեյրութ, 1959, էջ 310:

[9] Հայոց եկեղեցական իրավունքը, նույնը, էջ 172—173: Ընդհանուր Եկեղեցու պատմություն, նույնը, էջ 294: Նաև **Խորենացի**, նույնը, ԿԱ, էջ 352:

[10] Ազգապատում, նույնը, էջ 311: **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 632:

[11] Կանոնագիրք հայոց, նույնը, էջ 273—276 և 601—602:

[12] Ազգապատում, նույնը, էջ 311:

ժողովի որոշումներն ու հավատո դավանության վերոհիշյալ բանաձևերը և հանձնեցին Ս. Սահակին և Ս. Մեսրոպին:

Մեր թարգմանիչ վարդապետները իրենց հետ բերեցին նաև Աստվածաշունչի հունարեն Եոթանասնից թարգմանության մի ընտիր օրինակ, ինչպես նաև Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու և Կ. Պոլսի նորընտիր Մաքսիմիանոս պատրիարքի թղթերը Ս. Սահակին և Ս. Մեսրոպին հասցեագրված, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն նաև Հայաստանում առաջքն առնելու համար նեստորական քարոզությունների: Փաստ է որ նեստորականները հալածվելով կայսրության մեջ, ազատ մուտք էին գործել պարսկական սահմանները:

Պարսից արքունիքը քաղաքական նպատակով քաջալերում և հովանավորում էր նեստորականներին որպես «հակահունական» տարրերի:

432 թվականի ամռանը մեր թարգմանիչ վարդապետները Կ. Պոլսից վերադարձան հայրենիք և «գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ և մատուցին ըզթուղթսն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով և զստոյգ օրինակս գրոց»[13]:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը Աշտիշատում այս առթիվ հատուկ ժողով են հրավիրում «ընդհանուր եկեղեցվո համամիտ վճիռը հարգելով, և իրենց ալ ունեցած ուղղափառ վարդապետության վրա հիմնվելով, մերժելով մերժեցին նեստորական մոլորությունը»[14] և հրամայում են «զկամակոր հերձուածողսն (նեստորականներին) ի բաց հալածել յիւրեանց աշխարհէն»[15]:

Ըստ Կորյունի վկայության, Եփեսոսի ժողովից հետո որտեղ դատապարտվեցին նեստորականները, «Հայաստան աշխարհում երևացին Թեոդորոս[16] անունով մի հռոմ մարդու ստապատում գրքերը, դատարկաբան ավանդությունները»[17]:

Նույն հարցի մասին ժողովից հետո, նաև «սուրբ եկեղեցիների սինհոդոսական հայրապետները գրելով իմաց տվին ճշմարտապես փառաբանիչներ Սահակին և Մաշտոցին: Եվ նրանք ճշմարտասեր ջանքով մեջտեղից վերացրին այն (նեստորականներին) աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպեսզի ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը»[18]:

Ըստ Հայ Եկեղեցու Նիկիայի, Կ. Պոլսի և Եփեսոսի տիեզերական ժողովներում ընդունված հավատո դավանությամբ և սահմանված կանոններով վերջ գտան ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ աստվածաբանական և քրիստոսաբանական բոլոր հիմնական վեճերն ու վիճաբանությունները:

«Առանց հիմնական պատճառի չէ որ Հայոց Եկեղեցին իրավունք ունեցավ Եփեսոսի ժողովը (431) իբր վերջին տիեզերական ժողով նկատել և առաջ չանցնիլ, որովհետև անով վերջացավ բոլոր գլխավոր եկեղեցիներու համակարծիք համամտության շրջանը»[19]:

Հայ Եկեղեցին իր պատմության ողջ ընթացքում վճռականորեն հաստատ մնաց վերոհիշյալ երեք տիեզերական ժողովների դավանական որոշումների վրա, «հնավանդ եկեղեցիներու ընդունած սկզբունքով... Հնավանդ եկեղեցիներ միշտ տիեզերական ժողովներու հեղինակության դիմեցին, քանի անգամ որ պետք ունեցան հավատքի վերաբերյալ կետի մը շուրջը ծագած դժվարությունը լուծելու և ճշմարտությունը հաստատելու: Երեք տիեզերական ժողովներով վերջացել էին «հիմնական հավատալիքները, որ քրիստոնեական կրոնքին իսկությունը և յուր էական խորհուրդը կկազմեն, այսինքն, Երրորդություն, Մարդեղություն և Փրկագործություն[20]:

434 թվականին Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի վրա է բարձրանում Պրոկղ պատրիարքը:

Դատապարտված նեստորականների բուռն գործունեությունը Եփեսոսի ժողովի և նրա դավանական բանաձևերի դեմ, մանավանդ Ասորիքում և Պարսկաստանում, նորից լուրջ անհանգստություն է պատճառում Պրոկղին և Մելիտինե քաղաքի միտրոպոլիտ Ակակիոսին, որոնք նույնպես այդ առթիվ մասնավոր թղթեր են գրում 435 թվականին Ս. Սահակին և Ս. Մեսրոպին:

Եփեսոսի ժողովից հետո Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու գրած թուղթը Սուրբ Սահակին մեզ չի հասել. «իսկ Պրոկղի և Ա-

---

[13] **Մովսես Խորենացի,** նույնը, ԿԱ, էջ 358:

[14] **Օրմանյան,** նույնը, էջ 311:

[15] Սոփերք Հայկականք, ԺԱ, Վենետիկ, 1854, էջ 27:

[16] Խոսքը այստեղ Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու մասին է, հեղինակ բազմաթիվ գրքերի: Նա 553 թվականի Կ. Պոլսի ժողովում դատապարտվեց, որպես վտանգավոր հերետիկոսի:

[17] **Կորյուն,** Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 135:

[18] Նույնը, էջ 135: Սոփերք Հայկականք, նույնը, էջ 27:

[19] **Օրմանյան,** նույնը, էջ 103:

[20] Նույնը, էջ 104:

կակիոսի թուղթերում պատճենները ոչինչ»[21], այն նշանավոր դավանաբանական ժողովածուում, որ Գիրք թղթոցն է:

Գիրք թղթոցի 93 դավանաբանական թղթերի Ա—Ե թղթերը ժամանակի հայ և հույն մեր հայրապետների միջև փոխանակված թղթերի պատճեններն են[22]:

«Սահակ և Մեսրոպ պարտուպատշաճ կերպով պատասխանեցին Պրոկղի, ընդարձակ կերպով բացատրելով իրենց դավանությունը» այն թղթի մեջ որը կոչվում է «Պատասխան թղթոյն Պրոկղի երանելոյ, ի Սահակայ և ի Մաժդոցէ»[23]:

Սույն թղթում Հայ Եկեղեցու սուրբ երկու մեծ վարդապետները «միանգամայն կըհայտնեն թե՛ իրենց կողմերը ազատ են Նեստորական մոլորութենէն», և թե՛ «առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չև է հասեալ, այլա թէ իցէ ծածկեալ է ժանգոյ աղտեղութենէ» և եթե երևան գա «ի հարկէ ջան լիցի մեզ խլել զխոչն և զգայթակղութիւն զայն ի միջոյ ի բաց կորուսանել, զի միաբանութիւն որպէս ի ձերում միջի փառաւորի, և զմեզ ի նմին հաւասարութեան փառաւորութիւն առ Աստուած հասուցանել արժանի արասցէ»[24]:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը Ակակիոս միտրոպոլիտին գրած իրենց պատասխան նամակում «նույն հայտարարությունը կըրկնեցին»[25]:

«Նեստորականությունը թեև բազմաթիվ փորձեր է կատարել Հայաստանում հաստատվելու, բայց որևէ հաջողության չի հասել և սկզբից ևեթ վճռական հակահարված է ստացել» (Լևոն Տեր-Պետրոսյան, Հայ-ասորական հարաբերությունների մեծագույն հետազոտողը, «Էջմիածին», 1980 փետրվար-մարտ, էջ 65):

Օրմանյան սրբազանը հայ և հույն Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված վերոհիշյալ դավանաբանական թղթերի առթիվ գրում է. «Հայոց Հայրապետի այդ հայտարարությունները մեծապես գնահատվեցին մանավանդ Պրոկղի կողմէն, և իբր կարևոր մի վկայություն ընկալվեցավ ու պահվեցավ հայոց եկեղեցվույն հեղինակությունը, այնպես որ 553-ին գումարված Կ. Պոլսո ժողովին մեջ, որ Եբիբաս Գլուխները դատապարտվեցան, հիշյալ թուղթն ալ իբր ուղղափառության փաստ հանդիսավորապես կարդացվեցավ Կյուրեղ Աղեքսանդրացիի թուղթեն անմիջապես հետո»[26]:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի վերոհիշյալ կարևոր դավանաբանական թղթերը համարվում են Ե դարի առաջին հիսնամյակի հայ դավանաբանական գրականության և մտքի հանդիսարանը, որոնք առաջնորդ և օրինակ են հանդիսացել հետագա դարերում Հայ Եկեղեցու դավանաբանների համար մեծ վեճերի ընթացքում: «Մեր եկեղեցական գրականության ամենահարուստ ճյուղերից մեկն է հանդիսանում դավանաբանական գրականությունը»[27]:

Հայ եկեղեցական մատենագրությունը հարուստ է դավանաբանական այնպիսի գրականության գանձերով:

Գրականագետ Մանուկ Աբեղյանը հայ դավանաբանական գրականությունը համարում է «մաքառման ու պայքարի մի գրականություն», ոչ միայն ի պաշտպանություն Հայ Եկեղեցու ուղղափառության, այլ նաև հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության և գոյության պահպանման տեսակետից հայրենասիրական «մաքառման ազգային մի գործ»[28]:

Պրոկղ պատրիարքը Ե դարի հիսնական թվականների հույն Օրթոդոքս Եկեղեցու հմուտ աստվածաբաններից և հայտնի քարոզիչ հռետորներից մեկն է համարվում և արժանավոր հաջորդը Ոսկեբերանի Կ. Պոլսի Աթոռի վրա:

Նա 434—444 թվականներին հակա-նեստորական պայքարի բուռն շրջանում եղել է Կ. Պոլսի Աթոռի պատրիարքը և թողել է աստվածաբանական - քրիստոսաբանական և քարոզչական արժեքավոր վաստակ:

Նրա պատրիարքության օրով, և նրա անմիջական նախաձեռնությամբ Ս. Հովհան Ոսկեբերանի աճյունները աքսորավայրից փոխադրվեցին Կ. Պոլիս և համաժողովրդական հանդիսությամբ և մեծ թափորով տարվեցին և ամփոփվեցին մայրաքաղաքի Առաքելոց եկեղեցում[29]:

Պրոկղը նաև համարվում է Նեստորի մոլորության դեմ հակաճառող եկեղեցու

---

[21] **Օրմանյան**, Ազգապատում, նույնը, էջ 312:

[22] Գիրք թղթոց. Մատենագրություն նախնյաց, Թիֆլիս, 1901, էջ 1—21:

[23] Նույնը, էջ 9—13: **Օրմանյան**, Ազգապատում, նույնը, էջ 312:

[24] Գիրք թղթոց, նույնը, էջ 13:

[25] Նույնը, «Պատասխանի տեառն Սահակայ թղթոյն Ակակայ», էջ 16—18: **Օրմանյան**, նույնը, էջ 312:

[26] **Օրմանյան**, Ազգապատում, նույնը, էջ 313:

[27] Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Հակաճառութիւն..., Մայր Աթոռ, 1908, էջ 6:

[28] **Մանուկ Աբեղյան**, նույնը, էջ 80:

[29] Հովհան Ոսկեբերանի կենսագրության մասին կարդալ «Էջմիածին» ամսագիր, 1973, № Ա, էջ 48, № 4, էջ 31:

դավանաքան նշանավոր հայրապետներից մեկը: Նա ջերմորեն և կրքոտությամբ ի ներկայության «մարդադավան» Նեստորի, իր քարոզի մեջ Կ. Պոլսում պաշտպանել է սուրբ Կույսի Աստվածածին լինելու հանգամանքը: Պրոկղը Կ. Պոլսում Աստվածածնի մասին ուղղափառ մտքով արտասանել է նշանավոր ջատագովական մի շարք ճառեր:

Պրոկղի մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ են գրավում նրա 27 քարոզները, որոնք արտասանվել են Կ. Պոլսում տերունական մեծ տոների առիթով, ինչպիսիք են Քրիստոսի ծնունդը, թլփատությունը, պայծառակերպությունը, Երուսաղեմ մուտքը, չարչարանքն ու թաղումն և հարությունը:

Պրոկղի քարոզները, ճառերն ու թղթերը ունեն նաև դավանաբանական բովանդակություն, և ընդհանրապես նվիրված են Մարդեղության խորհրդին[30]:

Պրոկղ պատրիարքի մատենագրական վաստակից մեզ հասել են հայերեն թարգմանությամբ մի շարք թղթեր, ճառեր «կամ հատվածք ճառից... թարգմանությամբ նախնեաց, հորոց ոմանք թարգմանչաց դարուն կամ գրչին կրնան վերաբերիլ, ոմանք ալ արծաթի դարու մեր դպրության»[31]:

Պրոկղի հայերենի թարգմանված մատենագրական վաստակի մեջ հիշվում են.

1. Ներբողեան ի ծնունդն Քրիստոսի և ի նախավկայն սուրբ Ստեփանոս, որ այսօր տոնի. «երևելի արեգականն երկնիւք ծագելով»:

2. Ներբողեան ի սուրբ աւետարանիչն Ղուկաս. «Մերձակայ տօնիս խորհուրդ արդեամբք գերազանցեալ քան զբան, ընդդէմ միմեանց՝ զգործ և զբան տեսանեմք»:

3. Խօսք ասացեալ ի Կ. Պօլիս, ի նստելն Նեստորի ի մեծ եկեղեցւոջն ի Կ. Պօլիս՝ թէ աստուածածին է սուրբ կոյսն Մարիամ, և ծնեալն ի նմանէ՝ ոչ աստուած մերկ և ոչ աստուած սոսկ, այլ Էմմանուէլ, այս է Աստուած և մարդ յերկուց բնութեանց միացեալ՝ առանց խառնակութեան և առանց փոփոխման, և մի Տէր Յիսուս Քրիստոս»:

4. Խօսք ասացեալ ի խորհուրդ Տէրունական խաչին. «վասն այսորիկ կոչեմք զնա թագաւոր, քանզի զնա տեսանեմք ի խաչ ելեալ, և թագաւորի է փառք, յորժամ ի վերայ զօրաց իւրոց մեռանիցի»:

5. Յաւետիս սուրբ Աստուածածնին, «Ծընաւ ինձ դարձեալ լոյսն... ընդ ծնունդն ցնծամ, զի ծագեաց այսօր արեգակն և որ յառաջագոյն ծագեալն է՝ ծածկեաց, փրկեցայ ի խաւարէն և ոչ տանիմ ճառագայթիցըն»:

6. Ի մեկնութենէն Զաքարիայ ի բերան ճրագաց աշտանակի ի խորհուրդ Կուսին. «Եւ զարթոյց զիս հրեշտակն Տեառն»:

7. Յաստուածայայտնութիւն, «Քրիստոս աշխարհի յայտնեցաւ և զանզարդ աշխարհս»:

8. Ի Մկրտութիւն Քրիստոսի:

9. Ի. Ծնունդ Յովհաննու Մկրտչի:

10. Ներբողեան ի սուրբ Յովհան Ոսկեբերան:

11. Յաղագս կաղանդաց:

12. Թուղթ առ Սահակ Հայրապետ և առ սուրբն Մածոց. թուղթ Ա. «որոց հայկական թարգմանությանն դեռ հանդիպած չենք: Միայն հասած է երկրորդ նամակ մը նույն Պրոկղեն ուղղյալ առ երկոսին սրբասուն և աստվածարյալ հարս, հայերեն դըպրութեանց»[32]:

Պրոկղի մատենագրական վաստակի հայերեն թարգմանության մասին տես «Կնիք հաւատոյ» յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց» ժողովածուն[33]:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում կան երկու հատվածներ Պրոկղի վաստակի հայերեն թարգմանություններից:

Նորին ի թղթոյն, որ առ սուրբն Սահակ Հայոց Հայրապետն, Պրոկղի «Հաւատամք յԱստուածն Բան՝ յանեղծն, յանարատն, թէ առանց անցից մարմնացաւ և սրբութեամբ Հաւատամք»[34]:

Բ հատվածը, էջ 356—357, որի վերնագիրն է «Երանելոյն Պրոկղի. եպիսկոպոսի Կիւլիկեայ՝ ի խօսիցն, որ յԱնթիմեայ եկեղեցւոջն է, «ոչ երբեք ախտ առանց մեղաց»[35]:

Պրոկղի մատենագրական վաստակից հայերեն թարգմանության հատվածներ կան նաև Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» մեջ[36]:

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան

---

[30] Պրոկղի մատենագրական վաստակի մասին տես **Johannes Quasten**, Patrology, vol. III, *էջ 522—523*, The Oxford Dicchionary of the Christian church, 1977, Oxford University, *էջ 1129—1130*։

[31] Մատենադարան հայկական թարգմանությանց նախնյաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 662:

[32] Նույնը, էջ 662—666:

[33] Հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), Ս. Էջմիածին, 1914, էջ LIII—LIV:

[34] Նույնը, էջ 109—112:

[35] Նույնը, էջ 356—357:

[36] Տիմոթէոսի... Հակաճառութիւն... Ս. Էջմիածին, 1908, էջ 23—34:

ձեռագրաց Մատենադարանում, կան Պրոկղ պատրիարքի ճիշյալ ներբողյանների, ճառերի, քարոզների և թղթերի հայերեն թարգմանություններ[22]։

## Ս. ՍԱՀԱԿԻ ԵՎ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ՝ ՊՐՈԿՂ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՈՒՂՂԱԾ ՈՒՂՂԱՓԱՌ «ՀԱՎԱՏՈՅ ԴԱՎԱՆՈՒԹԵԱՆ» ԹՂԹԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾ

### Սրբոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի և սուրբ վարդապետին Մեսրոբայ՝ ի թղթոյն, որ առ երանելին Պրոկղ պատասխանի

Այլ մեք հաւատամք ի մի Աստուած՝ Հայր, Արարիչ երկնից և երկրի՝ երևելեաց և աներևութից։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ ի Միածին Որդին Աստուծոյ, այսինքըն՝ էութիւն յէութենէ, էութիւն ծնեալ, որով ամենայն եղև. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ՝ ծնեալ, և ո՛չ արարեալ, հակակից Հաւր. որ վասն մեր էջ և մարմնացաւ, յանձն առ զչարչարանս, թաղեցաւ, յարեաւ յերրորդ աւուր, ել յերկինս և գայ դատել զկենդանիս և զմեռեալս։ Հաւատամք և ի Սուրբ Հոգին։ Իսկ որք ասենն՝ էր երբեմն, զի ո՛չ էր, և մինչչև ծնեալ էր՝ չէր, և ասեն՝ ի չէութենէ եղև և յայլմէ իմեմնէ և զաւրութենէ, և կամ եղծանելով և փոփոխելով, զայնպիսիսն նզովե՛մք։ Զի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ Հոգին Սուրբ։ Հոգի Աստուծոյ Հոգի Սուրբ՝ կատարեալ, **բարեխաւս, անստեղծ, անեղծ, որ խաւսեցաւ** օրինաւք և մարգարէիւք և առաքելովք. որ էջ Յորդանան։ Եւ վասն մարմնացուցութեան Որդւոյն այսպէս հաւատամք, զի էառ յանձն լինել մարդ կատարեալ՝ յԱստուածածին Կուսէն Մարիամայ, Սրբով Հոգւով՝ առեալ շունչ և մարմին, ճշմարտիւ և ո՛չ կարծեաւք։ Զի այսպէս եկն ի կատարել փրկել զմեր մարդկութիւնս, և ճշմարտիւ չարչարեցաւ. ո՛չ թէ ինքն պարտ էր չարչարանաց, այլ վասն մեր յանձն էառ զչարչարանս, և յերրորդ աւուր յարեաւ, և յերկինս համբարձաւ և ընդ աջմէ Հաւր նստաւ, և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։

Այլ առ կատարման հաւատոց՝ հաւատամք ի մի մկրտութիւն ապաշխարութեան, և մի կաթուղիկէ եկեղեցի. և ի յարութիւն մեռելոց, և յարքայութիւնն երկնից և ի դատաստանսն յաւիտենականս։ Եւ Աստուած խոստովանիմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, մի Աստուածութիւն սրբոյ Երրորդութեանն, զի Հոգի է Աստուած, և կամաւք երևեալ, խաւսեալ աւրինաւք և մարգարէիւք և առաքելովք։

**Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 10—11։**
**Կնիք հաւատոյ, Մայր Աթոռ, 1914, էջ 129։**

[22] Տես Ցուցակ Ձեռագրաց. հատոր Ա, Երևան, 1965, էջ 1596, հատոր Բ, Երևան, 1970, էջ 1436։

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆ ՈՒ ԳՐՉԱՏՈՒՆԸ ԱՆԻՈՒՄ (X—XI ԴԴ.)

Անին միջնադարյան Հայաստանի ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլև եկեղեցական ու մշակութային խոշորագույն կենտրոնն էր: «Անին հիրավի մի վայր է, ուր կենտրոնացված էր ամեն լավագույնն ու նշանավորը այն բոլորի, ինչ կարողացել են ստեղծել հայկական ճարտարապետությունն ու արվեստը զարգացած ֆեոդալիզմի շրջանում... Այս մասին են վկայում ամբողջական կամ ավեր վիճակում պահպանված եկեղեցական ու քաղաքացիական ճարտարապետության մեծարժեք բազմաթիվ հուշարձանները, որոնցով այնպես հարուստ է այդ վաղուց լքված, մեզ այդքան մոտ, բայց այժմ անմատչելի դարձած քաղաքը»[1]:

Սակայն այսօր մենք կանդրադառնանք «մեծ մայրաքաղաքի» մշակութային կյանքի մի շարք այլ կողմերին՝ ձեռագիր գրքերի, գրադարանների, գրչության գործի հարցերին, որոնք առաջնակարգ դեր ունեն Անիի մշակութային պատմության ամբողջական լուսաբանման համար:

961 թվ. Բագրատունի Աշոտ Ողորմած թագավորի օրոք Անին հռչակվեց Հայոց մայրաքաղաք: Բարենպաստ քաղաքական պայմանների, ինչպես և Անիի աշխարհագրական դիրքի հաջող ընտրության շնորհիվ, կարճ ժամանակում Կամսարականների նախկին ամրոցի շուրջն առաջացավ մարդաշատ ու վաճառաշահ մի քաղաք, լի միջնադարյան քաղաքներին բնորոշ փոթորկահույզ և եռուն կյանքով:

Հայաստանի տարբեր շրջաններից Անի էին գալիս ինչպես արհեստավորներն ու ազնվականները, այնպես էլ հայ մշակույթի գործիչները: Մեծ է եղել անեցիների սերն ու ձգտումը ամենաբազմազան արհեստների և արվեստների նկատմամբ:

Թորոս Թորամանյանը գրում է. «Անիի մեջ ամենահասարակ տներու դռների և օջախների վրա փորագրված զմայլելի քանդակագործությունները ցույց կուտան, որ այնտեղ իշխաններու և ազնվականներու միայն հատուկ չէր տենչը դեպի գեղարվեստը, ամեն դասի ժողովուրդ վարակված էր անոր սիրով»[2]:

Անին չդարձավ Հայաստանի սոսկ քաղաքական և տնտեսական կենտրոն: Շուտով այնտեղ տեղափոխվեց նաև երկրի հոգևոր կենտրոնը՝ Հայոց կաթողիկոսարանը: Մինչ այդ կաթողիկոսարանը Արգինայում էր, որտեղ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսը «...ուզեց Հայրապետական Աթոռին հաստատուն ձեւ մը տալ և նորո-

---

[1] Վարազդատ Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 83:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր Ա, Երևան, 1942, էջ 819:

գնաց զտուն կաթողիկոսարանին, որ կը գտանուէր ի գիւղաքաղաքին Արգինայ, Շիրակ գաւառի մէջ»[3]: Արգինայում գործում էր բարձր տիպի հոգևոր դպրոց[4]:

Խաչիկ Արշարունու մահից հետո Հայոց կաթողիկոս ընտրվեց Սարգիս Սևանեցին (992—1019 թթ.), որի առաջին գործերից մեկը եղավ կաթողիկոսարանը մայրաքաղաք տեղափոխելը: Բնականաբար Անի տեղափոխվեց նաև կաթողիկոսարանի հարուստ մատենադարանը, որը դեռ Արգինայում եղած ժամանակ հարստացվել էր նոր ձեռագրերով[5]: Մայրաքաղաքն այդ ժամանակ ապրում էր շինարարական թունդ կյանքով: Նշանավոր Տրդատ ճարտարապետի ղեկավարությամբ կառուցվում էր փառահեղ Մայր տաճարը: Մատենագրական աղբյուրները և վիմագիր արձանագրությունները վկայում են, որ Անիում հարուստ մատենադարան ուներ ինչպես Բագրատունյաց արքունիքը, այնպես էլ մի շարք եկեղեցիներ: Արքունական մատենադարանի մասին տեղեկության հանդիպում ենք Սարգիս վարդապետ Սևանեցու գրած հիշատակարանում, որը պահպանվել է 999 թվականի մի ձեռագրում. «Յամի յորում էր հայ թուականս ՆՂ (1041) եւ վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս, գտի ես Սարգիս վարդապետ զգիրքս զայս յարքունական տան գանձուն... իսկ իմ հայեցեալ խնամով ի գրանոցին, եւ ըստ սովորական մեր ախորժակացս զլոքունս բացեալ՝ ի բանսն բերկրէի, եւ սա զատուցեալ զընկերացն կայր կարաւտ ձեռին առ ինքն կարկառելոյ, զոր ապա առեալ իմ ընդ իս տարա...»[6]:

Անիի մատենադարանները ունեին բարձրաճաշակ կահավորվածություն: Այդ են հաստատում Անիից հայտնաբերված և Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող փայտե գրակալները, որոնք զարդարված են գեղարվեստական փորագրությամբ[7]: Մայրաքաղաքի եկեղեցիները, ինչպես և շրջակայքի խոշոր վանքերը՝ Հոռոմոս, Բագնայր, Խծկոնք, Արջոառիճ, նույնպես ունեին մատենադարաններ, որոնք մշտապես հարստանում էին տեղում կատարվող ընդօրինակությունների և նվիրատվությունների շնորհիվ: Ապլղարիպ Պահլավունին Անիում իր կառուցած Ս. Փրկիչ եկեղեցու պատին թողած արձանագրության մեջ, այլ նվերների հետ մեկտեղ, հիշատակում է նաև եկեղեցուն նվիրած ձեռագրերը՝ Ավետարան, Տոնական, ապա Հին և Նոր Կտակարանները, որոնք նորոգել է տվել. «Յամս Աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սմբատայ, որդւո Գագկա Շահնշահի, ի ՆՁԵ (1036) թուականիս, ես Ապլղարիպ մարզպան որդի Գրիգորո իշխանի եւ թոռն Ապուղամրի, եւ եղբայր Վահրամա եւ Վասակա, շինեցի զՍուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ... եւ զարդարեցի ոսկւով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք, եւ ետու Աւետարան եւ Տաւնական եւ նո[րոգեցի Հ]ին եւ Նոր Կտակարանաւք եւ կանգնեցի միլ առ Սուրբ Փրկչիս...»[8]: Ձեռագրի նվիրատվության փաստ արձանագրող հիշատակություններ կան նաև այլ եկեղեցիների պատերի վրա: Հետաքրքրական է Առաքելոց եկեղեցու մի արձանագրությունը՝ գրված 1058 թվականին, ուր ոմն Գրիգորը նշում է ոչ միայն Ավետարան նվիրելու, այլև այն մասին, որ ինքը Ավետարանը գնել էր 4000 դրամով. «Ի Շ եւ Է ի թուականութեան հայոց, շնորհիւն Աստուծոյ ցանգացող էղա ես Գրիգոր վասն իմ մեղուցեալ հոգույս ի յարկի Սուրբ Առաքելոց. կանգնէցի սուրբ իմ խաչ. եւ ետ ինձ Աստուած միտք եւ ստացայ զԱւետարանս յիմ հալալ եւ յարդար վաստակէ գընէցի 'Ն դրամ եւ էտվի ի Սուրբ Առաքէլքըս...»[9]:

Եկեղեցիներին ձեռագրեր նվիրելը Անիում և նրա շրջակայքում եղել է տարածված երևույթ: Սակայն մայրաքաղաքի ամենախոշոր ձեռագրական հավաքածուն անկասկած կաթողիկոսարանի մատենադարանն էր:

Ընդհանրապես բոլոր դարերում, որտեղ որ հաստատվել է Հայոց կաթողիկոսարա-

[3] **Մ. Օրմանյան**, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 1125: Խաչիկ Ա կաթողիկոսի աթոռակալության ժամանակ (973—992) Արգինայում Տրդատ ճարտարապետը կառուցել է կաթողիկե եկեղեցի և երեք այլ եկեղեցիներ, ինչպես նաև մատենադարան-գրատան ու կաթողիկոսարանի շենքեր:

[4] **Ա. Մովսիսյան**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X—XV դդ.), Երևան, 1958, էջ 273:

[5] **Ստեփանոս Տարոնացի**, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185:

[6] **Հ. Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1880, էջ 50:

[7] **Բաբկեն Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հատոր I, Երևան, 1958, էջ 207:

[8] Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 44—45:

[9] Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ 13:

նը, այն ունեցել է իր հարուստ մատենադարանը, լինի դա Վաղարշապատում, Դվինում, Անիում թե հեռավոր Հռոմկլայում: Պետրոս Գետադարձին ուղղված նամակներից մեկում Գրիգոր Մագիստրոսը կաթողիկոսից խնդրում է Անանիա Շիրակացու մատյանը՝ «Քննիկոնը», որը գտնվում էր Անիի կաթողիկոսարանի մատենադարանում: Ինչպես երևում է Մագիստրոսի մի այլ նամակից, կաթողիկոսը չի մերժել նրա խնդրանքը և, Շիրակացու անմահ երկից մի օրինակ ընդօրինակել տալով, ուղարկել է Գրիգոր Մագիստրոսին, որը նրանով առաջնորդվում է Սանահինի իր բարձր տիպի դպրոցում ուսուցանելիս[10]:

Կաթողիկոսարանի մատենադարանի մասին հիշատակություն ենք հանդիպում Սաղմոսավանքում 1195 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում: Սակայն այդ հիշատակությունը առավել արժեքավոր է, որովհետև տեղեկություն է պարունակում այն մասին, որ կաթողիկոսարանում նաև ձեռագրեր էին ընդօրինակվում: Գրիչ Մարկոսը նշում է, որ ընդօրինակել է Սարկավագ քահանայի գրած ընտիր օրինակից, որը իր հերթին ձեռագիրը («Կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղեմացւոյ») ընդօրինակել էր Անիի կաթողիկեում, ձեռքի տակ ունենալով բազում օրինակներ: «...գրեցի փանաքգրով յընտիր և յազգի աւրինակէ, զոր Սարկաւագ քահանայ՝ սպասաւոր Սուրբ կաթողիկէի մեծի, որ յԱնի, ի բազմաց օրինակաց ի ձեռն և այլոց գիտնականաց, զաւգտակարսն առեալ հաւաքեաց ի մի դիր և շարադրեաց իւրով ձեռամբ, ի դիւրալուր մտաց և գիտութեան...»[11]: Խոսքն այստեղ Հովհաննես Սարկավագի՝ հայ գիտության և մշակույթի մեծաքանքար մշակի մասին է, որն Անիում ունեցել է դպրոց և «...իբրև զիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց հոտոց և համաց՝ բերէր ի քաղաք իւր և տեղի սննդեան ի քաղաքամայրս Անի, և լի առնէր զտունն իւր փարթամութենէ անտի:... Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեաւ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր զկիրթին և զխորին իրս»[12]:

XI դարում Անին ապրում էր բուռն մշակութային կյանքով: Մեկը մյուսի ետևից վեր էին խոյանում մայրաքաղաքի շքեղ տաճարները: Անիի դպրոցներում դասախոսություններով հանդես էր գալիս Գրիգոր Մագիստրոսը: Գրչության համար գործածության մեջ է մտնում թուղթը, որի հնագույն նմուշը X դարից է: Ձեռագրագետ Ա. Մաթևոսյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անիի կաթողիկոսարանի մատենադարանից կարող էին քաղված լինել նաև հայերեն հնագույն թղթե ձեռագրի արժեքավոր նյութերը: Այդ ձեռագրի հազարամյակը լրանում է 1981 թվականին[13]:

Կաթողիկոսարանի մատենադարանից է օգտվել և հավանաբար հենց Անիում էլ գրել իր «Պատմությունը» Ստեփանոս Ասողիկը («Պատմութիւն տիեզերականը» նա ավարտել է 1004 թվին): Հիշատակարանում Ասողիկը նշում է, որ «Այս ամ երեքտասան է հայրապետութեան Տեառն Սարգսի, տիեզերափայլ և մեծաշնորհ հովուապետի, զորոյ զհրամանն ընկալեալ ի վեր քան զկար իմ՝ զհնազանդութեան օրէնսն կատարելով՝ աղքատիմաց բանիւք զբանս յիշատակի գրեցի»[14]: Իր «Պատմությունը» Ստեփանոս Ասողիկը գրել է Սարգիս Սևանեցի կաթողիկոսի հրամանով: Վերջինս, ինչպես նշեցինք, աթոռակալում էր Անիում: Մանուկ Աբեղյանը Ասողիկի մասին գրում է. «Ստեփանոս Ասողիկն եղել է իր ժամանակի բանիբուն վարդապետներից մեկը: Նա լավ տեղյակ է Ս. Գրքին, հմուտ է աստվածաբանական խնդիրներին, որոնցով սիրում էր զբաղվել...»[15]: Ասողիկի այս հակումները, ինչպես և իր բարձրարժեք աշխատության ստեղծման համար անհրաժեշտ նյութերն ու աղբյուրները անպատճառ պահանջում էին ձեռքի տակ ունենալ մեծաթիվ գրականություն, որպիսին պատմիչը կարող էր գտնել պատվիրատու կաթողիկոսի տնօրինած մատենադարանում, մանավանդ որ ինքն էլ եղել է կաթողիկոսարանի աշխատողներից մեկը, «...շրջագայել է վանքերը և զբաղվել եկեղեցու հոգսերով»[16]:

---

10 **Արտաշես Մաթևոսյան**, Նորից Շիրակացու «Քննիկոնի» մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 2, էջ 225—229:

11 **Գարեգին կաթողիկոս Հովսեփյան**, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 595:

12 Մատենադարան ձեռ. № 2680, Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 337, 242:

13 Մոտ ապագայում Մաշտոցյան Մատենադարանը լույս կընծայի «Հայերեն հնագույն թղթե ձեռագիրը» ամբողջական նմանությամբ, ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով:

14 **Ստեփանոս Տարոնացի**, նշվ. աշխ., էջ 285:

15 **Մանուկ Աբեղյան**, Երկեր, հատոր Բ, Երևան, 1968, էջ 564:

16 **Լ. Բաբայան**, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1981, էջ 115:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 988 ձեռագիրը գրվել է 1046 թվականին Պետրոս Գետադարձ կաթողիկոսի պատվերով, Գևորգ գրչի ձեռքով: Պարունակում է Հովհաննես Ոսկեբերանի ճառերը (Յովհաննէս Ոսկեբերան, Ճառք): Ձեռագիրն ունի բավական ընդարձակ հիշատակարան, որից բերում ենք մի քանի հատված. «Ես տէր Պետրոս, շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս, ցանկացող եղեալ այսմ աստուածածաւ ճառիցս Յովհաննու Ոսկեբերանի, մեծ փափաքանաւք եւ յորդորամիտ կամաւք ստացա զստացուածս ի նշանաւոր եւ ճշգրիտ գաղափարե յիմաստնոյ Իտիտեէ, առն ճարտար գրչի... գրեցաւ աստուածագիծ պատգամս այս ի թուականիս հայոց յորում Ն՚ՂԵ էր, իդիքտիոնին Հռոոմոց՝ յերեքտասաներրորդ ամին, ի թագաւորութեանն Մոնոմախա կայսէր... գրեցաւ եւ կազմեցաւ գիրքս այս ձեռամբ իմով Գեորգայ նուաստ գրչի...»[17]: Ձեռագրի մի շարք այլ էջերում կան փոքրածավալ հիշատակարաններ, նույնպիսի կամ նման բովանդակությամբ. «Զտէր Պետրոս Հայոց կաթողիկոս զստացող գրոցս Անհասից յաղաւթս յիշեսջիք, և դուք յիշեալ լիջիք ի Տէրն Յիսուս»[18]: Ձեռագիրը գրվելու տարին (1046 թ.) կաթողիկոսը իր աթոռանիստում՝ Անիում էր, ուր և պետք է կարծել, գրել է տվել այդ ձեռագիրը: Այդ ժամանակվա Հայոց կաթողիկոսի և կաթողիկոսարանի հնարավորությունների մասին կարելի է դատել Մատթեոս Ուռհայեցու հետևյալ վկայությունից. «Երբ հայրապետական Աթոռին նստած էր տեր Պետրոսը, իսկ Աթոռն էլ գտնվում էր Հայաստանում, նա ուներ հայոց թագավորներից որպես հայրենիք նվեր ստացած կալվածքներ՝ հինգ հարյուր անվանի, ընդարձակ, շահութաբեր և շատ ընտիր գյուղ... **Հայրապետի վեհարանում մշտապես լինում էին տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթսուն վաներեց**, ինչպես և հինգ հարյուր աշխարհական: Հայրապետական Աթոռը ոչնչով չէր զիջում հայոց թագավորական գահին: Եկեղեցիները ու հայրապետանոցը լի էին բազում և անհամար, զարմանալի մեծության զարդերով, որոնք նախկին թագավորներն էին հաստատապես նվիրել անցյալի հայրապետներին»[19]: Պետք է կարծել, որ վեհարանում գտնվող վաթսուն վաներեցների մի մասը զբաղվում էր գրչությամբ, թարգմանությամբ, կազմարարությամբ և նման գործերով: Հավանաբար դրանցից մեկն է եղել և վերոհիշյալ ձեռագրի գրիչ Գևորգը: Հետևաբար ձեռագիրը ստեղծվել է կաթողիկոսարանում, որը Անիում էր:

Վերը ասվածը ստիպում է մեզ ընդունել Անիում գրչության արվեստի առաջացման մասին եղած որոշ կարծիքներ: «Իր գրչության դպրոցն ուներ նաև Անի մայրաքաղաքը,—գրում է Թ. Հակոբյանը,— Անիի դպրոցը, սակայն, ձևավորվել է մեզ հետաքրքրող ժամանակից մի փոքր ուշ և հիմնականում գործել է XII—XIII դարերում»[20]: Վերոհիշյալ դարերը գրչության և մանրանկարչության արվեստի բուռն վերելքի ժամանակներ են եղել ոչ միայն Անիում, այլև ողջ Հայաստանում և Կիլիկիայի հայկական թագավորությունում: Սակայն չմոռանանք, որ Անիի զարգացումն ու ծաղկումը միանգամայն համընթաց են եղել նրա մշակույթին, դպրոցին ու գրչությանը, և XI դարում մայրաքաղաքի զարգացման բարձր մակարդակը պայմանավորված է նաև այդ գործոններով: Ս. Բարխուդարյանը գրում է. «Ինչպես Բագրատունյաց Անին էր կուլտուրայի օջախ, որտեղից այն տարածվում էր Հայաստանի այլ վայրերը, այնպես էլ գրիչների կուլտուրան ծավալվում էր այնտեղից»[21]: Խոսքն այստեղ վիմագիր գրիչների մասին է, որոնց անուններին այնքան հաճախ ենք հանդիպում Անիի գեղեցիկ և գրագետ գրված արձանագրություններում: Բայց չէ որ այդ գրիչները քարերի վրա գրելով չէ, որ գրաճանաչ ու գրիչ էին դառնում: Մայրաքաղաքն ուներ ինչպես բազմաթիվ տարրական, այնպես էլ բարձր տիպի դպրոց, որը գործում էր կաթողիկոսարանին կից: Անիի դպրոցների ավարտողներից շատերը զբաղվում էին արհեստներով ու առևտրով, ոմանք դառնում էին ճարտարապետ կամ եկեղեցական գործիչ, զինվորական կամ արքունական պաշտոնյա, սակայն անառարկելի է, որ դպրոցների սաների մի մասն էլ հետագայում զբաղվում

---

[17] Մատենադարան, ձեռ. № 988, էջ 284բ, 285ա. Հմմտ. Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 226—231:

[18] Նույն տեղում, էջ 231:

[19] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 100—101:

[20] **Թ. Հակոբյան**, Անիի պատմություն, Երևան, 1980, էջ 336:

[21] **Սեդրակ Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 204:

էին հենց ուսուցչությամբ կամ գրչությամբ: Դեռ ավելին, տեսանք, որ ձեռագրերն այդ ժամանակ բավական թանկ էին, իսկ «գըրչությամբ պարապողներն այդ արհեստով հոգում էին իրենց, ինչպես և մերձավորների ապրուստը...»[22]:

Մայրաքաղաք Անին գիտության և մշակույթի, գրականության ու արվեստի մի օրրան էր արդեն X—XI դարերում: Ուստի այդ ժամանակին պետք է վերագրվի նաև Անիի գրչության դպրոցի հիմնադրումը: Վերը նշված փաստերը այդ են հաստատում:

Անի տեղափոխվելուց հետո մայրաքաղաքի առաջնակարգ մշակութային օջախներից մեկը դարձավ Հայոց կաթողիկոսարանը, իր համբավավոր դպրոցով, հարուստ Մատենադարանով և գրչատնով:

[22] Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 320:

ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

## ԱԼԻԾ

Ալիծ կույսն ապրել ու ստեղծագործել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում: Ժամանակակից է Լևոն Գ թագավորին (1236—1289):

Ալիծն իր ժամանակի լավագույն գեղագիր գրչուհիներից է: Ժամանակակիցները հաղորդում են, որ նա անգամ մրցույթ է կազմակերպել, փնտրել մարդկանց, որոնք կարող են իր նման գրել, խոստացել է ամուսնանալ իր նման ձեռագիր ունեցող երիտասարդի հետ:

Ժամանակակից բանաստեղծը գրել է.

Ով որ գրէ
Զծայրն ձային, զծակն ծային,
Նա կու լինի փէսայ Ալիծին:

Իրենց բախտը, ինչ խոսք, շատերն են փորձել, բայց Ալիծը չի հավանել նրանց ձեռագրերը.

Ծայրն ձային, ծակն ծային
Չի նմանիր գիրն Ալիծին:

Վիպականացված այս պատմության վերջից իմացվում է, որ, այնուամենայնիվ, Ալիծը գտնում է մեկին, որի ձեռագիրը հավանել է և ասել.

Ծայրն ձային, ծակն ծային՝
Կու նմանի գիրն Ալիծին[102]:

102 Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 520:

Ալիծ գրչուհու մասին մասնագիտական ուրիշ տեղեկություններ մեզ չեն հասել:

## ԶԱԲԵԼ

Կոստանդին քահանայի դուստր Զաբելը ծնվել ու ապրել է Կիլիկիայում, Բարձրաբերդ քաղաքում:

Զաբելը զբաղվել է գրչությամբ: Նրա մասին հ. Ղևոնդ Ալիշանը գրում է. «Ի հին պատմութեան Սսոյ լուայ, թէ Բարձրաբերդցի Կոստանդին քահանայի դուստր Զաբէլ կոչեցեալն պաշտէր զմանր ուսումն, և էր հմուտ ընթերցողութեան և արուեստին գրչութեան»[103]:

Զաբել գրչուհու ընդօրինակած գրքերից ոչ մեկը չի հասել մեզ:

Ամենայն հավանականությամբ Զաբել գրչուհին ապրել ու ստեղծագործել է 13-րդ դարում:

## ԽԵՐԻԿ ՏԻԿԻՆ

Խերիկ տիկինն ապրել է 14-րդ դարի սկզբներին: Հայրն է Վարդանը:

1317 թվականին Խերիկ տիկինը գնել է՝ Վան քաղաքի մոտ գտնվող Ավանս գյուղի վանքում, գրիչ Թումայի ձեռքով ընդօրինակված «Մեկնութիւն կաթողիկեայց թղթոց Սարգսի Շնորհալւոյ» ձեռագիրը:

Խերիկ տիկինը ձեռագիրը գնել է ի հիշատակ իր ծնողների և դուստրերի՝ Ազիզ

103 Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 520:

տիկնոջ և Տիկնաց տիկնոջ: Նա ձեռագիրը նվիրել է Ոստան քաղաքի Ստեփաննոս Նախավկայի վանքին և խնդրել, որ «մի ոք հեռացուսցէ զսա ի դրանէ»[104]:

## ՈՒՍՏԻԱՆԵ

Ուստիանեն ապրել է 14-րդ դարի կեսերին: Նրա մասին հիշատակություն կա 1356 թվականին ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանում: Ձեռագրի գրիչ Աստվածատուրը գրում է, որ Ճաշոցի գրվելուն օգնել է նաև Ուստիանեն: Նա է էջերի վրա տողեր գծել: Եկող սերունդներից Աստվածատուր գրիչը խնդրում է Ճաշոցից օգտվելիս հիշել Ուստիանեին, քանի որ նա «աշխատեցաւ ... բազում ի տող չփելն»[105]:

## ԹՈՒՐՎԱՆԴԱՅ

Պարոն Մարգարի և Գոհար-Մէլիքի դուստր Թուրվանդայն ապրել է 15-րդ դարի սկզբին: Ամուսինն է պարոն Յովանէսը:

1406 թվականին Թուրվանդայն իր միջոցներով գնում է ավելի վաղ ընդօրինակված մի Ավետարան և որպես անջնջելի հիշատակ նվիրում է Անդրիաս քահանային ու նրա որդուն՝ Մխիթարին:

Իր կատարած բարեգործության համար Թուրվանդայը եկող սերունդներից խնդրում է. «որք ընթեռնուք զսուրբ Աւետարանս յիշեցէք յաղաւթս ձեր զիս՝ զԹուրվանդէս, և զպարոն Յովանէս, և... զծնողսն իմ, և Աստուած զձեզ յիշէ»[106]:

1409 թվականին Ավետարանն անցնում է Յովաննես աբեղային: Յովաննեսը ևս իր հիշատակագրության մեջ խնդրում է ընթերցողներին հիշել բարեհոգի Թուրվանդային:

Թուրվանդայի գնած Ավետարանը վերջին անգամ տեսել ու իր «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» գրքի Բ հատորում նկարագրել է Յակոբ վարդապետ Քօսեանը (Վիեննա, 1899, էջ 21—23): Ամենայն հավանականությամբ 1915 ողբերգական թվականին այս ձեռագիրը ևս կիսեց իր ժողովրդի ճակատագիրը, զոհ դարձավ թուրք ոճրագործների կազմակերպած եղեռնին:

## ԾԱՅԽՈՒԹԼՈՒ

Ծայխութլուն ապրել է 15-րդ դարի կեսերին: Մարտիրոսի և Սաղդատի դուստրն է:

104 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 132:

105 Հ. Վ. Հացունի, Հայ կինը պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 353:

106 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 64—65:

1447 թվականին Ծայխութլուն Ռշտունյաց գավառի Բերդաձորի վանքում գրիչ Մարգարեին պատվիրում է Ավետարան ընդօրինակել: Մարգարեն կատարում է Ծայխութլուի պատվերը: Ավետարանը նվիրված է պատվիրատուի, նրա ծնողների, որդիների՝ Յովսեփի, Մելիքսեթի, դուստրերի՝ Համուշ խաթունի, Մարգարիտի, Ուլուն խաթունի և մերձավորների հիշատակին:

Ավետարանի 20ա էջի վրա ծնրադիր վիճակում նկարված է ձեռագրի պատվիրատու Ծայխութլուն: Նրա ձախ կողմում կանգնած է պատանի որդին՝ Յովսեփը, որը, համաձայն նկարի վերևում արված կարմրադեղ մակագրության, Ավետարանը գրվելու պահին մահացել էր: Մակագրության մեջ ասվում է. «Յիշեցէք ի Քրիստոս Ծայխութլուն, եւ զորդի նորին, որ փոխեցաւ առ Աստուած»[107]:

Ծայխութլուի պատվիրած Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

## ԳՈՀԱՐ

Գոհարն ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում:

1484—1486 թվականներին նա Կեսարիայում օգնել է հորեղբորը՝ Հովհաննես Երզնկացի գրչին, ընդօրինակելու մի Ճաշոց և մի Ավետարան: Գոհարը ձեռագրերի համար օգտագործված մագաղաթներն է պատրաստել և թերթերի վրա տողեր գծել:

## ԱԶԻԶՄԵԼԻՔ

Ազիզմելիք գրչուհին ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում, ամուսինն է Հովսեփ քահանան:

1486 թվականին Ազիզմելիքը Արքայի վանքում ընդօրինակել է մի Ավետարան: Ազիզմելիքը որդու՝ Ալեքսիանոսի առաջին ուսուցիչն է: Մորից ստացած գիտելիքները Ալեքսիանոսին օգնեցին հետագայում դառնալու եպիսկոպոս:

## ՏՕՈՒՍ ԽԱԹՈՒՆ

Տօուս խաթունն ապրել է 17-րդ դարի սկզբներին:

1604 թվականին նա գնում է՝ 1413 թվականին Յովաննես քահանայի պատվերով գրված Յայսմավուրքը: Երկու դար առաջ ընդօրինակված ձեռագիրը խիստ տուժել էր ժամանակից, կազմը հնացել էր: Տօուս խաթունը Գրիգոր կազմողին պատվիրում է

107 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 612—614:

վերստին նորոգել ու կազմել ձեռագիրը: Վերջինս կատարում է Տոուս խաթունի պատվերը և 351ա էջում թողնում է փոքրիկ հիշատակարան և խնդրում է ընթերցողներից. «Յիշեցէք... զՏաւուս խաթուն, որ ետ վերստին նորոգել զԱյսմաւուրքս ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն»[108]:

Նորոգումից հետո Տոուս խաթունը Յայսմավուրքը նվիրում է տէր Մկրտչին:

Տոուս խաթունի միջոցներով նորոգված Յայսմավուրքն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

## ՍԻՐԱՄԱՐԳ

Սիրամարգն ապրել է 17-րդ դարի սկզբները: Ծնողներն են Շահղուպաթն ու Մարիամը:

1604 թվականին պարսից Շահ-Աբաս արքան ավերեց Արևելյան Հայաստանն ու բնակչությանը քշեց Պարսկաստանի խորքերը: Հայ մարդու ճակատագիրը բաժին ընկավ նաև նրա ստեղծած գրքերին, որոնք ևս անօրենների կողմից գերեվարության տարվեցին:

1608 թվականին Սիրամարգը, իր միջոցներով, այլազգիներից փրկագնում է 1474 թվականին ընդօրինակված մի գեղանկար Ավետարան՝ ի հիշատակ իր ծնողների, ամուսնու՝ Յովսեփի, դստեր՝ Աղայսուլթանի, որդու՝ Ամիր Սարգսի: Հիշատակարանագիրը եկող սերունդներից խնդրում է. «Աղաչեմ զձեզ, ով հանդիպողք սբ. Ավետարանիս, կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ... Սիրամարգին»[109]:

Հիշատակարանագիրը հայտնում է, որ բարեհոգի ու բարեբար Սիրամարգը այլազգիներից փրկագնել է նաև մի Յայսմավուրք և մի Ճաշոց:

Սիրամարգի փրկագնած Ավետարանն այժմ պահվում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանում:

## ՇԱՂՈՍԿԻ

Բահանդուրի և Փաշաջանի դուստր Շաղոսկին ապրել է 17-րդ դարի սկզբներին: Ամուսինն է Մերզին:

Շաղոսկին և իր մերձավորները Շահ-Աբասի ձեռքով Պարսկաստան քշված հայեր են: Իսպահանի մոտ գտնվող Քաղաք գյուղում հաստատված Զաքարիա Վանեցի երեցին Շաղոսկին 1614 թվականին պատվիրել է Ավետարան ընդօրինակել: Զաքարիա Վանեցի գրիչը պատվերը կատարել է «ի դառն և ի նեղ ժամանակիս, որ թագաւոր մի ի Պարսից եղեալ(լ) շահ Աբաս անուն, և զաշխարհս Հայոց աւերեաց»[110]: Եվ չնայած այդ ամենին Զաքարիան գրում, նկարում ու կազմում է Շաղոսկու պատվիրած Ավետարանը: Ձեռագիրը հարուստ է մանրանկարներով՝ ավետարանիչներ, ավետարանային պատկերներ, խորաններ, լուսանցազարդեր, գլխազարդեր:

Շաղոսկու պատվիրած ու Զաքարիա Վանեցու ընդօրինակած հրաշագեղ ու հրաշազարդ Ավետարանն այժմ գտնվում է Թեհրանում: Այդ հոյակապ ձեռագրի նկարագրությունը, հիշատակարանները 1953 թվականին հրատարակվել են «Հանդէս ամսօրեայ» հանդեսում (էջ 97—102):

## ԱԼԹՈՒՆ

Ալթունն ապրել է 17-րդ դարի սկզբներին: Դուստրն է գրիչ Հովհաննեսի և Մարիամի:

Ալթունն օգնել է հորը ձեռագրեր ընդօրինակելու գործում. թուղթ է հարթեցրել, գիշերները ճրագն է վառ պահել, կերակուր է պատրաստել: 1621 թվականին Կեսարիայում ընդօրինակած Յայսմավուրքի հիշատակարանում գրիչ Հովհաննես երեցը Ալթունի մասին գրում է. «...բազում ժամանակաւ մայրն առ Աստուած փոխեալ էր, և այլ Ալթուն աղջիկս զիմ պէտս կարեաց լնալով, թէ թուղթս կոկելով, և թէ գիշերն զճրագս վառելով, մինչ ի լոյս ի դէմս տրգնութեամբ կալով ի զմարմնաւոր կերակրիկս հոգալով»[111]:

## ԳՈՀԱՐ

Կիրակոս վարպետի և Մրվարթի դուստր Գոհար գրիչը ապրել ու ստեղծագործել է 17-րդ դարի առաջին կեսում:

Գոհար գրիչն իր հիշատակարանում գրում է, որ ծնողներն են սովորեցրել իրեն գրչության արվեստը և «բազում աշխատութեամբ արարին զիս գրագիր»:

1630 թվականին Գոհար գրիչը Ասպահանից Սուրբ Նշան վանքի դիմաց գտնվող Ավրնդանաց գյուղում ընտիր և ճիշտ օրինակից ընդօրինակում է մի Կանոնագիրք:

[108] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620), հ. Ա, էջ 150—151:

[109] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 316—317:

[110] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 539—541:

[111] **Արշակ Ալպոյաճյան**, Պատմություն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1866: Նաև Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 45:

ժողովածուի մեջ նյութեր կան Նիկիայի ժողովի մասին, Աթանաս, Կղեմայ հայրապետներից, Եզնիկ Կողբացուց, Գրիգոր Լուսավորչի կանոնները, Սահակ հայրապետից, Դավիթ Ալավկեցուց, Յակոբ վարդապետ Ղրիմեցուց։

Գոհար գրիչը հայտնում է, որ խիստ ծանր պայմաններում է աշխատել. «քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերա աշխարհիս ևս առաւել ազգիս Հայոց»[112]։

Իր ընդօրինակած ձեռագրի ընթերցողներից, օգտվողներից, հարևանցիորեն տեսնողներից Գոհարը խնդրում է «զաւելորդն բառնայք և զպակասութիւն լնուք և խոշորութեանց և սխալանացս անմեղադիր լինել» քանի որ, ինչպես գրում է, իր կարողությունն այդքան է։ Ապագա սերունդներից նա խնդրում է հիշել իր ծնողներին, եղբորը՝ Մուսեսին, քույրերին՝ Գոզալին և Մընջանին և ամենից շատ վարպետանց վարպետ Սարգիս Հիզանցուն, որ շատ է օգնել իրեն գրչության արվեստին տիրապետելու գործում։

Գոհար գրչուհու ձեռագիր Կանոնագիրքն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում։

## ՄԱՐԻԱՆԵ

Գրիչ Մարիանեն ապրել է 17-րդ դարի կեսերին։

1650 թվականին նա Արկոչ գյուղում արտագրել է «Վարք Հարանց անապատականաց» ձեռագիրը։

## ՀՌԻՓՍԻՄԵ

Հռիփսիմեն ապրել է 17-րդ դարի կեսերին, ստեղծագործել է Հալիձորի սուրբ Աստվածածին վանքի կուսանոցում։

1653 թվականին նա վանքի կամարների տակ ընդօրինակել է Խոսրով Անձևացու «Մեկնութիւն ժամագրոց» աշխատանքը։ Տեղեկությունների համաձայն ընդօրինակել է նաև Նարեկացու «Մատեան ողբերգութեան» և «Խոսրով Մեծ» երկերը[113]։

## ՎԱՐԴԵՆԻ

Գրչուհի Վարդենին ապրել է 17-րդ դարի կեսերին։

1657 թվականին նա ընդօրինակել է Սանդուխք գիրքը։

## ԾՈՒԾԱՆ

Միանձնուհի Ծուշան գրչուհին ապրել ու ստեղծագործել է 17-րդ դարի կեսերին։

1664—1666 թվականներին Ծուշանը Երզնկայի գավառի Ծոռոթ գյուղի Սուրբ Աստվածածին վանքի կուսանոցում արտագրել է Մովսես Խորենացու, Եղիշեի պատմությունները և այլ պատմիչների երկեր։ Նա իր հիշատակարաններից մեկում գրել է. «Յոյժ անգիտանն կրօնս ապաշխարութեան, և տգէտ եմ խիստ գրչարհեստութեան»։ Սակայն պետք է նշել, որ Ծուշանի ինքնախոստովանությունը համեստության արդյունք է։ Բանասեր Հ. Վ. Հացունին գրել է, որ Ծուշանը մեզ է թողել գրչության արվեստի գեղեցիկ օրինակներ։

1666 թվականին Ծուշան գրչուհին ընդօրինակում է Սողոմոնի առակները։ Ձեռագրի հիշատակարանում նա գրել է. « սկսայ և օժանդակութեամբ նորին աւարտեցի, ձեռամբ իմով մեղմամածի, անիմաստ գոլով Նորաշինկեցի, սուտ անուն Ծուշան ասի... զօր յօժար կամքով և ջերմեռանդ սիրով գծագրեցի... լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոկի»[114]։

## ԳՈՀԱՐ

17-րդ դարի երկրորդ կեսում Երզնկայի գավառի Ծոռոթ գյուղի Սուրբ Աստվածածին վանքի կուսանոցում է ապրել ու ստեղծագործել միջնադարի վաստակաշատ գրչուհիներից ևս մեկը՝ Գոհարը։

1667—1668 թվականներին ընդօրինակած «Աղօթագիրս Նարեկացւոյ» ձեռագրի հիշատակարանում Գոհարը գրել է. «Ես՝ կոյսակրոն Գոհարս եղէ ցանկացող և եռափափագ սիրով ստացող այս հոգիաշունչ մատենիս, որ ջերմեռանդ սիրով զսա գրեցի»[115]։

## ՄԱՐԳԱՐԻՏ

Մարգարիտ գրչուհին ապրել ու ստեղծագործել է 17-րդ դարի երկրորդ կեսում։

1669 թվականին Մարգարիտ կույսը Երզնկայի գավառի Ծոռոթ գյուղի Սուրբ Աստվածածին վանքի կուսանոցում ընդօրինակել է Ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ» աշխատությունը։

---

112 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 371—372։

113 **Հ. Դ. Ալիշան,** Սիսական, էջ 257։

114 **Մ. Սմբատյան,** Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 282—283։

115 **Հ. Դ. Ալիշան,** Սիսական, էջ 353։

1673 թվականին գրչագրած ձեռագրի հիշատակարանում Մարգարիտը գրել է. «Ես եղկելի… Մարգարիտ սոսկ անուամբ հաւատաւոր համակում եւ համաշունչ գոլով… ջերմեռանդ սիրով եւ քաղձմամբ սըրտի ծրեցի զս(ուրբ) Ա(ետարանս)»: Գըրչուհու այս գեղեցիկ ու հմուտ աշխատանքն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում (ձեռագիր 7234):

## ԷՐԻՆԵ

Քույր Էրինեն ապրել և ստեղծագործել է 17-րդ դարի երկրորդ կեսում:

1673 թվականին նա Ծնհերի վանքում արտագրել է «Անեճի ժամգիրքը»:

## ՎԱՐՎԱՌ

Կույս Վարվառ գրիչն ապրել է 17-րդ դարի երկրորդ կեսում:

1684 թվականին նա Փոքր Սյունյաց վանքում ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու մառընտիր քարոզները:

## ԲՐԱԲԻՈՆ

Հայտնի գեղագիր գրչուհի, մանկավարժ Բրաբիոն Պալատեցին ծնվել է 1750 թվականին Կոստանդնուպոլսում:

Բսան տարեկան հասակից նվիրվել է գրքեր ընդօրինակելու գործին: Ունեցել է գեղեցիկ նոտրգիր ձեռագիր: Ձեռագրերի մի մասը Բրաբիոնն ընդօրինակել է Պալատի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու դըպրանոցում: Տնտեսական ծանր պայմանները նրան ստիպել են գրքեր արտագրել անգամ ճրագի աղոտ լույսի տակ: Վերջին ձեռագիրը Բրաբիոնն արտագրել է 1815 թվականին, 65 տարեկան հասակում: Գրչության հետ զուգահեռ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, դասավանդել է իրենց տանը բացված երկսեռ դպրոցում:

Բրաբիոնի ընդօրինակած ու ծաղկած ձեռագրերից պահպանվել ու մեր օրերն են հասել տասնյոթը, որոնցից իննը ցրված են աշխարհի տարբեր երկրներում, մասնավորապես Կ. Պոլսում, որտեղ ապրել ու ստեղծագործել է անվանի գրչուհին: Բրաբիոնի արտագրած ձեռագրերի մի զգալի մասը՝ ութ ձեռագիր, տարբեր ժամանակներում բերվել են մայր հայրենիք ու այժմ պահվում են Երևանի Մատենադարանում:

Բրաբիոնը հայ կանանցից առաջինն է, որ զբաղվել է տպագրական գործով: Աջակցել է եղբորը՝ տպագրիչ, մանկավարժ Մատթեոս դպրին, երկար տարիներ աշխատել նրա հետ:

Բազմահմուտ ու բազմաշխատ գրչուհին, մանկավարժը մահացել է 85 տարեկան հասակում, 1835 թվականին և թաղված է Կ. Պոլսի Էդիրնե-քափուի գերեզմանատանը, եղբոր՝ Մատթեոսի կողքին[116]:

Բրաբիոնը սերունդներին որպես հիշատակ թողել է ընդօրինակած գեղահրաշ ձեռագրեր:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ումրբեկի դուստր Մարգարիտ Ալեքսանյանը ծնվել է 1833 թվականին Շուշիում:

Երիտասարդ հասակից Մարգարիտը զբաղվել է ձեռագործով, ապա՝ ձեռագրերի ընդօրինակությամբ: Մարգարիտի ձեռագիրը հիասքանչ է և առաջին հայացքից անհնար է տարբերել տպագիր աշխատանքից:

1862 թվականին Մարգարիտ Ալեքսանյանն իր ընդօրինակած գեղագիր Ավետարանն ուղարկում է Վենետիկ՝ Մխիթարյան միաբանության հայրերին: 1868 թվականին Մարգարիտը ստեղծում է «Հայկական գեղագրություն» ալբոմը, որ ավելի քան երկու տասնամյակ անց՝ 1891 թվականին Թիֆլիսում հրատարակվում է:

1867—1872 թվականներին Մարգարիտն ընդօրինակում է մի նոր Ավետարան: Ավետարանի տառերը համաչափ ու նուրբ են, հոծ ընդգծումից բացի ունեն նաև բարակ ստվերագծեր, որոնք առանձին շուք են հաղորդում դրանց: Ընդօրինակության համար Մարգարիտն օգտագործել է բաց մոխրագույն թանաք: Ընդօրինակված ձեռագրի բոլոր մանրանկարների, գլխազարդերի, լուսանցազարդերի հեղինակը Մարգարիտն է: Այս գեղագիր Ավետարանը հեղինակը 1886 թվականին նվիրում է Ս. Էջմիածնի մատենադարանին: Այն այժմ ցուցադրվում է Մայր տաճարի թանգարանում:

Մարգարիտ Ալեքսանյանը երկար տարիներ աշխատակցել է «Աղբյուր», «Տարազ» պարբերականներին՝ հայկական ծաղկազարդ նկարներով ու զարդագրերով:

Անվանի մանրանկարիչ-գրչուհին մահացել է 1902 թավկանին ու թաղվել Շուշիի գերեզմանոցում:

1908 թվականին հրատարակվել է Մարգարիտ Ալեքսանյանի «Աղբյուրի ակունք» աշխատանքի 2-րդ պրակը: Նրա գրչագրած ձեռագրերը հիմնականում գտնվում են Երևանի Մատենադարանում:

---

116 Վահան Զարդարյան, Հիշատակարան, հ. 1, Կ. Պոլիս, 1910:

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

# ՀՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԱՄՓԻԼՈՔՈՍ ԻԿՈՆԱՑԻ

Հայրաբանական գրականության ոչ անհայտ դեմքերից է Դ դարի հույն մատենագիր, Լիկաոնիայի միտրոպոլիտ և Իկոնիա քաղաքի եպիսկոպոս Ամփիլոքոսը: Ծնվել է հավանաբար 345 թվականին և մահացել՝ շուրջ 399-ին: Ամփիլոքոս Իկոնացին իր հեղինակավոր մասնակցությունն է բերել 381, 385, 394 թվականների եկեղեցական ժողովներին և հակաճառական երկերով համառ, անտեղիտալի պայքար մղել արիանոսյան գաղափարախոսության դեմ, պայքար, որ նա մղում էր ոչ միայն գրչով, այլև առավել գործնական քայլերով: Այս նպատակով Ամփիլոքոսը դիմում է Թեոդոս կայսրը՝ հունական գավառներից արիանոսյան աղանդին հեռացնելու խնդրանքով: Սակայն, երբ նրա խնդրանքը մնում է անպատասխան, եկեղեցու այդ եռանդուն ու ձեռներեց սպասավորը դիմում է կայսերը համոզելու հետևյալ հնարքին. Արկադիոսին (Թեոդոսի որդուն) թագաժառանգ հայտարարելու կապակցությամբ Ամփիլոքոսը, մյուս եպիսկոպոսների նման ներկայանալով պալատ, հարգանքի տուրք է մատուցում միայն կայսերը՝ անուշադրության մատնելով թագաժառանգին: Այս վերաբերմունքից զայրացած՝ Թեոդոս կայսրը հրամայում է Ամփիլոքոսին անմիջապես հեռանալ պալատից: Կատարելով կայսեր հրամանը՝ Իկոնիայի եպիսկոպոսը դիմում է նրան հետևյալ պատգամով. «Տեսանե՞ս արքայ, զի դու ոչ տանիս զանարգանս որդւոյ քոյ. և զի՞արդ Հայրն երկնաւոր տանիցի զարհամարհանս Միածնին իւրոյ՝ յերեսաց քրիստոսամարտ հերետիկոսաց ժամանակիս»: Այդ ժամանակ թագավորը «զարմացեալ ընդ իմաստութիւն սրբոյ եպիսկոպոսին՝ արգել ձեռնագրով իւրով զհամարձակութիւն արիանոսաց, եւնոմեանց, սաբէլեանց, մակեդոնեանց և ապողինարիտաց»[1]:

Ըստ հայ աղբյուրների Ամփիլոքոս Իկոնացին «էր աշակերտ սրբոյն Բարսղի Կեսարացւոյ, և գործակից նորա՝ որպէս և Գրիգորի Աստուածաբանին՝ ի ճգնողական վարս և ի յաղթահարել զհերձուածօղս աստուածաբան վարդապետութեամբ»[2]: Բարսեղ Կեսարացու և Ամփիլոքոս Իկոնացու մերձավոր հարաբերությունների մասին է վկայում և կանոնական այն թղթի առկայությունն ինքնին, որ առաջինը հղել է երկրորդին, որպես հեղինակավոր եկեղեցական գործչի: Թուղթս հայ թարգմանական մատենագրության մեջ հայտնի է «Գիր կանոնական մեծի եւ գիտնաւորի եպիսկոպոսապետի Բա[ր]սղի առ սուրբն Ամփիւղոքոս յԻկոնացւոց եպիսկոպոս բանս ԾԱ»

---

[1] **Հ. Մ. Ավգերեան,** Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հտ. ԺԲ, Վենետիկ, 1815, էջ 32: Նաև՝ Справочный Энциклопедический Словарь, изд. К. Крайя, т. I, СПб., 1847, ст. 273.

[2] **Հ. Մ. Աւգերեան,** նշվ. աշխ., էջ 31—32:

խորագրով[3]: Հայրաբանական մատենագրության մեջ նվազ կարևոր չեն Գրիգոր Աստվածաբանի՝ Ամփիլոքոս Իկոնացուն հղած թղթերը, որոնք վկայությունը լինելով ճգնավորական համատեղ կյանքում այդ երկու հայրերի՝ աղանդավորական շարժումներին ընդդիմակայելու մասին, միաժամանակ գաղափարաբանական մտքի վավերական հուշարձաններ են[4]:

Սակայն ժամանակի եկեղեցական, քաղաքական կյանքին չէ միայն, որ իր նպաստն է բերել Ամփիլոքոս Իկոնացին: Փոքր չէ նրա վաստակը մատենագրական մարզում ևս[5]: Ամփիլոքոսի հեղինակության մասին է խոսում թեկուզ այն իրողությունը, որ նրա երկերը հաճախ ներկայացվել են մատենագրին ժամանակակից, տիեզերական եկեղեցու բազմավաստակ մշակներից Հովհան Ոսկեբերանի անվամբ[6]:

Ամփիլոքոս Իկոնացին հեղինակ է կրոնա-պատմական և վարդապետական մի շարք երկերի, որոնք կարող են վստահելի սկզբնաղբյուր համարվել Դ դարի դավանաբանական պայքարի պատմության ուսումնասիրման համար[7]:

Հայ թարգմանական մատենագրությունը մեզ է հասցրել նրա՝ Քրիստոսի ծննդյանը նվիրված ճառը, որ ձեռագրերում «Ութերորդ աւուր ծննդեանն Քրիստոսի ասացեալ ներբողեան ի սրբոյն Ամփիլոքեայ յԻկոնիոյ եպիսկոպոսի» («Բազումք են պարգևք շնորհացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, բայց ինչ լաւագոյն քան զմեծաւոր այս աւուր տօնի պարգև... համաձայնեալ ամենեքեան առհասարակ») վերտառությամբ է հանդիպում[8]: Այս երկը, որքան հայտնի է մեզ, այժմ առկա է միայն հայերեն թարգմանությամբ:

Սխալմամբ Ամփիլոքոս Իկոնացուն է վերագրվել Բարսեղ Կեսարացու վարքի մի համառոտություն («Վարք երանելոյն Բարսղի Կեսարու... զոր գրեաց Ամփիլոքոս Յիկոնացւոց եպիսկոպոսն». սկ. «Այս մեծ և սքանչելի այրս Աստուծոյ... յառաջ քան զնայ եպիսկոպոսապետ էր»[9]), որն իրապես պատկանում է Ելլադիոս Կեսարացուն[10]:

Ամփիլոքոս Իկոնացին իր արժանի տեղն է գրավել հայ դավանաբանական գրականության մեջ նմանապես: Նրա անվամբ բերված ճառական հատվածները հյուրընկալվել են դավանաբանական այնպիսի ծանրակշիռ երկերում, որպիսիք են Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ» խորագրով աշխատությունները ու դավանաբանական բնույթի ժողովածուներ և թղթեր: Քննությունը պարզում է, որ այդ հատվածներից աղբյուրագիտական արժեք են ներկայացնում հատկապես Ե և Զ միավորները, որոնց հունարեն բնագիրը անհայտ է: Խնդրո առարկա հատվածները հայ դավանաբանական մատենագրության մեջ են մուտք գործել Կյուրեղ Ալեքսանդրացու Պարապմանց գրքից, Տիմոթեոս Կուզի Հակաճառությունից, Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովական նյութերից, ինչպես նաև՝ Հովհան Դամասկացու հակաճառական մի աշխատությունից:

Ստորև ներկայացնում ենք այդ հատվածները՝ հունարեն բնագրի համապատասխան

---

[3] Թղթի հունարեն բնագիրը տե՛ս I. B. Pitra, Iuris ecclesiastici Graecorum. Historia et monumenta, t. I, Romae, 1864, p. 576—600, հայ թարգմանությունը՝ Վ. Հակոբյան, Կանոնագիրք հայոց, հտ. Ա, Երևան, 1964, էջ 334—358:

[4] Թղթերի մասին տե՛ս Migne, PG., t. 35, p. 82—91.

[5] Ամփիլոքոս Իկոնացու մասին մատենագիտական տեղեկություններ տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 689—693, M. Geerard, Clavis Patrum Graecorum, v. II, Ab Athanasio ad Chrysostomum, Brepols—Turnhout, 1974, p. 230—242.

[6] Տե՛ս Migne, PG., t. 39, col. 65—88, 120—129, PG. t. 61 col. 745—752, 777—782, նաև՝ Э. Е. Гранстрем, Иоанн Златоуст в древней русской и южнославянской письменности (IX—XIV вв.) —Вопросы истории русской средневековой литературы—„Труды отдела древнерусской литературы", т. XXIX, Л., 1974, ст. 188. M. Geerard, pp. 232 (3237. փակագծում բերված այս և հետագա թվերը մատենագիտական միավորանիշ համարներն են), 241 (3251), 547 (4524), 555 (4548), 582 (4640), 586 (4654), 573 (4605), 588—89 (4661), 592 (4677), 606 (4724), 618 (4859): Այս երկերից շատը առկա է հայ մատենագրության մեջ նմանապես. («Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի», հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 897—902) M. Geerard, p. 232 (3238):

[7] Այս կապակցությամբ տես հատկապես նրա ժողովական թուղթը՝ Migne, PG. t. 39, col. 93—98.

[8] Հ. Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1239:

[9] Վենետիկի Միխիթարյան Մատենադարան, ձեռ. № 315, էջ 1ա—10բ:

[10] Acta Sanctorum, Martii, t. II, Parisiis, 1865, p. 938, Հ. Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 1270, Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 689 հմմտ. M. Geerard, նշվ. աշխ., p. 241 (3252, 3253):

մասի սկսվածքի և վերջի նշումով: Բնագրի, հայերենին համապատասխանող, հատվածներից ամենափոքրը (Դ միավոր) ներկայացնում ենք ամբողջովին:

**Ա. Ամփիլոքի եպիսկոպոսի յԻկոնիոյ, յորմէ յաղագս ըստ մարմնոյ ծննդեանն**

«Ճշմարտութիւն ծանուցաւ, շնորհն եկն[1] երևեցաւ, որ Որդին էր Աստուծոյ[2] յԱստուծոյ Բանն մարմին եղև վասն մեր, զի մահացուս[3] ի կեանս յաւիտենականս յարուցէ, և ի մեռելոց ի վեր կանգնեսցէ[4] Արարիչն բոլորիցս, որ նախ քան զամենայն արարածս երևելիս և աներևոյթս: Ընդ միայնոյ Հօր և Հոգւոյ գոլով[5] անմահ՝ այսօր աստ մեզ ի Կուսէ ծնեալ, առանց[6] ամենայն մեղաց Աստուծոյ, առանց առն[7]»:

«Գիրք պարապմանց սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի», Կ. Պոլիս, 1717, էջ 210:

Դավանաբանական քաղվածքների ժողովածու, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄԱՄ), ձեռ. № 8191, էջ 84ա—բ:

«Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովյն Քաղկեդովնի», աշխատութեամբ Կարապետ Տ. վարդապետի և Երուանդ վարդապետի, Էջմիածին, 1908, էջ 32 տ. 30—33 տ. 2:

Αμφιλοχίυ επισκόπου '/κονίου, ἐκ τοῦ
Περί τῆς κατὰ σαρκα γεννήσεως.

Ἡ ἀλήθεια ἐγνώσθη, ή χάρις ἦλθε, καὶ ἡ ζωὴ ἐφάνη. ὁ τοῦ Θεοῦ Υιός ὢν... χωρὶς πάσης ἁμαρτίας, ἄνευ ἀνθρωπου, ἤτου ἄνδρός.

(Cyril. Alek. lib de recta fide, Opp, t. V, part. II, sub fin. p. 50 et concil. Ephes, part. I, t. III, Concilior, p. m. 683) Migne, PG., t. 39, col. 100 B—C.

(Այսուհետև փակագծից դուրս կնշվի Մինյի հրատարակության միայն էջերը, իսկ փակագծից ներս՝ համառոտագրված բուն աղբյուրները, որոնք բերված են Մինյի մոտ):

Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը, ի տարբերություն նախորդ երկու աղբյուրների, հատվածի համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ ելով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեսցէ, 5 ելով, 6 առ, 7 Աստուծոյ, առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ' առն:

Համեմատությունը ցույց է տալիս, որ տիմոթեոսյան ընթերցումները համեմատաբար մոտիկ են հունարեն բնագրին. Տիմոթեոսի Հակաճառության նման հունարենում չիք վերջին տողի «Աստուծոյ» բառը: Հունարենի Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը, ի տարբերություն Պարապմանց գրքի և Դավանաբանական ժողովածուի, հատվածիս համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ ելով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեսցէ, 5 ելով, 6 առ, 7 Աստուծոյ առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ' առն:

Տիմոթեոս կուզի Հակաճառությունը, ի տարբերություն Պարապմանց գրքի և Դավանաբանական ժողովածուի, հատվածիս համար հետևյալ ընթերցվածներն ունի. 1 շնորհն եկն, կեանքն յայտնեցան, 2 Աստուծոյ ելով Որդի, 3 մահկանացուս, 4 ի մեռելոցն կանգնեսցէ, 5 ելով, 6 առ, 7 Աստուծոյ առանց առն փխ թանց մարդոյ կամ եթ' առն:

Բաղդատումը ցույց է տալիս, որ տիմոթեոսյան ընթերցումները համեմատաբար մոտիկ են հունարեն բնագրին. Հունարենի նման Տիմոթեոսի Հակաճառության մեջ չկա վկայաբերված հատվածի նախավերջին տողի «Աստուծոյ» բառը: Հունարենի հետ են համերաշխվում, օրինակ, Հակաճառության հետևյալ ընթերցվածները. թանց մարդոյ կամ եթ' առն (ἄνευ ἀνθρωπου, ἤτου ἀνδρσς), շնորհն եկն, կեանքն յայտնեցան (ή χαρίς ἦλθε, καί ἡ ζωὴ ἐφάνη).

Արդ. Համեմատությունից պարզվում է, որ Դավանաբանական ժողովածուի հատվածը բերված է Պարապմանց գրքի հայերեն թարգմանությունից, իսկ տիմոթեոսյան հատվածը բխում է ուղղակի հունարեն բնագրից:

**Բ. Ամփիլոքի եպիսկոպոսի յԻկոնացւոց**

Վասն զի նոյն ինքն թագաւոր է և Աստուած զմահ ըստ տնօրէնութեան չարչարանացն ճաշակեալ ընձայքն խորհրդոցն են նշանակք. Մատուցանեն ոսկի, քանզի ճանաչեն թագաւոր, մատուցանեն կնդրուկ, քանզի Աստուծոյ գիտացին մատուցանել: Ցուցին զմուռս վասն խորհրդի չարչարանաց մահու:

Վարդան Այգեկցի, «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ», ՄԱՄ, ձեռ. № № 1982 (էջ 59ա), 3295 (էջ 355ա), 4425 (էջ 175բ), Դավանաբանական քաղ. ժող. ՄԱՄ, ձեռ. № 8191, էջ 214բ, Վենետիկի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 316, էջ 22բ (Հ. Բ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 1289):

Ἀμφιλοχίου ἐπισκόπου Ἰκονίου

Ἐπειδὴ γὰρ ὁ αὐτὸς Βασιλεὺς καὶ Θεός, καὶ νεκροῦται διὰ τὴν τοῦ πάθους... Προσφέρουσι σφάγιον, διὰ τὴν ἐν τῷ μυστηρίῳ τοῦ πάθους νέκρωσιν.

(Concil. Ephes. part. II, act. 1, t. III. Concilior. p. 1063. Concil. Chalced. part. II, act. 1, t. IV, Concilior. p. 1145). col. 100C.

Հատվածի սկսվածքը մի փոքր այլ է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ում. «Նոյն ինքն Թագաւոր և Աստուած և զկիրս տնօրէնութեան յանձն էառ...»:

### Գ. Նորին ի նոյնս

Եթէ ոչ էր Նորա ծնեալ մարմնապէս և ոչ դու ծնանէիր հոգէպէս: Եթէ ոչ էր Նորա յանձն առեալ զծառայի կերպարանս և ոչ դու զփառս զորդեգրութեան շահէիր: Վասն յերկրի երկնաւորն, զի դու յերկինս նցես երկրաւորդ: Վասն Քրիստոս զինքն ունայնացոյցն, զի մեք ամենեքին ի լրմանէն Նորա առցուք: Նորայն մահ մեզ անմենցուն եղև անմահութիւն, Տեառն չարչարանքն ծառային բարձրութիւն եղև, և դու զերախտիսն առնուս ի հանութենէ մեքենայս:

ՄԱՄ, ձեռ. № № 1982 (էջ 55բ), 3295 (էջ 354ա), 4425 (էջ 174բ—175ա), 8191 (էջ 214բ), Վենետիկի Մխիթ. Մատ., ձեռ. № 316, էջ 22բ:

Ὁμοίως τοῦ αὐτοῦ

Εἰ μὴ γὰρ ἐκεῖνος ἐγεννήθη σαρκικῶς, οὐκ ἂν σὺ ἀνεγεννήθης πνευματικῶς... Σὺ δὲ τὴν εὐεργεσίαν λαμβάνεις Βλασφημίας ἐφόδιον.

(Concil Chalced. part. II, act. 1, t. IV, p. 1145). col. 100D—101A

### Դ. Անփիլոքայ եպիսկոպոսի յԻկոնիոյ, զոր գրեաց թուղթ

Այսպէս Աստուած և մարդ զՔրիստոս խոստովանիմք, Որդի Աստուծոյ. զՄի և զնոյն յերկուց բնութեանց կրաւորական և անկրական, մահկանացու և անմահ:

**Յետ սակաւուց.** Մի Որդի յերկուց բնութեանց ասեմք. Անայլայլելի, անշփոթելի, անբաժանելի, անփոփոխելի:

Ժողովածու թղթոց, ՄԱՄ, ձեռ. № 500, էջ 284ա:

Τοῦ ἁγίου Ἀμφιλοχίου ἐπισκόπου Ἰκονίου, ἐκ τῆς πρὸς Σέλευκον ἐπιστολῆς.

Οὕτω Θεὸν καὶ ἄνθρωπον τὸν Χριστὸν ὁμολογῶ, τὸν Υἱὸν τοῦ Θεοῦ, ἕνα Υἱόν, δύο φύσεων, παθητῆς τε καὶ ἀπαθοῦς, θνητῆς τε καὶ ἀθανάτου.

Καὶ μετ' ὀλίγα. Ἕνα Υἱὸν δύο φύσεων φημι, ἀσυγχύτως, ἀτρέπτως, ἀδιαιρέτως.

(S. Soannem Damascenum, lib. contra Jacobitas, t. I, pp. 423, 424, ed. Paris, 1712). col. 113B.

Հատվածը, որ մի բեկորն է Ամփիլոքոս Իկոնացու սնկլեկիացիներին հղած թղթի[11], բերված է Հովհան Դամասկացու՝ Հակոբիկյան եկեղեցու դեմ գրած հականառական մի երկից: Սակայն հայերեն թարգմանության մեջ բացակայում է բնագրի վերջին երկու նախադասությունը, որոնցից առաջինն (πάσχει... ἀλλ' ἀνθρωπότητι.), ի դեպ, առկա է Դամասկացու այս երկի հրատարակության մեջ, իսկ հատվածն ամբողջովին, երկրորդ նախադասության հետ մեկտեղ մինչև վերջ (... καὶ Βλάσφημον, δέχεται) վկայված է նրա երկը պարունակող բարլահամյան հավաքածուի ձեռագրերում[12]:

### Ե. Ամոնիկոսի եպիսկոպոսի

Արդ հաց պատարագին խմոր խառնուած ոչ ունի, որպէս և ոչ Քրիստոս՝ ապականութիւն:

ՄԱՄ, ձեռ. № № 1982 (էջ 116ա), 3295 (էջ 371բ), 4425 (էջ 190ա), «Դաւանաբանական վկայութիւնք ի գրոց վարդապետաց», ՄԱՄ, ձեռ. № 3679, էջ 137ա:

### Զ. Անփիլայ եպիսկոպոսի

Բանն մարմին եղև վասն մեր՝ միշտ անապական առանց ամենայն ապականութեան:

Անանիա Սանահնեցի, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», ՄԱՄ, ձեռ. № № 6453 (էջ 48ա), 5618 (էջ 170ա), «Սրբութիւն յաղագս Քրիստոսի ի բանից հարանց եկեղեցականաց», ՄԱՄ, ձեռ. 4246, էջ 111ա:

Ամփիլոքոս Իկոնացու ճառական երկերից բերված այս հատվածը, որ նախորդի նման այժմ բացակայում է հունարեն բնագրով, հայ դավանաբանական մատենագրության մեջ է ներմուծվել հավանաբար Անանիա Սանահնեցու (ԺԱ. դ.) Հակաճառության միջոցով:

[11] Թղթից բերված համապատասխան հատվածների մասին տես F. Cavallera, Les fragments de saint Amphiloque dans l'Hodegos, „Revue d'histoire ecclesiastique", № 8, 1907, p. 488—491. Նրանց բաց՝ M. Geerard, նշվ. աշխ., p. 238.

[12] Տե՛ս Migne, PG., t. 39, col. 114, annot. 17.

## ՑՈՒՑԱԿ
## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. 54ա.— Գրեցաւ նուիրակական օրհնութեան կոնդակս ի քաղաքամայր Սբ. Երուսաղէմ ի Սբց. Յակոբեանց առաքելական նախագահ սուրբ Աթոռս ամ. հայոց, ի թուականիս մերոյ ՌՄԿԹ (1820 թ. —Ն. Մ.) յամսեանն օգոստոսի տասին։

Թ. 54բ.— (Նոր Ջուղայի վանքից) 1824 թ. մարտի 25-ին։

Թ. 57բ.— Գրեցաւ և ծաղկեցաւ օրհնութեան նամակս յամի Փրկչին մերոյ ի 1819 Յունուար ամսոյ 25-ին, ընդ հովանեաւ Լմայ հրեշտակաբնակ սրբոյ Անապատիս. ընծայեցեալ ի յերկուց սրբոց Անապատաց մտերիմ զծողովարար Սիմէօն ճգնազգեաց և ծայրագոյն վարդապետին զոր Տէր անամազ պահեսցէ, երթալն և ի գալն։

Թ. 59ա.— Եւ մեք մնամք վասն ձեր ջերմեռանդ աղօթարար Ցամի Տն. 1819 և հայոց ՌՄԿԸ (1819 թ.—Ն. Մ.) մայիսի 16-ի ի Սուրբ Կաթուղիկէն Էջմիածին։

Կթուղկս ամ Հայոց
վշտակիր Եփրեմ

Եթէ եկեալ ժողովարարն Սբ. Նշան կամ մասունք սբց. ունիցի ընդ ինքեան վս. այնր հրամանէ ի մէնջ ի սբ. եկեղեցւոջն միայն բանալ, և ոչ շրջեցուցանել տանէ ի տուն որ մեծ մեղք և անպատոի է. բայց եթէ միայն վս. մերձ ի մահ հիւանդին տանիլն ըստ հաւատոյ և ըստ խնդրոյ նորին ներողութ հրմն տմք։

Ե. Կ.

Թ. 59բ.— Գրեցաւ ի Վանս սրբոյ Ամենափըրկչիս մերոյ յամի Տն. 1824 ի մարտի 25-ին։

Թ. 60բ.— (Նույն վանքից) Ցամի Տն. 1826 փտրվ. 20-ին ի Նորո Ջուղայ։

Թ. 61ա.— (Նույն վանքից) 1826 Ապրիլ 15-ին ի Նորո Ջուղայ։

Թ. 61բ.— (Նույն վանքից) 1829 Ապրիլ 18-ին։

Թ. 64ա.— (Նույն վանքից) 1828 մայիսի 13-ին։

Թ. 64ա.— (Նույն վանքից) 1828 մայիսի 15-ին։

Թ. 66բ.— Գրեցաւ օրհնութեան և նուիրակութեան կոնդակս ի վայելչազարդ Մայրաքաղաքիս Սբ. Երուսաղէմ ընդ հովանեաւ Սրբոց Յակոբեանց տիեզերածաւալ և համայնաբաղձ Աստուածադիր Աթոռոյս ամ. Հայոց. ի թուին ՌՄՀԸ (1829 թ.— Ն. Մ.) յուլիս ԻԳ։

Թ. 67բ.— Գրեցաւ յԱսպահան ի Նորո Ջուղայ ի վանս Ամենափրկչին մերոյ յամի Տն. 1831 Ապրիլի ամսոյ 27-ին։

Թ. 69բ.— (Նույն վանքից և նույն թվականին)։

Թ. 70ա.— (Նույն վանքից) 1832 Սեպտեմբերի 28-ին։

Թ. 71ա.— 1832 յունիսի 1։ Ի Սբ. Էջմիածին։ № 166։

Կթուղկս. ամ. Հայոց Եփրեմ։

Թ. 74բ.— (Անդրանիկ կոնդակ) 1832 յամսեանն յունիսի 1։ Ի Սբ. Կթուղկէ Էջմիածին։ № 167։

Վս. ձեր միշտ ջերմեռանդ աղօթրար
Կթուղկս ամ Հայոց Յովհաննէս։

Թ. 74բ.— 1833 մայիսի 15, ի Սբ. Աթոռս Ամենափրկչի, որ ի Նոր Ջուղայ։

Արքեպս. Հայոց Հնդկաստանու և Պարսկաստանեայց խոնարհ ծոյ.

Յոհաննէս։

Թ. 76ա.— (Նույն վանքից և նույն անձից) 1833 Մայիսի 15-ի, № 151։

Թ. 78ա.— (Նույն վանքից) Ցամի Տն. 1833 օգոստոսի 24 ի Սբ. Աթոռս Ամենափրկչի որ ի Նորո Ջուղայ։

Միր.։ Արքեպս. Հայոց Հնդկաստանու և Պարսկաստանեայց խոնարհ ծառայ Յոհաննէս։

Միր.։ Յաջորդ Յակոբոս վարդապետ։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե--Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի №№ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի №№ Գ—Ժ-ից, 1978 թվականի №№ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի №№ Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի №№ Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի №№ Ա—Դ-ից, Է-ից և Թ-ից։

Միք.: Լուսաւոր Յոհան վարդապետ:
Միք.: Յոհան վարդապետ:
Առաքելածատուր վարդապետն ոչ էր ներկայ:
Գէորգ վարդապետն ևս չէր ներկայ:

№ 215:

Թ. 79ա.— 1835 Ապրիլ ամսոյ միոյն ի Նոր Ջուղայ որ յԱսպահան:

Արքեպս. պատուելի Հայոց վիճակացն սրբոյ Աթոռոյս Ամենափրկչի:

(ձեռնադրեալ) խոնարհ ծառայ՝ Յովհաննէս:

Թ. 81ա.— (Նոյն վանքից) Յամի կենարարին մերոյ ՌՊԼԵ (1835 թ.— Ն. Մ.) Յամսեանն Յուլիսի քսան և վեցին:

Թ. 82ա.— (Նոյն վանքից) 1834 փետրվարի 10:

Արքեպս. նայոց Հնդկաստանու և Պարսկաստանեայց խոնարհ ծառայ Յոհաննէս.

Յաջորդ Յակոբոս վարդապետ:

Թ. 82բ.— (Նոյն վանքից) 1835 ապրիլ 30.

Յովհաննէս Արքեպս.

Թ. 84բ.— Եւ մեք եմք և մնամք վս. ձեր ամցին աղօթարար.

Կաթողկոս ամ. Հայոց Յովհաննէս.

Հմր. 514, 1838 սեպ. 24, ի սբ. Էջմիածին:

Թիւն 1839 Նոյեմբր ...ին նման և նոյնոյ ամսի 10-ի ընթերցեալ եղև ի ժամ Սուրբ Պատարագին:

Թ. 86ա.— ... և ամենաջերմեռանդ աղօթարար վասն ձեր.

Կաթողիկոս ամենայն Հայոց Յովհաննէս (ձեռ»):

Համար 507, ի 24 Սեպտեմբերի 1838 ամի, ի Սբ. Աթոռն Էջմիածին:

Թ. 89ա.— (Նոյն վանքից և նոյն անձից)

Հմր. 195, ի 27 մարտի յամի 1837 և Հայոց ՌՄՁԶ (1837 թ.— Ն. Մ.), ի սբ. Կաթողիկէն Էջմիածին:

Թ. 90ա.— Գրեցաւ ի վանս Սրբոյ Ամենափրկչին մերոյ Յամի ՏՆ. 1840 յունիսի 28:

Արքեպիսկոպոս Հայոց Հնդկաց և Պարսից՝ Խաչատուր

Յաջորդ՝ Յակոբոս վարդապետ:

Թ. 91ա.— Եւ մեք մնամք մշտնջենաւոր օրհնարարն ձեր և ամենաջերմեռանդ:

Աղօթարար վասն ձեր

Կաթողիկոս ամ. Հայոց Յովհաննէս:

Համար 112: Ի 1841 ամի ՏՆ. օգոստոսի 14:
Ի Սբ. Կաթողիկէն Էջմիածին:
Գաղափարս նախատիպին համեմատ տեսաք.
Տէր Յովհաննէս Գալստեան.
Տէր Յովհաննէս Խաչիկեան:

Թ. 94բ.— (Կոնդակ Ս. Երուսաղեմի Պատրիարք Զաքարիա Արքեպիսկոպոսի: 1842 թ. մայիսի 17:)

Թ. 96բ.— Գրեցաւ ի Սբ. Միրաքնս. Ամենափրկչեան ի յեկան Յուլիսի ամսոյ 1843 ամի, ի Նոր Ջուղայ:

Արքեպիսկոպոս Հայոց կող...... սիրատամի Հնդկաստանի...... Յոհան Յովհաննէս Սու ....

Թ. 97բ.— (Նոյն վանքից և նոյն անձից) 1843 թ. յուլիսի 28:

Թ. 98բ.— (Նոյն վանքից և նոյն անձից) 1843 թ. յուլիսի (30):

(Վերոհիշյալ բոլոր կոնդակները և գրությունները, որոնք ուղարկված են Կալկաթա՝ Ս. Էջմիածնից, Երուսաղեմի և Նոր Ջուղայի վանքերից և այլ վայրերից, մեծագույն մասն առնչվում է նյութական օգնության և նվիրատվությունների մասին: Փոքր տոկոսը միայն հանդիսանում է Էջմիածնի կաթողիկոսի անդրանիկ կոնդակը (թթ. 27ա, 74բ), կամ նվիրակների և այլ հոգևորականների Հնդկաստան այցելության մասին զանազան առիթներով):

№ 538
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

**Թերթերը՝** 227:— **Պրակները՝** 19, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա պրակը, որ միայն 11 թերթ ունի:— **Մեծությունը՝** 22.2×16×5.4 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա նեշումով խաչ և այլ զարդեր են նկարված:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կան երկուական թերթ դեղնած և կեղտոտված մագաղաթ, 12—13-րդ դարերի: Գիրը միջին երկաթագիր է, իսկ բովանդակությունը Նոր Կտակարանից է (Մատթեոսի Ավետարանի կորուսյալ ոչխարի պատմությունը):— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չկան:— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** նեշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի բազմաթիվ լուսանցազարդեր, թռչուններ և զարդագրեր: Կան նաև մի քանի թռչնագրեր և խաչեր, ինչպես նաև մի հատ գլխազարդ (3ա): Այս բոլորը զարկ են արծիբից և ունեն հասարակ որակ:— **Գրիչը՝** Հակոբ կրոնավոր:— **Պատվիրատուն՝** Մելիքշա որդի Մուրադ Չելեպիի:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1611 թ.:— **Վայրը՝** անհայտ:— **Մանրաքննություն՝** ձեռագիրն երկար տարիներ պատկանել է Յազըճյան գերդաստանին: Վերջերս Պլովդիվի (Բուլղարիա) բնակիչներ Հարություն և Խաչիկ Յազըճյան եղբայրները այն նվիրել են Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Գեր. Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանին: Այս վերջինն էլ իր հերթին 1981 թ. մայիս ամսին նվեր է ուղարկել Մայր Աթոռիս ձեռագրատան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— (Տրված է գլուխների ցուցակը:)

Թ. 3ա.— Յառաջաբանութի(ւն)ք առաքելական կանոնաց:

Թ. 20ա.— Կանոնք և սահմանք Թադէոսի առաքելոյն:

Թ. 20բ.— Կանոնք Փիլիպպոսի առաքելոյն:

Թ. 27բ.— Կանոնք զոր եդին ս(ուր)բ հարքն զկնի ս(ուր)բ առաքելոցն. գլուխք Ի և Է (=27)։

Թ. 29բ.— Դ կանոնք Նիկիականք։

Թ. 33բ.— Այլ կանոնք Նիկիական։

Թ. 35ա.— Անկիւրիեայ կանոնք. գլուխք Ի (=20)։

Թ. 37բ.— Կեսարեան կանոնք. գլուխք Ժ (=10)։

Թ. 39ա.— Կանոնք Նիոյ Կեսարոյ. գլուխք քսան։

Թ. 41ա.— Գանգրայ կանոն. գլուխք ԻԴ (=24)։

Թ. 45բ.— Անտիոքայ կանոնք. գլուխք ԻԳ (=23)։

Թ. 48բ.— Դարձեալ նոցին կանոնք երկրորդ։

Թ. 49ա.— Ղաոդիկեցոց կանոնք յիսուն ու հինգ։

Թ. 52ա.— Սարդիկէ կանոնին. գլուխք քսան և մէկ։

Թ. 53ա.— Կոստանդինուպոլսի կանոնք երէք։

Թ. 53բ.— Եփեսոսի ս(ուր)բ ժողովոյն կանոնք Զ (=6)։

Թ. 54ա.— Դարձեալ ն[ո]ց[ա] այլ կանոնք. գլուխ ԺԶ (=16)։

Թ. 55ա.— Նիկիայ ս(ուր)բ ժողովոյն մնացորդ կանոն։

Թ.. 55բ.— Հարցմունք պէսպէս և պատասխանի Աթանասի Աղեկսանդրացի Եպ[իս]կ[ոպո]սի կանոնք Ղ (=90)։

Թ. 70բ.— Գիր կանոնական մեծի և գիտնականի երանելոյն Բարս[ե]ղի Կեսարացոյ Եպ[իս]-կ[ոպո]սին. գլուխք յիսուն։

Թ. 80ա.— Դարձեալ սրբոյն Բարս[ե]ղի վ[ա]-սը[ն] ամենին հեռանալու յազգային կին առնելոյ։

Թ. 81բ.— Գիր կանոնի երանելոյն Եպիփանու Կիպրացոյ Եպկսի. մեծի և առաքինոյ մարգարէի և նշանագործի. գլուխք Գ։ Վ[ա]ս[ն] ք[ա]հանայից և սարկաւագաց զգուշութի[ւն] ի կանանց յորժամ ի սպասաւորութի[ւն] սրբոյ խորհրդոյն մատչին։ Աւ-րէնդրութի[ւն] ոչ մերձենալ ի կին իւր ապարախ վասն քահանայից և սարկաւագաց։

Թ. 86ա.— Կանոնք սրբոյն Գր[ի]գ[որ]ի Լուսաւորչին. գլուխք Լ(=30)։

Թ. 88ա.— Կանոնք սրբոյն Ներսէսի հայրապետին. գլուխք ԼԳ (=33)։

Թ. 89բ.— Դարձեալ և այս կանոնք յաւուրս Ներսէսի մեծի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի. գլուխք երեսուն և եւթ։

Թ. 94ա.— Սահմանք և կանոնք սրբոյն Սահակայ Հայրապետին։

Թ. 97բ.— Մեծ և Երանելոյ սրբոյն Սահակայ հայոց հայրապետի յաղագս քորեպ[իս]կ[ոպո]սաց թէ որպ[էս] պարտ է զկանոնական զկարգս հաստատուն պահել յեկեղեցիս։

Թ. 100բ.— Կանոն սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի ի լրումն հաւատոյ ամ[ենայն] աշխարհի հայոց մեծաց. գլուխք ԺԹ (=19)։

Թ. 105ա.— Սահմանք և կանոնք կարգի Ա[ստուծո]յ Սրբոյ եկեղեցոյ զոր եդին վարդապետք հայի նոյն լրութի[ւն] առաքելական և Նիկիական կանոնաց հաստատութիւն։

Թ. 122բ.— Նորին կանոնք. գլուխք տասն և հինգ։

Թ. 125բ.— Կանոնք Մովսէսի Քերթողահաւրն. բան հարցողաց և պատասխանիք. գլուխք հընգէտասան։

Թ. 128ա.— Կանոնք Տն. Սիոնի հայոց կաթուղիկոսի. գլուխք յիսուն և երեք։

Թ. 129բ.— Կանոնք ժամարարաց խրատք զգուշութեան։

Թ. 133բ.— Սրբոց կաթուղիկոսաց հայոց և այլ հոգէշահ վարդապետաց. կանոնք և խրատք զգուշաւորք ք[ա]հան[այ]ից երկիւղածաց. մանկացն սուրբ եկեղեցոյ։

Թ. 135բ.— Վ[ա]ս[ն] կամայ և ակամայ գինութե[ան] կարգ և խրատ[ք]։

Թ. 137ա.— Վ[ա]ս[ն] զգուշութ[եամ]բ սպասաւորելոյ ս[ր]բ[ոյ] խորհրդոյն։

Թ. 138ա.— Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատահմանց եկելոց ի զգուշութի[ւն] զոր հարցեալ հանրակ ք[ա]հանայ, որոյ անուն արքայութի[ւն] կոչի զԴաւիթ ումն ք[ա]հանայ, գիտնական յոյժ։

Թ. 139բ.— Հ[ա]րցումն երկր[որ]դ վ[ա]ս[ն] մկան յազ անկանելս։

Թ. 141ա.— Հարցումն երրորդ վասն մկանն լինելոյ։

Թ. 142ա.— Հարցումն չորրորդ։

Թ. 189ա.— Սահմանք և կանոնք սրբոյն Եղիշայի, առ ի խրատս ամ[ենայն] որդոց մարդկան։

Թ. 194ա.— Վ[ա]ս[ն] ատինանաց ազգականութե[ա]ն յերրորդ գրոցն Տիտոսի առաքելոյն։

Թ. 195բ.— Ամենայն առաքինութ[եամ]բ զարդարեալ և կատարեալ Ածակիր. հոգէլից առն Այ Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ ասացեալ յաղագս ազգականո:թե[ան]։

Թ. 206ա.— Հ[ա]րցումն ուսումնասիրաց և պ[ա]տ[աս]խ[ա]նիք ս[ր]բ[ոց] վ[ա]րդ[ա]պ[ե]--տ[ա]ց։

214ա.— Հարցմունք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և պատասխանի հրեշտակապետին վ[ա]ս[ն] հոգոց արդարոց և մեղաւորաց։

Թ. 224բ.— Առաջին սրբութի[ւն] մարդոյն խոստովանո:թի[ւն] է...

(Ձեռագրի վերջում կան մի շարք աղյուսակներ, գծված կարմիր թանաքով, որոնք ցույց են տալիս հարազատների ազգակցական կապերը, խնամիական և պորտերի հարաբերությունները և այլն։ Ստորև տրվում է դրանց ցուցակը միայն)։

Թ. 192բ.— Ատինանք արիւնացս։

Թ. 193ա.— Ներսէսի հայոց կաթուղիկոսի արարեալ։

Թ. 197ա.— (Երկու ընտանիքների խնամիական կապերի մասին։)

Թ. 197բ.— Այր և կին մի մարմին են։ Եւ են հայր և մայր զաւակացն և աղոյ պապ և աղոյ մայր ձաղ թոռնիայցն։

Թ. 199բ.— Հայր և մայր երկու քերցդ և աղոյ պապ և մամ ձաղ թոռնիայցն։

Թ. 200ա.— Ծաղագս հոգևոր ազգակցութեանն։

Թ. 201ա.— (Երկու եղբայրների ընտանիքների ազգակցական կապերի մասին)։

Թ. 201բ.— Կնքահայրն որ ունի Բ(=2) սան ո[ւ]րիշ ո[ւ]րիշ մարդոյ։

Թ. 202բ.— (Երկու եղբայր պապերի հետագա սերունդների ազգակցական կապերի մասին։)

Թ. 203բ.— (Երկու եղբայրների և կնքահոր ազգակցական կապերի մասին։)

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 26ա.— (Նախկին ձեռագրի հիշատակարանը, որտեղից արտագրված է սույն մատյանի այս գլուխը։)

Զայս արէնադրութի[ւն]ս ես Զաքէ աշակերտ ս[ուր]բ առաքելոյն Թադէոսին գրեցի, ո[ր]պ[էս] [ո]ւալ ի նմանէ ամենայն հաստատցելոց ի Քս որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Թ. 97ա.— Զկարգ եկեղեցոյ հաստա[թ. 97բ]—տուն և անշարժ եղիցին և Ած փառաւորեսցի յամ[ենայն]ի այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենի[ց]։

Թ. 196բ.— Եւ տես ի կարմիր և ի սև թելերդ որ քաշեր եմ ի տփերդ և մեղաւորիս Ած ողորմի ասայ որ յաղիւսակըդ աշխատեցայ։

Թ. 213բ.— Փառք ամենաս[ուր]բ Երրորդութե[ա]ն հօր և որդոյ և հոգոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանս ամէն։ Կանոնական սահմանադրութե[ան]ցն գիրումն ուղղաննմ հաւատոցն, զոր ի հոգոյն սրբոյ ընկալեալ հարցն և հայրապետացն յարդարեցին մեզ ճանապարհ կենաց, առ լուսանմ կեանսն օրէնքանին բոլորից մարդկան կազմեցին դեղ կենաց համարէն փիրաւորեալոցս մեղօք։ Զոր մեծաւ ցանկութ[եամ]բ սիրեցեալ սեռն սիրով սրտի մտօք զբժշկարանս զայս հոգոց, ես անարժան և անպիտանս ամ[ենայն]ի, Մէլիքշայ որդոյ Մուրատ Չէլէպիին, գրել տուի իմ հալալ ընչից ի վայելումն անձին իմոյ և որդոց իմոց, և յիշատակ ծնօղաց իմոց, ով որ կարդայ օգտի ի սմանէ. յիշեսջիք զվերոյգրեալ զՄէլիքշան և զծնօղս իւր, զհոգևոր և զմարմնաւոր և զամ[ենայն] յազգայինս զկենդանիս և զննջեցեալսն ամէն։ Արդ գրեցաւ սայ ի թվ[ա]կ[ա]նիս հայոց ՌԿ [=1611] և յամսեանն մարտի Լ[=30] օրն շ[ա]բ[ա]թ, ի ձեռն թերավարժ և յոգնամեղ Յակոբ սգաւորին եղև սկիզբն և աւարտումն, ժողքեցէք վ[ա]սը[ն] իմ ով հանդիպողքդ առ Տ[է]ր և յիշեցէք ի բարին և դուք յիշեալ լիջիք յարքայութե[ան]ն Այ ամէն։

Թ. 224ա.— (Նույն գրչի երկրորդ հիշատակարանը։)

Գրեցաւ թվ. ՌԿԱ [=1612] ապրիլ յամսոյն ԻԹ [=29] աւրն Դշի [=չորեքշաբթի]։ Ողորմի գրչի գրոցս անարժան և անպիտան մեղաւոր ծառայիս Աստուածուն Յակոբ Կրօնաւորիս, աղաչեմ զձեզ միղաց իմոց և [ս]անցանացս թողութիւն խնդրեցէք ի Տ[եառն]է և ծնօղացս և մեր ուսուցանողացն Ած ողորմի ասացէք, և ինքն որ առատն է ի տուրս բարեաց, ողորմեսցի ձեզ և մեզ, ամէն, Հայր...։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Տրվում են միայն կարևորները։)

(Մեջքի մագաղաթյա պահպանակի վրա գրված է)

ՌԿԶ [=1617] թվին տայ Ռովհաննես կաղապիկոս սրբաքուրտի գիրք տան Ա բլ տան։ Ա ըը Այ հոգում է ար հաղորդ պան անհաղորդ տա հոյնոյայ տիլայսիզ։

Թ. 1ա.— ... Բիլիպոս կաղապիկոս արհնութին տայ Իւ Թուրլի անեծքեալ մէջ այլոց վիճակոց ձեռնադրեսցէ նծովեալ եղեցի ի հանս և ի մահ։

Թ. 1բ.— ... Սբ. Էջմիածին նվիրակի Խաչատուր վրդպի պտքրտի... Ովանես կաթողիկոս տանի ... թվին ՌՁԴ [=1635] տայ Էջմիածին նվիրակի Մինաս վդպ անկարծակի մահ...։

Թ. 148բ.— Հարսանիս խաղ առնել կամ քահանայ կամ աշխարհականի վնասն։

Թ. 185բ.— Տես աստղայգետի սինդ պախինի ջուրի յայնայի հայող ստատանանի բերնով խոսող պեղծին ինչ կասէ։

(Ձեռագրի վերջում գտնվող մագաղաթյա պահպանակի վրա կա երկար մի հիշատակագրություն, գրված երկաթագիր տեքստի տողերի արանքում։ Գրված է պատվիրատու Մելիքշայի որդու Վահանի կողմից։ Այստեղ կան բազում անուններ։ Տեքստը դժվար ընթեռնելի է։)։

## № 539
## ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

**Թերթերը՝** 12, որոնք մեկը մյուսից անջատ են։— **Պրակներ՝** չկան։— **Մեծությունը՝** 13×11.6×1 սմ.։— **Նյութը՝** կոշտ, դեղնած և կեղտոտված հաստ մագաղաթ։— **Կազմը՝** բաց սրճագույն կաշի, որի վրա արեգակի ճառագայթների նման ոսկեգույն գծեր են քաշված։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** վատ։ —**Գրությունը՝** միասյուն։ —**Դատարկ թղթեր՝** չունի։— **Տողերը՝** 8։— **Գծումներ՝** չունի տեքստը, սակայն գրությունը գրված է ոսկեգույն զուգահեռ գծերի միջև։— **Գիրը՝** անկանոն բոլորգիր։— **Զարդագրություն՝** չունի։ Բոլոր էջերի գրությունը առնված է ոսկեգույն լուսանցքների մեջ։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատու՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝** շատ հավանաբար Պարսկաստան։— **Մանրթագրություն՝** Մոսկվայից Տիրան վարդապետ Կյուրեղյանը նվեր է ուղարկել Մայր Աթոռի Ձեռագրատան։ Ձեռագիրը ստացված է 6 հունիսի 1981 թ. ձեռամբ Վեհափառ Հայրապետի։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Տեքստը գրված է աշխարհաբար լեզվով և ունի բարոյախոսական բնույթ:)

Թ. 1բ.— Ա
ս
տ
Աստուած
ա
ծ

Նա որ միայն ններևի մեղքեր խոստովանելով և ոչ մէկի վրայ չի ...

(Տեքստը գրված է կիսագրագետ մի մարդու կողմից:)

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— (Էջի կենտրոնում կապույտով գրված մի գրություն կա, որ մասամբ անընթեռնելի է.)

Կլայ
յև+նի+վ
յաի:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— (Այստեղ կա երեք տողանոց պարսկերեն մի գրություն, գրված 19-րդ դարի վերջերին:)

Թ. 12բ.— (Այստեղ կա չորս տողանոց պարսկերեն մի գրություն, որի թվականն է 1802 թ., նշելով, որ հայերեն սույն ձեռագիրը պատկանում է Վաքըֆի վարչության գրադարանին:)

## № 540
## ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Սլավոներէն)

**Թերթերը՝** 232:— **Պրակները՝** 28, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Ի պրակը, որ 7 թերթից է բաղկացած:— **Մեծությունը՝** 18.8×11.9×3.8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտված հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, քայքայված: Երկու բռնիչները ընկած են:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում չորսական թերթ հասարակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 3բ—4բ, 210ա, 210բ, 220բ—232բ:— **Տողերը՝** 15:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** գլագոլիցա:— **Զարդագրություն** վերնագրերն և տեղ-տեղ լուսանցքների գրությունները կարմիր թանաքով են: Տեղ-տեղ կարմիր կամ սև փոքրիկ (6—7 մմ.) խաչիկներ կան: Ութ էջում կան հասարակ գլխազարդեր, 1×7 սմ. չափերով: Դրանք կլիշեով տպված են սև գույնի թանաքով և մեկը մյուսին նման չէ (թթ. 5ա, 5բ, 162ա, 163բ, 165բ, 178բ, 195ա և 203):— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դդ.:— **Վայրը՝** շատ հավանաբար Ուկրաինա:— **Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրը ստացված է Մոսկվայից 6 հունիսի 1981 թ. ձեռամբ Վեհափառ Հայրապետին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Բոլորը գրված է հին ռուսերենով՝ սլավոներեն:)

Թ. 1ա.— Պյոտր Բրա:

Եվստաֆի աստվածաբանի գիրքը, որ բովանդակում է իր ուսմունքը, նրա մեկնությունները Ս. Երրորդության, հավատի, սիրո և հույսի, ինչպես նաև եկեղեցական արարողությունների մասին: Նաև յոթ խորհուրդների մասին:

Թ. 5ա.— Քրիստոնեական վարքի կանոնադրություն:

Թ. 5բ.— Մեծ պահքի մասին:

Թ. 36ա.— Սրբոց վարք:

Թ. 162ա.— Ինդիկտոն աշխարհի սկզբից և Ադամի ծննդից սկսած:

Թ. 165բ.— Ս. Զատկի շրջանի կարճ օրհներգություններ:

Թ. 178բ.— Լուսնի օրացույց:

Թ. 195ա.— Կարճ աղոթքներ և հոգևոր երգեր:

Թ. 211ա.— Կիևյան-Պեչորա վանքի Հարանց Վարքից երանելի Ագապիտի մասին: (Ագապիտը բուժումներ է կատարել: Այս ժամանակ Կիևում մի հայ է եղել, որ նույնպես ծանոթ էր բժշկության, հիվանդին տեսնելով գուշակում էր մահվան թվականը: Հայ բժիշկը (որի անունը չի տրվում) մրցել է Ագապիտի հետ, իսկ վերջում հայը ետ կանգնելով հայկական դավանանքից այս վանքում ձեռնադրվել է հոգևորական:)

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրի մի շարք էջերում (թթ. 8բ, 28բ, 36բ, 54բ, 68բ, 84բ, 108բ, 124բ, 136բ, 203բ, 204բ և 215բ) ռելիեֆով տպված է թղթի գործարանի կնիքը, 1.7× 1.5 սմ. չափերով: Վրան գրված է հետևյալը

Сурской
И—Сергъева—6
фабрики
(Սկզբի կազմի կռնակում)
Апреля 22-го
ъ=С=п
5-го ноября...

Թ. 232բ.—Молоковъ Василий Нико.

## № 541
## ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ

**Թերթերը՝** 68:— **Պրակները՝** 9, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Ա և Թ պրակները, որոնք 6-ական թերթից են:— **Մեծությունը՝** 11.2×8.4×1 սմ.:— **Նյութը՝** հասարակ սպիտակ թուղթ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—6բ, 26բ, 48ա—68բ:— **Տողերը՝** 15—17:— **Գծումները՝** ճնշումով:—

**Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անծանոթ։— **Պատվիրատուն՝** անծանոթ։— **Ժամանակը՝** 19-րդ դար։— **Վայրը՝** անծանոթ։— **Մանրություն՝** Երևանցի բարեպաշտ մի կին սույն ձեռագիրը նվիրել է Մայր Աթոռի Ձեռագրատանը 15 Սեպտեմբերի 1981 թ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 7ա.— Հանդէս մահու։
Թ. 21բ.— Հանդէս դատաստանի։
Թ. 35ա.— Հանդէս դժոխոց։

№ 542
ԿԱՆՈՆՆԵՐ

**Թերթերը՝** 28 (14+14)։— **Պրակները՝** 2, յուրաքանչյուրը 14-ական թերթից։— **Մեծությունը՝** 15×9.5×0.2 սմ.։— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ։— **Կազմը՝** կարմիր թավշապատ ստվարաթուղթ։ Ժամանակին կազմի երկու երեսին մեխերով ամրացված են խաչ և այլ զարդեր, շատ հավանաբար արծաթյա, որոնք բոլորն էլ հետագայում հանված են։ —**Պահպանակները՝** վերջում ծաղկավոր մի սև թուղթ կպած է էջ 28բ-ին։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միասյուն։— Դատարկ էջերը՝ 16ա, 16բ, 27ա—28ա։— **Տողերը՝** 25—26։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անծանոթ։— **Պատվիրատուն՝** շատ հավանաբար Հակոբ ավագ քահանա Սուրենյանն։— **Ժամանակը՝** 19-րդ դար։— **Վայրը՝** շատ հավանաբար Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքը, որտեղ երկար տարիներ ապրել և ծառայել է Հակոբ ավագ քահանա Սուրենյանցը։— **Մանրություն՝** սույն գիրքը տպագիր մի Ավետարան է, տպված Վենետիկում 1732 թ. Անդոնի Պորտոլիի տպարանում։ Տպագիր գրքի սկզբում կա 14 թերթ ձեռագիր (թթ. 1ա—14բ), ինչպես նաև վերջում՝ նույնպես 14 թերթ ձեռագիր (թթ. 15ա—28ա)։ Սույն գիրքը 19-րդ դարում պատկանել է Հակոբ ավագ քահանային, որ քահանայագործել է Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքում։ Տեր Հակոբը հայրն է ականավոր գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի։ Այս վերջինիս աղջիկը, որ ներկայիս ապրում է Մոսկվայում, սույն գիրքը նվիրել է Մայր Աթոռի Ձեռագրատան, տպագիր այլ չորս հնատիպ գրքերի հետ, որոնք պատկանել են իր մեծ հորը։ Սրանք Մայր Աթոռ են բերված 19 Հոկտեմբերի 1981 թ. ձեռամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Կանոն կենարար ս(ուր)բ մկրտու[թ]ե[ան]։
Թ. 5բ.— Կանոն [ք]առասնօրէից։
Թ. 6բ.— Կանոն նշանի օրհնութ[եան]։
Թ. 7ա.— Կանոն կուսի պսակէ։
Կարգ օրհնու[թ]ե[ան] հանդերձի։
Կարգ ձեռնադրու[թ]ե[ան]։
Թ. 9բ.— Կանոն պսակ վերացուցանելոյ։
Թ. 10ա.— Օրհնու[թ]ի[ւն] բաժակին։
Թ. 10բ.— Ի տաղն բաժակին։
Կանոն երկր[որ]դ պսակի։
Թ. 12ա.— Առաջին ձայն հանգստեան։
Առաջի կողմն։
Երկրորդ ձայն։
Թ. 12բ.— Ասաց կողմն։
Երրորդ ձայն։
Թ. 13ա.— Վառ ձայն։
Չորրորդ ձայն։
Վերջ ձայն։
Թ. 13բ.— Օրհնութիւն անդանոյ մատաղի։
Թ. 14ա.— Աղօթք։
Թ. 15ա.— Կանոն օրհնութեան նորոգ տան։
Աղօթք։
Թ. 17ա.— Կանոն մեծի թաղման։
Թ. 21բ.— Օրհնու[թ]ի[ւն] հողոյ։
Թ. 22ա.— Աղօթք։
Թ. 23բ.— Կանոն մեծ այգոյ։

**(Շարունակելի)**

## «ЭЧМИАДЗИН»
## ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (ОКТЯБРЬ 1981 года)


1. Энциклика Святейшего Католикоса Вазгена Первого от 14 октября 1981 г. о назначении архимандрита Анания Арабаджяна местоблюстителем предводителя армянской епархии в Азербайджане (стр. 3—4.)

2. Проповедь Святейшего Католикоса в Кафедральном Соборе в воскресенье, 18 октября (стр. 5—7).

3. Пребывание в Св. Эчмиадзине Патриарха Греческой Ортодоксальной Церкви Антиохии и всего Востока Игнатиоса за время с 25-го по 28 октября (стр. 8—13).

4. Пребывание в Св. Эчмиадзине членов комиссии по выработке нового Конституции Армянской Церкви с 22 по 29 октября (стр. 14).

5. **Церковная жизнь:** Сведения о совершенных литургиях, проповедей, церковных мероприятиях в Эчмиадзинском Кафедральном Соборе за октябрь месяц 1981 г. (стр. 15—16).

6. Обряды рукоположения в Ширакской епархии в воскресенье, 18 октября (стр. 16).

7. **Архиепископ Тирайр Мартикян:** Праздество Переводчиков—проповедь, произнесенная в Кафедральном Соборе в воскресенье, 11 октября (стр. 17—18).

8. **Епископ Нерсес Позапалян:** Таинство Св. Эчмиадзина—проповедь, произнесенная в Кафедральном Соборе в воскресенье, 25 октября (стр. 19—20).

9. **Архиепископ Егише Тертерян (Егивард):** Книга Священнописания. Два библейских сказания «Сотворение человека», «Каин и Авель» из новоизданной указанной книги (стр. 21—24).

10. **Артун Атитян, Паргев Шахбазян:** рецензия «О книге Священнописания» архиепископа Егише Тертеряна (стр. 25—29).

11. **Архиепископ Норайр Погарян:** Блажен кто имеет дитя в Армении. Размышления о роли и о миссии Св. Эчмиадзина (стр. 30—31).

12. Торжественный вечер в Армянском Доме культуры Детройта 28 октября, посвященный жизни и деятельности Акопа С. Тертеряна (стр. 32—33).

13. **Артун Атитян:** Догматические послания между Св. Сааком Партевом и греческим патриархом Проклом после Эффесского Собора в 431 году. Научное исследование (стр. 34—40).

14. **К. А. Матевосян:** Библиотека и Канцелярия переписи Армянского Католикосата в Ани в X—XI веках. Научное исследование (стр. 41—45).

15. **Виктор Мнацаканович Петросянц:** Женщины-армянки защитницы отечественной культуры в XIII—XIV веках. Научное исследование (стр. 46—50).

16. **Акоп Г. Кесеян:** Греческие библиографы в армянской догматической литературе: Ампилиос Иконский (IV век). Научное исследование (стр. 51—54).

17. **Нубар Микаелян:** Список новых манускриптов, полученных в Св. Эчмиадзине. №№ 537—542 (стр. 55—60).

## „ETCHMIADZIN"
## OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
## (OCTOBER 1981)


1. The encyclical of His Holiness Vasken I, dated 14-th October, about the designation of Reverend Ananya Arabadjian as vicar general of the Armenian diocese of Azerbaidjan (pages 3—4).

2. The sermon of His Holiness in the Holy Cathedral, on Sunday, 18-th October (pages 5—7).

3. His Beatitude Ignatius, the Patriarch of Antioch and of All Orient of the Greek Orthodoxe Church in the Holy See, during the days of 25—28 October (pages 8—13).

4. The members of the commission for the preparation of the new outline for the constitution of the Armenian Church in the Holy See, during the days of 22—29 October (page 14).

5. Description of divine liturgy services, Holy Masses delivered in the Holy Cathedral, church ceremonies and sermons given and other church festivities and visits during the month of October (pages 15—16).

6. Ordinations in the diocese of Shirak, on Sunday, 18-th October (page 16).

7. **Archbishop Tirayr Martikian**—The celebration of the translators: sermon given in the Holy Cathedral, on Sunday the 11-th October (pages 17—18).

8. **Bishop Nerses Bozabalian**—The sacrament of Holy Etchmiadzin: sermon given in the Holy Cathedral, on Sunday the 25-th October (pages 19—20).

9. **Archbishop Eghishe Derderian (Yeghivart—**„Lusamadyan": two Biblical stories „the creation of Man" and „Cain and Abel", from the newly published book (pages 21—24).

10. **Arthoon Hadidian, Parkev Shahbazian**—Literary critique, about the book „Lusamadyan" of Archbishop Eghishe Derderian (pages 25—29.)

11. **Archbishop Norayr Bogharian**—Blessed he who has a son in Armenia: meditations about the role and mission of Holy Etchmiadzin (pages 30—31).

12. Evening party of homage, on 28-th October, in the Cultural House of Armenians in Detroit, offered to the life and activity of Hagop S. Derderian (pages 32—33).

13. **Arthoon Hadidian**—Dogmatical letters exchanged between Saint Sahak Parthev and the Greek Patriarch Proculus of Constantinople after the Council of Ephesus (431): study (pages 34—40).

14. **C. A. Mathevossian**—The Matenadaran (manuscript repository) and the scriptoria of the Patriarchal residency of the Armenian Catholicosses in Ani (X—XI centuries): study (pages 41—45).

15. **Victor Mnătzakan Petrosiantz**—Armenian ladies who have been defenders of the Armenian culture (XIII—XIX centuries): study (pages 46—50).

16. **Hakob H. Keuseyan**—The Greek authors in the Armenian dogmatical litterature: Amphilochus of Iconium (IV century): study (pages 51—54).

17. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 537—542 (pages 55—60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(OCTOBRE 1981)


1. Dans l'Encyclique du 14 octobre 1981 de Sa Sainteté Vasken Ier, le Révérend Père Anania Arabadjian est nommé vicaire général du diocèse des Arméniens d'Azerbaïdjan (pages 3—4).

2. Homélie de Sa Sainteté prononcée le 18 octobre 1981 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 5—7).

3. La visite au Saint-Siège d'Etchmiadzine de Sa Sainteté Ignatius IV, Patriarche grec orthodoxe d'Antioche et de tout l'Orient, du 25 au 28 octobre 1981 (pages 8—13).

4. Réunion au Saint-Siège d'Etchmiadzine des membres de la Commission de préparation du nouveau projet de la constitution pour l'Eglise arménienne, du 22 au 29 octobre 1981 (page 14).

5. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'octobre 1981 (pages 15—16).

6. Dimanche, le 18 octobre, ordination de prêtres dans le diocèse de Chirak (page 16).

7. **Archevêque Tiraïr Martikian**—„La fête des traducteurs" (sermon prononcé dimanche, le 11 octobre, dans la cathédrale de Saint-Etchmiadzine)—(pages 17—18).

8. **Evêque Nersès Bozabalian**—„Le mystère de Saint-Etchmiadzine" (sermon prononcé dimanche, le 25 octobre 1981, dans la cathédrale de Saint-Etchmiadzine)—(pages 19—20).

9. **Archevêque Yéghiché Tertérian**—„La création de l'homme" et „Caïn et Abel" (reproduction de deux histoires bibliques du livre de l'auteur intitulé „Loussamatian")—(pages 21—24).

10. **Artoun Hatitian, Parkev Chahbazian**—Compte rendu de l'ouvrage de l'archevêque Yéghiché Tertérian, intitulé „(Loussamatian" (pages 25—29).

11. **Archevêque Noraïr Pogharian**—„Bienheureux celui qui aura un fils en Arménie" (réflexion sur le rôle et la mission de Saint-Etchmiadzine)—(pages 30—31).

12. Description d'une soirée d'hommage organisée le 28 octobre 1981 dans la Maison de culture arménienne à Detroit et consacrée à la vie et aux activités culturelles et sociales de M. Hakob S. Tertérian (pages 32—33).

13. **Artoun Hatitian**—Etude sur les épîtres confessionnelles échangées entre le patriarche saint Sahak Parthev, catholicos de l'Eglise arménienne, et le patriarche Proclès de Constantinople, à l'issue du concile d'Ephèse (431)—(pages 34—40).

14. **K. A. Matévossian**—Etude consacrée à la bibliothèque et au scriptoria du catholicossat arménien d'Ani aux Xe-XIe siècles (pages 41—45).

15. **Victor Pétrossiants**—„Les femmes arméniennes connues en Arménie aux XIIIe-XIXe siècles sous le nom de „défenseurs du patrimoine culturel des Arméniens" (pages 46—50).

16. **Hakob H. Keusseyan**—„Les auteurs grecs dans la littérature confessionnelle arménienne" (étude consacrée à Amphilocus d'Iconium, écrivain grec du IVe siècle)—(pages 51—54).

17. **Noubar Mikaélian**—Index des manuscrits que le Saint-Siège d'Etchmiadzine a récemment reçus et placés sous les numéros 537—542 (pages 55—60).

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Անանիա վարդապետ Արապաջյանին Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ նշանակելու մասին . . . . 3

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում . . . . . . . . 5

ՋԱՏԻԿ ԱՐԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Ամենապատիվ Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքը Մայր Աթոռում 8

Հայ Եկեղեցու Սահմանադրության նոր նախագծի կազմության հանձնաժողովի անդամները Մայր Աթոռում . . . . . . . . . . . 14

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական թեմ. լուրեր . . . . . . . 15

Ձեռնադրություն Շիրակի թեմում . . . . . . . . . . 16

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ—Թարգմանչաց տոնը . . . . . 17

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ—Սուրբ Էջմիածնի խորհուրդը . . . 19

ԵՂԻՎԱՐԴ (ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ)—Լուսամատեան. Երկու հատված նույն գրքից. «Աշխարհի ստեղծումը» և «Կայէն եւ Աբէլ» . . . 21

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ, ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Գրախոսություն: Եղիվարդ. «Լուսամատեան», Բրյուսել, 1980 թ., էջ 218. Նկարիչ՝ Ալբերտ Ցարալյան . . 25

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ—Երանի՜ որ ունիցի զաւակ ի Հայաստան 30

Մեծարանքի երեկույթ՝ ի պատիվ տիար Հակոբ Ս. Տերտերյանի . . . . . 32

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Սահակ Պարթևի և Ն. Պոլսի Պրոկղ Պատրիարքի միջև փոխանակված դավանաբանական թղթերը Եփեսոսի ժողովից հետո . . 34

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Հայոց կաթողիկոսարանի մատենադարանն ու գրչատունը Անիում (X—XI դդ.) . . . . . . . . . . . 41

ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք . . . . . . . . . . . 46

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ—Հույն մատենագիրները հայ դավանաբանական գրականության մեջ. Ամփիլոքիոս Իկոնացի . . . . . . . . . . 51

Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . . 55

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61

„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin . . . . . . . . 62

„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . . . . 63



ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6.11.1981 թ.: Ստորագրված է տպագրության 10.12.1981 թ.:
Տպագրական 4 մամուլ, +3 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 857

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1981 թ.**